| <p>Արգար Դեկտեմբերի 21.<br/>Արդիա Յուլիսի 20.<br/>Արդմանն Փետրուարի 1.<br/>Արեղնագով (Միսայել) Յնս. 15.<br/>Արեյ Յուլիսի 15.<br/>Արիբաս Նոյեմբերի 11.<br/>Արիսողոմ Յունուարի 16.<br/>Արրահամ Յուլ. 15 եւ Նոյ. 18.<br/>* Ագապե Յուլիսի 22.<br/>Ազամ Յուլիսի 15.<br/>Ազդե Դեկտեմբերի 20.<br/>Աղոկաոս Սեպտեմբերի 25.<br/>Աղրիանոս Նոյեմբերի 16.<br/>Ազարիա (Միսաք) Յունիսի 15.<br/>Արանագինե Մայիսի 27 եւ<br/>Յուլիսի 13.<br/>Արանաս Յուլ. 31 եւ Հոկտ. 23.<br/>Ալեքսիանոս Դեկտեմբերի 13.<br/>Ակակիոս Մայիսի 31.<br/>* Ալիւլինե Հոկտեմբերի 21.<br/>Ալիւզաս Օգոստոսի 5.<br/>Ալիփսիմաս Նոյեմբերի 2.<br/>Անարոն Յուլիսի 15.<br/>Սղեքսանդրոս Նոյեմբերի 4.<br/>Ամբակում Յուլիսի 20.<br/>Ամովսես Յուլիսի 20.<br/>Այիրալաս Նոյեմբերի 2.<br/>Անանիա Հոկտեմբերի 12.<br/>Անաստաս Հոկտեմբերի 25.<br/>* Անատոլա Նոյեմբերի 16.<br/>Անգեոս Յուլիսի 20.<br/>Անդրեաս Նոյեմ. 13 եւ 15.</p> | <p>Անդրոնիկոս Նոյեմբերի 30.<br/>Անրիմոս Սեպտեմբերի 23.<br/>Անիքսոս Յունիսի 14.<br/>* Աննա Փետր. 20 եւ Օգոստ. 24.<br/>Անտոն Յուլ. 24 եւ Հոկտ. 11.<br/>Անտոնինոս Յունիսի 14.<br/>* Աշխեն Յունիսի 19.<br/>Ապիտոն Օգոստոսի 2.<br/>Աստուածատուր Նոյեմ. 18.<br/>Ատովմ. Յունուարի 25.<br/>Արիստակես Յուլիսի 17.<br/>Արսեն Դեկտեմբերի 7.<br/>Արտեմիս Հոկտեմբերի 21.<br/>Ասեախ Ապրիլի 7.<br/><br/>Բարեյ Յնս. 7 եւ Հոկտ. 28.<br/>Բագարատ Դեկտեմբերի 2.<br/>Բաքոս Յունիսի 3.<br/>Բառնարաս Հոկտեմբերի 12.<br/>Բասիլիդես Դեկտեմբերի 20.<br/>Բասիլիսկոս Նոյեմբերի 9.<br/>Բասոս Դեկտեմբերի 20.<br/>Բարակ Յուլիսի 15.<br/>Բարազամ Սեպտեմբերի 23.<br/>Բարբողոմեոս Դեկտեմբերի 4.<br/>Բարսեղ Յունվ. 2 եւ Հոկտ. 23.<br/>Բենիամին Փետրուարի 1.<br/>Բուրա Նոյեմբերի 8.<br/><br/>Քարրիւլ Նոյեմբերի 6.<br/>* Քայիանե Մայիսի 25.<br/>Դեդեոն Յուլիսի 15.<br/>Գեննարիոս Դեկտեմբերի 6.</p> |
|---|--|



- Գեորգ Սեպտեմբերի 25.
- Գղերիկոս Նոյեմբերի 29.
- Գոնարինե Օգոստոսի 30.
- Գորղիոս Յուլիսի 29.
- Գուրիաս Նոյեմբերի 11.
- Գրիգոր Յունվ. 2, Փետր. 27,  
Մարտի 13, Մայ. 29, Յունս.  
12, Յուլ. 31, Հոկտ. 9 եւ 23,  
Նոյեմբերի 27.
- Գրիգորիոս Յուլիսի 17 եւ 29,  
եւ Հոկտեմբերի 11.
- Դամիանոս Նոյեմբերի 18.
- Դանիել Յունիսի 15, Յուլ. 17,  
եւ Գեկտեմբերի 7.
- Դաւիթ Սեպտեմբերի 27, Հոկ-  
տեմբերի 9 եւ Գեկտ. 23.
- Դեմետրիոս Նոյեմբերի 9.
- Դիոմիտոս Նոյեմբերի 15.
- Դիոնեսիոս Հոկտ. 14 եւ 23.
- \* Դոմնա Նոյեմբերի 29.
- Եզեկիել Օգոստոսի 31.
- Եզր Օգոստոսի 31.
- Ելեւթիւրոս Նոյեմբերի 16.
- \* Ելպիս Յուլիսի 22.
- Եղիա Մայիսի 23.
- Եղիազար Յուլիսի 15 եւ 19.
- Եղիշէ Հոկտեմբերի 9.
- Եղիսե Յունիսի 24.
- Ենովս Յուլիսի 15.
- Ենովք Յուլիսի 15.
- Եպիփան Յունս. 7 եւ Հոկտ. 23.
- Ետայե կամ Ետայիաս Յուլ. 8.
- Երանոս Սեպտ. 23 եւ Հոկտ. 4.
- Երեմիա Օգոստոսի 26.
- Երմոզինես Գեկտեմբերի 13.
- Երմոզիոս Հոկտեմբերի 7.
- \* Երմոնէ Սեպտեմբերի 28.
- Եւազր Գեկտեմբերի 7.
- Եւզինես Օգ. 5 եւ Գեկտ. 16.
- \* Եւզինէ Օգոստոսի 2.
- Եւզրարոս Գեկտեմբերի 13.
- Եւդոկսիոս Հոկտեմբերի 19.
- \* Եւզրաքսիա Հոկտեմբերի 7.

- Եւսերիոս Գեկտեմբերի 20.
- Եւստաքոս Սեպտեմբերի 28.
- Եւստրատիոս Գեկտ. 16.
- Եւտիքոս Գեկտեմբերի 20.
- \* Եւփիմէ Յուլիսի 12.
- Եփրեմ Յունվ. 2 եւ Հոկտ. 23.
- Ջաքարիա Յնս. 22, Յուլ. 20,  
եւ Օգոստոսի 31.
- Ջենոն Հոկտեմբերի 19.
- Թադէոս Յուլ. 10 եւ Գեկ. 4.
- Թարուլ Հոկտեմբերի 11.
- Թալիկոս Յունիսի 10.
- \* Թեկղ Հոկտեմբերի 5.
- Թեոդիանոս Յունիսի 10 եւ Հոկ-  
տեմբերի 19.
- Թեոդոս Յուլիսի 26.
- Թեոդորոս Փետր. 13 եւ Նոյ. 16.
- \* Թեոպիստե Սեպտեմբերի 28.
- Թեոպոմպոս Գեկտեմբերի 20.
- Թեոփանաս Գեկտեմբերի 20.
- Թեոփիլոս Յունիսի 14.
- Թովմաս Օգոստոսի 28.
- Թումաս Հոկտեմբերի 11.
- \* Իզնատիոս Գեկտեմբերի 20.
- Ինզոս Նոյեմբերի 29.
- Իսանակ Յուլիսի 15.
- Իրաւափառ. Գեկտ. 6.
- Խաղ Յունիսի 5.
- Խարիբաս Հոկտեմբերի 21.
- \* Խոսրովիզոսիան Յունիսի 19.
- Խորեն Նոյեմբերի 18.
- Օամինդոս Օգոստոսի 30.
- \* Վալինիկէ Հոկտեմբերի 21.
- Վալինիկոս Նոյեմբերի 15.
- Վալիստրատոս Յունիսի 21.
- Վանդիտոս Օգոստոսի 5.
- \* Վատարինէ (Ներատարինէ) Սեպ-  
տեմբերի 28.
- Վիլպրիանոս Յուլիսի 12.
- Վիրակոս Յուլիսի 27.

Կիրեղ Փետր. 1 եւ 20, Յուլ.  
31 եւ Հոկտեմբերի 23.  
Կղնէս Գեկտեմբերի 2.  
\* Կզոզիա Օգոստոսի 2.  
Կոզրատիոս Մայիսի 31.  
Կոզմաս Նոյեմբերի 18.  
Կոստանդիանոս Յունիսի 8.  
Կուսնէլիոս Գեկտեմբերի 14.  
Կրոնիդէս Հոկտեմբերի 11.

Համազասպ Սեպտեմ. 30.

- \* Հեղինէ Յունիսի 8.
- Հիպերիքոս Հոկտեմբերի 26.
- Հիւսիքոս Նոյեմբերի 11.
- \* Հոիփսիմէ Մայիսի 24.

Ղազարոս Մարտի 20 եւ Հոկտեմբերի 18.

Ղամբէոս Սեպտեմբերի 27.

- \* Ղամբէոսի Սեպտեմբերի 27.
- Ղեւոնդ Փետրուարի 2.
- Ղուկաս Հոկտեմբերի 16.
- Ղուսկիանոս Յունիսի 21, Հոկտեմբերի 18 եւ Նոյ. 30.

Մակարիոս Օգ. 5 եւ Գեկ. 7.

Մակար Հոկտ. 19 եւ Գեկտ. 7.

Մաղաքիա Յուլիսի 20.

Մամաս Սեպտեմբերի 20.

- \* Մանէ Յունիսի 1.
- Մանուկ Նոյեմբերի 11.
- Մատարիա Մայիսի 13 եւ Հոկտեմբերի 12.

Մատթէոս Հոկտեմբերի 16.

Մարդարիոս Գեկտեմբերի 16.

- \* Մարբա Հոկտեմբերի 18.
- \* Մարիամ Հոկտեմբերի 18.
- \* Մարիանէ Սեպտեմբերի 21.
- Մարկիանոս Նոյեմբերի 4.
- Մարկոս Փետր. 1 եւ Հոկ. 16.
- Մարուզէ Գեկտեմբերի 18.
- Մարուրայ. Գեկտեմբերի 20.
- Մարտիրոս Յունուարի 23.
- Մարտիրոն Նոյեմբերի 4.
- Մելիտոս Նոյ. 8 եւ Գեկտ. 18.

Մելքիսեղնէկ Յուլիսի 15.

Մեսրոպ Յնս. 17 եւ Հոկտ. 9.

Մեսրոփանոս Նոյեմբերի 4.

Մերկեոիոս Գեկտեմբերի 6.

Մինաս Նոյ. 8 եւ Գեկտ. 13.

Միսաք (Ազարիա) Յունս. 15.

Միւռոն Նոյեմբերի 27.

Միքայէլ Նոյեմբերի 6.

Միքիա Յուլիսի 20.

Մովկիմոս Մայիսի 31.

Մովսէս Յուլ. 15 եւ Հոկտ. 9.

Յակոբ Յուլ. 15, Օգոստոսի 28,

Գեկտեմբերի 18, 23 եւ 28.

Յակովիկ Գեկտեմբերի 6.

Յեսու. Յուլիսի 15.

Յեփրայէ Յուլիսի 15.

Յոր Սեպտեմբերի 2.

Յովակիմ Օգոստոսի 24.

Յովելիաս Յուլիսի 20.

Յովիաննէս Յունվ. 14, Փետր.

27, Ապր. 3, Մայ. 27, Սեպ.

2, Հոկտ. 12, 16, 23 եւ 30,

Գեկտեմբերի 7, 13 եւ 28.

Յովնան Յունվ. 22 եւ Յուլ. 20.

Յովսէփ Յունիսի 3, Յուլ. 15,

Հոկտեմբերի 18 եւ Նոյ. 2.

- \* Յուլիանէ Նոյեմբերի 29.

- \* Յուդիտա Յուլիսի 27.

Յուսիկ Յուլիսի 17.

- \* Յուստիանէ Յուլիսի 12.

Յուէրէոս Հոկտեմբերի 23.

Նաոււմ Յուլիսի 20.

Նեղոս Գեկտեմբերի 7.

Ներսէս Յնս. 5 եւ Հոկտ. 9.

- \* Ներսասիմէ (Պատարիմէ) Սեպտեմբերի 28.

Նիկողայոս Նոյ. 27 եւ Գեկ. 11.

Նոյ Յուլիսի 15.

- \* Նունէ Յունիսի 1.

- \* Շամունէ Յուլիսի 19.

Շիղա Հոկտեմբերի 12.

Շինոս Նոյեմբերի 8.

- Շմառն Օգ. 28 եւ Դեկտ. 14.
- \* Շողակար Օգոստոսի 14.
- \* Շուշան Սեպտեմբերի 21.

Ոնեսիմոս Նոյեմբերի 30.  
 Ոնովրբիոս Օգոստոսի 3.  
 Ոսկի (Ոսկեանք) Յունվ. 28.  
 Ովսէէ Յուլիսի 20  
 Ովրեստէս Դեկտեմբերի 16.  
 Որմզղան Փետրուարի 1.

Պանդալեոն Հոկտեմբերի 7.  
 Պարսամ Օգոստոսի 3.  
 \* Պեղազիա Հոկտեմբերի 5.  
 Պետրոս Յնվ. 16 եւ Դեկտ. 27.  
 Պիմեն Դեկտեմբերի 7.  
 Պիոն Փետրուարի 1.  
 \* Պիստոս կամ Պիստոս Յուլ. 22.  
 Պղատոն Նոյեմբերի 2.  
 Պողիկարպոս Դեկտեմբ. 14.  
 Պիլիկտոս Յուլիսի 29.  
 Պրորոս Նոյեմբերի 30.  
 Պոզ Դեկտեմբերի 7.  
 Պոզոս Յունիսի 26, Նոյեմբ. 4,  
 Դեկտեմբերի 7 եւ 27.

Ռամնչաս Հոկտեմբերի 19.  
 Ռատիկոս Օգոստոսի 30.  
 Ռոմանոս Սեպ. 25 եւ Նոյ. 11.

Սամակ Յունուարի 30, Յու-  
 նիսի 3 եւ 17, եւ Սեպտ. 30.  
 Սամուէլ Յուլիսի 15.  
 Սամոնաս Նոյեմբերի 11.  
 Սամփսոն Յուլիսի 15.  
 Սայէն Փետրուարի 1.  
 \* Սանդուխտ Յուլիսի 10.  
 Սարգիս Յնվ. 23 եւ Յունս. 3.  
 Սեղրաք (Անանիա) Յունս. 15.  
 Սեր Յուլիսի 15.

Սեղրեսարոս Յնվ. 2 եւ Հոկ. 23.  
 Սեղգիոս Օգոստոսի 2.  
 Սեւերիանոս Հոկտեմբերի 28.  
 Սիդուանոս Հոկտեմբերի 12.  
 Սիմեոն Սեպտեմբերի 20.  
 Սիսիանոս Դեկտեմբերի 7.  
 Սուրբաս Յունուարի 26.  
 \* Սովիա Յուլիսի 22.  
 Սովոնիա Յուլիսի 20.  
 Ստեփանոս Օգոստ. 30, Նոյեմ-  
 րերի 1 եւ Դեկտեմբերի 25.  
 Սրապիոն Դեկտեմբերի 7.

Վանան Յուլիսի 29.  
 Վաղերիոս Օգոստոսի 5.  
 \* Վատառէ Հոկտեմբերի 5.  
 \* Վասիլուհի Նոյեմբերի 29.  
 Վարզան Փետրուարի 4.  
 Վարոս Հոկտեմբերի 11 եւ 25.  
 Վլասիոս կամ Վլաս Յնվ. 16,  
 Վրբանէս Յուլիսի 17.

Տարագոս Նոյեմբերի 30.  
 Տիմոթէոս Հոկտեմբերի 14.  
 Տիտոս Հոկտեմբերի 14.  
 Տիւքիկոս Օգոստոսի 30.  
 Տրդատ Յունիսի 19.  
 Տրիփոն Օգոստոսի 3.

\* Փերրոնէ Սեպտեմբերի 21.  
 Փիլիկտիմոն Սեպտեմբ. 20.  
 Փիլիպպոս Օգոստ. 2, Հոկտ 12,  
 եւ Նոյեմբերի 13.  
 Փոկաս Հոկտեմբերի 4.  
 Փոտիմոս Յունիսի 14.

\* Քրիստափոր Հոկտեմբերի 21.  
 \* Քրիստիմէ Յուլիսի 12.

Օքսենտիոս Դեկտեմբերի 16.

ԻՄԱՆՕԹՈՒԹԻԻՆ. — Այս տօներէն զատ՝ քանի մի անուններ կան որ ի վաղուց հետէ սովորութիւն եղամ է եկեղեցական հանդիսաւոր տօներուն հետ ի միասին տօնել. զոր օրինակ Յարութիւն — որ ընդ-

հանրապէս Չատիի չորրորդ կիրակէի օրը կածեն, Համբարձում — Համբարձման տօնին, Գարուստ — Գալստեան օրը, Վարդերես — Պայծառակերպութեան կամ Վարդավառի տօնին, Խաչատուր կամ Խաչերես — Ս. Խաչի օրը, Առաքել կամ Առաքեալ — Պետրոս, Պօղոս առաքելոց տօնին (դեկտ. 27). Հայրապետ — Հայրապետաց օրը (փետր. 6). Մարգար կամ Մարգարէ — Գաւիթ մարգարէի տօնի օրը (դեկտ. 23), եւ այլն :

### Տ Օ Ն Ա Խ Մ Բ Ո Ի Թ Ի Ի Ն.

ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ կասուի համանուն սրբոյն յիշատակի օրը տօն կատարելը : — Աստուածաշնչի պատմութենէն յայտնի է որ նորածին մանկանց այլ եւ այլ անուններ տալու պատճառ եղած են ի սկզբան երբեմն իւրեանց գոյութիւնը (Մննդոց Գ, 1), երբեմն նոցա ճնողաց դիտաւորութիւնն ու պարզ կամեցողութիւնը (Մննդոց ԽԱ, 3) եւ երբեմն Աստուծոյ կամքը (Մատթ. Ա, 21). Իսկ քրիստոնեայք ի սկզբան նահապետաց եւ մարգարէից, եւ ապա սրբոց առաքելոց, մարտիրոսաց եւ հայրապետաց անուններովը կոչելով իւրեանց նորածին մանուկները, սովորութիւն եղաւ, ինչպէս Յունաց եւ Թուսաց, նոյնպէս եւ մերայնոց մէջ իւրեանց համանուն սուրբը առանձին պաշտպան կոչելով՝ սուրբ եկեղեցւոյ նոցա յիշատակը տօնածժամանակը մասնաւոր տօնախմբութիւն անել : Թէեւ մեզի համար, — իբրեւ խնայող ու չափաւոր ազգի համար, — չոս ունակ այս մէկ աւելորդ ծախքի դուռն է. բայց իբրեւ բարեպաշտական սովորութիւն, միանգամայն եւ համանմանութիւն ուրիշ քրիստոնեայ եղբարց, չափաւոր կերպով տօն կատարելը գովելի է :



## ՕՐԱՅՈՒՅԻ ԱՆՈՒԱՆՑ

ՌՈՒՍԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Ռուսաստանի Հայոց մէջ գրեթէ հարիւր տարի է որ սովորութիւն եղած է մէկմէկու անունը ուսերէն ձայնիւ կանչելու, այսինքն փոխանակ հայերէն Պարոն Կիրակոս (Кириакъ) կամ Վարդանեան (Варданіанъ) կանչելու, ուսերէն սխալ թարգմանութեամբ Г-иъ Кирилъ (Կիւրեղ) կամ Г. Владиміровъ (Վլադ-իմիրով) կկանչեն: Նոյնպէս երբ մէկուն արձանագրական անունը Յարութիւն Թաղեանեան Աւետիսեանց է, հայերէն չգիտցող ուսերենի հեռեւող հայր՝ Артемъ Тарасичъ Авдѣевъ կթարգմանէ. մինչդեռ կրնար աւանց գթուարութեան Арутюнъ Թадденчъ Аветисіанчъ անուանել ուս տառագարձութեամբ. մանաւանդ որ ուսերէն Артеміи անունը՝ հայերէն Արեւիսն է եւ ոչ Յարութիւնը — որ Воскресенье ըսել է, մեր Թագէտոր՝ ուսերէն Թаддей-ն է եւ ոչ Тарасій կամ Тарас-ը (Տարասիոս). իսկ Ռուսաց Авдїи անունը՝ մեր լեզուաւ Արդիաս կթարգմանուի եւ ոչ Աւետիս, ինչպէս որ տարւոյս տօնելի անուանց ցուցակին մէջ կտեսնեմք:

Այս պատճառաւ ահա հարկաւոր տեսանք որ հայերէն տօնելի անուանց գիմացը այս տարի ուսերէն ճիշդ թարգմանութիւնն ալ դնեմք, որպէս զի քաղաքական ստուգութեանց եւ գրագրութեանց ժամանակ անսխալ գրուին նոցա անունները, հայրանուններն ու մականունները:

- Արգար, Авгарь.
- Արդիա կամ Արդիա, Авдій.
- Արդմսեն (որ էւ Մուսէլ),  
Абиль-Месехъ.
- Արէդնազով (Միսայէլ), Ав-  
дегаго, (Мисаилъ).
- Արէլ, Авель.
- Արիբա, Авивъ.
- Արիսողոմ, Ависсоломъ.
- Արահամ, Авраамъ.
- \* Ազապէ, Любовь.
- Ադամ, Адамъ.
- Ադդէ, Адмій.
- Ադոկսոս, Адоктъ.
- Ադրիանոս, Адрианъ.
- Ազաբիա (Միսաբ), Азарія.
- Արանազիրեն, Авляогенъ.
- Արանաս, Аванасій.
- Ալէսիանոս, Алексій.
- Ակակիոս, Акакій.
- \* Ակիլիոնէ, Акилина.
- Ակիլոս, Акила.
- Ակիբիսիմա, Акеспимъ.
- Անարոն, Ааронъ.
- Աղէսանդրոս, Александръ.
- Ամբակում, Аввакумъ.
- Ամովսէս, Амось.
- Ալիբալա, Аивалъ.
- Անանիա, Ананія.
- Անաստաս, Анастасій.
- \* Անաստիա, Анатолія.
- Անգղոս, Ангій կամ Ангей.
- Անդրեաս, Андрей.
- Անդրոնիկոս, Андроникъ.
- Անրիմոս, Анѳимъ.
- Անրիկոս, Аникита.
- \* Աննա, Анна.
- Անտոն, Антоній.
- Անտոնիրոս, Антонинъ.
- \* Աբիսեն, Ашхена.
- Ապիսոն, Апитонъ.
- Ասուածասուր, Богданъ.
- Ասով, Атомъ.
- Արիսակես, Аристархъ.
- Արսէն, Арсеній.
- Արսէմիս, Артемій.
- Բարէլ կամ Բարէլա, Вавила.
- Բազարաս, Багаратъ.
- Բակոս, Вакхъ.
- Բանաբա, Варнава.
- Բասիլիդէս, Василидъ.
- Բասիլիսկոս, Василискъ.
- Բասոս, Вассъ.
- Բարակ, Варакъ.
- Բարազամ, Варлаамъ.
- Բարսողիմէս, Варооломей.
- Բարսէլ, Василий.
- Բէնիամին, Веніаминъ.
- Բուրա, Вура.

Գաբրիէլ, Гавриѣлъ.  
 \* Գալիանէ, Гаіанія.  
 Գեղեկոն, Гелсонъ.  
 Գեւնարիոս, Яннуарій.  
 Գեուզ, Георгій.  
 Գղերիկոս, Глякерій.  
 \* Գոնարիոնէ, Когарниія.  
 Գուղիша, Гордій.  
 Գուրիша, Гурій.  
 Գրիգոր, Григорій.  
 Գրիգորիոս, Григорисъ.  
 Գալիանոս, Даміанъ.  
 Գանիէլ, Давіալъ.  
 Գաւիթ, Давидъ.  
 Գեանեսիոս, Дмитрій.  
 Գրոնեսիոս, Діонисій.  
 \* Գոմնա, Домна.  
 Եզրէկիէլ, Іезекіилъ.  
 Եզր, Езаръ.  
 Ելեսիրցոս, Елевѳерій.  
 \* Ելաիս, Надежда.  
 Եղիша, Ілія.  
 Եղիшаզար, Елеазаръ.  
 Եղիսէ, Египше.  
 Եղիսէ, Елисей.  
 Ենուս, Еносъ.  
 Ենուփ, Енохъ.  
 Եպիփան, Епифаній.  
 Երանոս, Ириній.  
 Երեսիша, Іеремія.  
 Երմոզիոնէ, Ермогенъ.  
 Երմոզիոս, Ермолай.  
 \* Երմոնէ, Ерміонія.  
 Եւազր, Евагріій.

Եւզիոնէ, Евгений.  
 \* Եւզիոնէ, Евгения.  
 Եւզրափոս, Евграфъ.  
 Եւզրկփոս, Евдоксій.  
 \* Եւպրասիша, Евпраксія.  
 Եւսէրիոս, Евсевій.  
 Եւսարէոս, Евстаѳій.  
 Եւսուասիոս, Евстратій.  
 Եւսիփոս, Евтихій.  
 \* Եւփիսէ, Ивонія.  
 Եփրէմ, Ефремъ.  
 Զաւարիша, Захарій.  
 Զեւնոն, Зевонъ.  
 Թադէոս, Թадмей.  
 Թարուլ, Татулъ.  
 Թալիլէոս, Թалилей.  
 \* Թեկղ, Թекла.  
 Թեղիսոն, Թеодотъ.  
 Թեդոս, Թеодосій.  
 Թեդորոս, Թеодоръ.  
 \* Թեոպիստէ, Թеопистія.  
 Թեոպոլիսոս, Թеопомпъ.  
 Թեոփան, Թеопъ.  
 Թեոփիլոս, Թеофилъ.  
 Թովմաս, Թома.  
 Թովմաս, Тумасъ.  
 Իզնուասիոս, Игнатій.  
 Ինդոս, Индеса.  
 Իսահակ, Исаакъ.  
 Իրաւափառ, Թемистоклей.  
 Խաղ, Хадъ.  
 \* Խոսրուփիղոսիս, Хосрови-  
 духта.  
 Խորէն, Хоренъ.

Մաթրնոս, Памнидесій.  
 \* Վաղինիկ, Калиникія.  
 Վալիսուրասոս, Каллистратъ.  
 Վանդիսոս, Кандидъ.  
 \* Վասարինե, Екатерина.  
 Վրաբիանոս, Киприанъ.  
 Վրուակոս, Кириакъ.  
 Վրուել, Кирилъ.  
 Վրելեկ, Климентъ.  
 \* Վրոդրիս, Клавдія.  
 Վորասիոս, Кодратъ.  
 Վորգաս, Козьма.  
 Վոսանդիանոս, Константинъ.  
 Վուռնելիոս, Корнилий.  
 Վրոնիրեկ, Кронидъ.  
 Համազասպ, Гамазаспъ.  
 \* Հելինե, Елена.  
 Հրապերիոս, Иперехій.  
 Հիսուիոս, Исихій.  
 \* Հոբիսիմե, Рипсимія.  
 Ղազարոս, Лазарь.  
 Ղամբեկոս, Евлампій.  
 \* Ղամբեուհի, Евлампія.  
 Ղեռնդ, Леонтий.  
 Ղուկաս, Лука.  
 Ղունկիանոս, Лукіанъ.  
 Մակարիոս, Макарий.  
 Մակար, Макарь.  
 Մադաիթ, Малахія.  
 Մամաս, Маммій.  
 \* Մանե, Мане.  
 Մանուկ, Манукъ.

Մասարի, Матөій,  
 Մասրեկոս, Матөсий.  
 Մարդարիոս, Мардарій.  
 \* Մարթա, Марѳа.  
 \* Մարիամ, Марія.  
 \* Մարիանե, Маріа.  
 Մարկիանոս, Маркіанъ.  
 Մարկոս, Маркъ.  
 Մարուգե, Маруке.  
 Մարուրայ, Маруѳъ.  
 Մարտիրոս, Мартирій.  
 Մարտիրոս, Мартирій.  
 Մելիսոս, Мелетій.  
 Մելիսուել, Мелхиседекъ.  
 Մեսրոպ, Месропъ.  
 Մեսրոփանոս, Митрофанъ.  
 Մելիեթիոս, Меркурий.  
 Մրնաս, Мина.  
 Մրափ, Мисаилъ.  
 Մրուռն, Миронъ.  
 Մրիայել, Михаилъ.  
 Մրիթա, Михай.  
 Մովսիսիոս, Моккій.  
 Մովսեկոս, Моисей.  
 Յակոբ, Іаковъ.  
 Յակովիկ, Іаковикъ.  
 Յեսուս, Іисусъ-Навинъ.  
 Յեփրայե, Іеѳѳаий.  
 Յոբ, Іовъ.  
 Յովակիմ, Іоакимъ.  
 Յովելիթա, Іонъ.  
 Յովհաննեկոս, Іоаннъ.  
 Յովհանն, Іоан.  
 Յովսեփ, Іосифъ.



- \* Յուլիանի, Іуліанія.
- \* Յուլիսսա, Іулітта.
- Յուսիկ, Іусикъ.
- \* Յուսիանի, Іустиня.
- Յուքրես, Іерошей.
- Նաում, Наумъ.
- Ներս, Нилъ.
- Ներսես, Нерсесъ.
- \* Նեֆսանի, Екатерина.
- Նիկողայոս, Николай.
- Նոյ, Ной.
- \* Նուն, Нонна.
- \* Շամուն, Шамунія.
- Շիլա, Сила.
- Շին, Шинъ.
- Շմաոն, Симонъ.
- \* Շողակար, Шогакатъ.
- \* Շուան, Сусанна.
- Ոնեսիմոս, Онисимъ.
- Ոնոփիոս, Онуфрій.
- Ոսկի, Хрисій.
- Ոսկես, Осія.
- Ոսրեսես, Орестъ.
- Որմիզան, Ормизданъ.
- Պանդարեոս, Пантелеймонъ.
- Պարսամ, Парсамъ.
- \* Պելագիա, Пелагія.
- Պետրոս, Петръ.
- Պիմեն, Пименъ.
- Պիոն, Піоній.
- \* Պիսոս կամ Պիսոսի, Вѣра.
- Պլատոն, Платонъ.
- Պողիկարոս, Поликарпъ.

- Պողիկես, Полиевктъ.
- Պրոքս, Провій.
- Պող, Павелъ.
- Պողոս, Павелъ.

- Ռամելաս, Ромилъ.
- Ռասիկոս, Ратикій.
- Ռոմանոս, Романъ.

- Սահակ, Ісаакъ.
- Սամուել, Самуилъ.
- Սամոնաս, Самонъ.
- Սամսун, Сампсонъ.
- Սայեն, Савинъ.

- \* Սանդուխտ, Сандухта.
- Սարգիս, Сергій.
- Սեդրակ (Անանիա), Ананія.
- Սեթ, Сетъ.
- Սելвестрոս, Сильвестръ.
- Սերգիոս, Сергій.
- Սեֆրանոս, Северіанъ.
- Սիդուանոս, Силванъ.
- Սիմեոն, Симеонъ, (Семёнъ).
- Սիսիանոս, Сисой.
- Սուֆրաս, Сукиасъ.

- \* Սոփիա, Софія.
- Սոփոնիա, Софонія.
- Սեֆանոս, Стефанъ.
- Սераպիոն, Серапіонъ.

- Վահան, Ваганъ.
- Վաղերիոս, Валерій.

- \* Վանվան, Варвара.
- \* Վասիլունի, Василса.
- Վարդան, Варданъ.

Վարսու, Варосъ.  
 Վլասիոս կամ Վլաս, Власій.  
 Վրթանես, Вартанесъ.  
 Տարաֆոս, Тарахъ.  
 Տիմոթեոս, Тимофей.  
 Տիսոս, Титъ.  
 Տիւփիկոս, Тихвикъ.  
 Տրդատ, Тиридатъ.  
 Տրիփոն, Трифонъ.

\* Փեբրոնէ, Февронія.  
 Փիլիկսիմոն, Филіктымонъ.  
 Փիլիպպոս, Филиппъ.  
 Փոկաս, Фокъ.  
 Փոսիմոս, Фотина.  
 \*Քրիստափոր, Христофоръ.  
 \*Քրիստինէ, Христина.  
 Օգուենիսոս, Авксентій.

## ՀԱՅՍՏԱՆԻ ԳԱՒԱՌԱԿԱՆ ՀԱՆՆԷՆՈՒԿՆԵՐ.

(Մեկնութիւնները տես կապի 3 էջին վերայ.)

### 1.

*Հայաստանի վերապ.*

Ուրան<sup>(1)</sup> արօրն<sup>(2)</sup> աղջիկ եղաւ,  
 Յիսար օրից՝ ոտքի ելաւ.  
 Տեսոյ գնալով՝ կրչորացաւ,  
 Տասներինգին շատ մեծացաւ.  
 Վեց օրից լիտ՝ հիւանդացաւ,  
 Եւ ինն օրից՝ մեռաւ անցաւ:  
 Տեսնողները՝ լոխ ժամ գնացին,  
 Տերտերները՝ հոգոց ասին.  
 Բայց բանն էս ա՛ր մէկ օրից  
 Նորին իրան՝ կենդան տեսին:

*Մարտի աշխարհաբարտ.*

Ուրան աղին աղջիկ եղաւ,  
 Եօրը օրէն ոտքի ելաւ.  
 Գանի գրեաց կրչորացաւ,  
 Տասներինգին խիտ մեծացաւ.  
 Վեց օրէն ետքն հիւանդացաւ,  
 Ու ինն օրէն մեռաւ անցաւ:  
 Տեսնողք բոյր ժամ գնացին,  
 Տերտերները հոգոց ասին.  
 Բայց բանը տես որ մէկ օրէն  
 Նորէն գինքը կենդան տեսին:

### 2.

Մի խուց ունեմ՝ քարից շինած,  
 Իւր օձո՞քը՝ պիլոր ծածկած.  
 Ամառ ձրմեռ՝ խմոր ա ուտում  
 Համ էլ աշխարհք՝ կըշտացընում.—  
 Ինքն ինչ ա որ՝ սոված վախոր  
 Հացի տեղը՝ փետ ա ուտում:

Մէկ քարէ խուց ունիմ շինած,  
 Առատաղը<sup>(3)</sup> կրչոր ծածկած,  
 Ամառ ձրմեռ խրմոր կուտէ  
 Ու աշխարհքս կըկըշտացնէ.—  
 Ինքն ինչ է որ քաղցած ատեն  
 Հացի տեղը միշտ փայտ կուտէ:

(1) Ուրանոս, որ է շատտուած երկինց: (2) Արքեր (եղբայր) կամ Աղա, որ մեծ մարդոց կաստի, իբրեւ պատուանուն: (3) Տճ. — Քալան:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՏԸՆՏԻՐ ԱՌԱՄՆԵՐ

- Ագոաւին ասին դշերի <sup>1</sup> միջին  
որն ա սիրուն, ասեց, իմ ճոս-  
տը <sup>2</sup> :
- Ագոաւի ձենը <sup>3</sup>, քե որ Ատուած  
լսեր, վարդեօրին ձին <sup>4</sup> կըզար:  
Ագոաւի տեսած սերմը կանանջիլ  
չի :
- Ածան միսը համ չի ունենայ :
- Ա՛ր դժար ա քան զմա՛ր :
- Ադէն որ ձեք տայ, զոզդ դեմ արա:  
Ադրերն ասեց քիր <sup>5</sup> չուսեմ, քիրն  
ասեց ադրեր ունեմ :
- Ադրերն աղբորն ատաւ, եկ հեսապ  
տեսնենք, էլի աղբեր ընինք :
- Ադուեւի դունչը հաւողին չի հա-  
սաւ, ասեց խակ ա :
- Ամառ ձմեռը մի խելքն ինչ անի:  
Ամառուայ փուշը ձմեռուայ նուշը:  
Ամեն բան սպիտակացնելը լաւ չի:  
Ամեն բուրբանող աղա չի դառնայ:  
Ամեն ջուր գերան չի բերիլ:  
Ամեն տեղ լիս ընկնիլը լաւ չի:  
Ամեն փորձանքին՝ մին մին խրատ:  
Ամեն օր կուժը <sup>6</sup> ջուր չի բերիլ:  
Ամեն օր տատը <sup>7</sup> գարայ չի ուտիլ:  
Ամալի գոռայուն զեօրայ անձրեւ  
չի գալ :
- Ամպ օրը՝ գէլը <sup>8</sup> կուրախանայ:  
Անրանը հաց ուտելիս առողջ ա,  
բանելիս հիւանդ :
- Անզը <sup>9</sup> տես՝ կտան ան, մերը  
տես՝ աղջիկն ան :
- Անզն ընկայ, մանզն <sup>10</sup> ընկայ,  
ագուաների ճանզն ընկայ :
- Անէճքն երկու բերնանի բուր ա,  
համ դէսն ա կարում, համ դէնը:  
Անկաջն ընդուր <sup>11</sup> չի մեծանում,  
որ շատ բան ա լսում :
- Անճունար <sup>12</sup> մարդի լեզուն եր-  
կար կըլնի :
- Անձրեւ օրը հաւերին ջուր տուող  
շատ կըլնի :
- Անճարը կերել ա բանջարը :
- Անունը կայ, ամանումը չկայ:  
Անունը տուր, տեղը քցի <sup>13</sup> :
- Անուստա փեշակը <sup>14</sup> հարամ ա:  
Անջուր մի բորիկանայ :
- Անցկացած բանին մի ափսոսայ,  
անհաւատ բանին մի հաւատայ:  
Անցկացած օրին՝ օր չի հասնիլ:  
Աշխարհքս դմակ <sup>15</sup>, միջի մարդը  
դանակ :
- Աջքն արդար լաւ ա, քան զմիտ-  
քը մեղաւոր :
- Ապրիլ կայ երկար ա, ապրիլ կայ  
երժար ա :
- Առաջի ասողը չի գիտում, քե ե-  
տինը ինչ պիտի ասի :
- Առանց իշի զլուխ հարսնիք կըլնի:  
Առատուտայ շառը <sup>16</sup> լաւ ա  
քանց իրիկուայ խերը <sup>17</sup> :
- Առել են ան ու տուր, ոչ քե ան  
ու կուլ տուր :
- Աստուած կանջողը մաղբուն <sup>18</sup> չի  
մնայ :
- Աստուած հալալին <sup>19</sup> կըտայ:  
Աստուած սարը կըտեսնի, ձինը  
կըղնի :

Աստուած փլաւն ո՛ւմ ա տուել ,  
իշտանն ո՛ւմ :

Ասարծու պահած գառը գելը չի  
ուտիլ :

Ատամ քշփօրելով <sup>20</sup> փոր չի կըշ-  
տանալ :

Արած ցիխն <sup>21</sup> մի փարջ ջուրն էլ  
հերիք ա :

Արինն արնով չեն լուանալ :

Արջն իր անէն կը գոռայ :

Արջը խաղով ելաւ, տանձը մըտ-  
քիցն ընկաւ :

Արջը որ տանձին չի հասնում,  
ասում ա բող կենայ իմ հօր  
խերին <sup>22</sup> :

Բանը շինելով , էշը քշելով :

Բանն արա , յետոյ պարծեցիր :

Բանն ո՛վ անի , ես ու դուն . հացն  
ո՛վ ուտի , ես ու դուն :

Բարեկամի հետ կերուխում ա-  
րա , առուտուր մի անիլ :

Բարկացող մարդը շուտ կը պա-  
ռաւի :

Բերդն իրա միջիցը կըքանդուի :

Բզի <sup>23</sup> գլխին բունցիով <sup>24</sup> տալ չի  
ընիլ :

Բլբուլը իր դարտը կըլայ , ագռա-  
ւը դա՛ռ դա՛ռ կանի :

Բողձգ , ինչ կտեսնես , — կըղողաս :

Բողկը սրքան սնորակ <sup>25</sup> ըլի , էն-  
քան գլուխը մեծ կը բռնի :

Բըրբտին <sup>26</sup> կուլայ չի ընիլ :

Բօշեն <sup>27</sup> փաշայ չի դառնալ :

Գառը գարնան , ձինը ձմեռան :

Գտակս բողոտ տեսար , հենց ի-  
մացար ' ջաղացական եմ :

Գեղի գլուխը որ հասնես , երե-  
խիցը խաբար առ :

Գիժը <sup>28</sup> զնաց հարսնետուն , ա-  
սեց ես լաւ ա քան զմեր տուն :

Գիժը դատի , խելօքն ուտի :

Գժի աղունն <sup>29</sup> Աստուած կաղայ :

Գժի հացը ' խելօքի փորը :

Գիլի գլխին աւետարան կարդա-  
ցին , ասեց , քեզ արա ողխա-  
րը զնաց :

Գիլի շինքը բնդուր ա հաստ , որ  
իւր բանն իր ձեռովն ա բռնում :

Գինի խմողը կը հաբբի , կոխ  
զնացողը կը մեռնի :

Գլխիս տալու վեքիլն ես , աչքս  
դուրս գալու վեքիլը խօ չեմ :

Գող , սրտու՛մը դող :

Գողը մնի մեղքը տարաւ , կորցը-  
նողը հարիւրի :

Գողն ինչ կուզի . — մուրը գիշեր :

Գոմշատիրոջը կաշի փոխ կըտան :

Գանակը կովի կուշտը կտանեն ,  
ոչ քե կովը դանակի :

Գարբինին դանակ չի ըլնիլ , ջուհ-  
լակին <sup>30</sup> պատանք :

Գեռ չձնամ երեխին շոր մի կարիլ :

Գու ինձ պահի բաղջամիջին , ես  
քեզ պահեմ մարդամիջին :

Գու տուր , ջուրն իր ճամբէն կգտնի :

Գուռօղ փակ պահիր , հարեւանդ <sup>31</sup>  
գող մի բռնիլ :

Գրուստ <sup>32</sup> խօսողին մի ձի , որ  
ասի ու փախչի :

Եաղը <sup>33</sup> զնալով գալով ' բարե-  
կամացաւ , բարեկամը չզնա-  
լով չգալով ' ետաղացաւ :

Ես փաշա , դու բօշա . բարեկա-  
մացանք , բարեբարացանք :

Երագումը սովածը հաց կըտեսնի ,  
ծարաւը ջուր :

Երկաթը տաք տաք կը ձեռնն :  
 Երեխին բան դիր , նետը գնա :  
 Երեխին ասին , ինչի ես լալի . ա-  
 սնց ընդուր որ խօսքս անց ա  
 կենում :  
 Երեխեն մնանայ <sup>34</sup> , մերը կշտանայ :  
 Երկնքի պարտքը գետնին չի մը-  
 նայ , գետնինը երկնքին :  
 Երկու գծին ' մի խելօք :  
 Երկու ձեռն եմ արել մի գլուխ :  
 Երուսաղէմ գնացինք , քօռ վար-  
 դապետի ձեռը պաշտցինք :  
 Երուսաղէմ շուն չկայ :  
 Եօրդանիդ գետրայ ոտդ մեկնիր :  
**Չ**անգակի ձեռը հեռուանց լաւ ա  
 գալի :  
 Չարարի կիսիցը <sup>35</sup> լետ դառնալը  
 խէր ա <sup>36</sup> :  
 Չուռնաչու կնկանը հարցրին , քե  
 կենդապար գիտնա . ասեց , ես  
 ճրտեղ եմ պառասել , որ կեն-  
 դապար էլ չգիտենամ :  
**Է**ղ քեզ խրատ , էլ չցանես կը-  
 տուահատ <sup>37</sup> :  
 Էծան մսին ' խաշու <sup>38</sup> չի ունենայ :  
 Էլն <sup>39</sup> ինձ խօջայ ա ասում , համա  
 իմ հայն ինձ այան ա <sup>40</sup> :  
 Էծը սատանայ կըլի :  
 Էծն իր ոտիցը կախ կտան , ոչ-  
 խարն իր :  
 Էծն իծի համար լաւ ա , քան  
 գմի սուրու ոչխար :  
 Էն կուշտին ինչ ասեմ , որ քառ-  
 սուն բիքայ <sup>41</sup> չի դնի :  
 Էն հանաքին ինչ ասեմ , որ կեսը  
 դորք չըլի :  
 Էն ջրեցը վախեցիր , որ ոչ թշտամ  
 ա , ոչ իշշում :

Էշը մատաղ չի բնիլ , իշազինը  
 ու կըլնի :  
 Էշը դատի , ձին ուտի :  
 Էշն ընկաւ գարու հօրը , ասնց  
 ես լաւ ա քանց իմ ախտը :  
 Էշն ինչ գիտի , նուշն ինչ ա :  
 Էշն իշի մօտ որ կապես , ես ա-  
 ոօցը կառնի ես փառօցը <sup>42</sup> :  
 Էշը կերան , պրշումը խոռվեցին :  
 Էշ կերել ա , էշ մեծացել :  
 Էշը որ տեղ մի հետ ցլխն ընկաւ ?  
 էլ դենը չի անց կենայ :  
**Ը**նկերդ գեղիցը վեր կալ , հացդ  
 դաշտիցը :  
 Ընչանք երեխեն լաց չըլնի , մերը  
 ծիծ չի տալ :  
 Ընչանք հաստը բարակի , բարա-  
 կի հոգին դուս կըգայ :  
 Ընչանք հերթը <sup>43</sup> մեզ հասաւ , լիսը  
 վրայ եկաւ :  
 Ընչանք չի գայ լետինը , չի յի-  
 շուիլ առաջինը :  
 Ընչանք դու եղ կը հասկանաս ,  
 ուղտի պօջը գետինը կը հասնի :  
**Թ**ագաւորն էլ քազի լայաղ <sup>44</sup> պտի :  
 Թագաւորութիւնը իրանից կը  
 քանդուի :  
 Թանը <sup>45</sup> կերար արդարացմը :  
 Թունդ <sup>46</sup> քացախն իր ամանը կը-  
 ճաքացնի :  
 Թուրքն անիծամ , խօսքն օրի-  
 նաց :  
 Թուրքերն անիրաւ , խօսքերն ի-  
 րաւ :  
 Թուրքին ընչանք չի ձեռես , խօ-  
 նախայ <sup>47</sup> չի դառնայ :  
 Թրի կտրածը կսաղանայ , լեզուի-  
 նը չի սաղանայ :

Ժամի դուռը բաց, շանը նա-  
մուս 48 :

Ժամիցը ես եմ գալի, ողորմի  
Աստուածը դու ես ասում :

Իմաստունի հետ քար կրի, չի-  
մարի հետ փլաւ մի ուտիլ :

Իմացել են Ալին մեռել ա, ջեն  
իմանում քե ձր Ալին ա :

Իմ հային, նրա տըռտինք տա-  
լին :

Իմն ու քունը, — տուն ա քան-  
դում :

Ինձ տես, քեզ լաց, որ տեղ որ  
ես 7 դայիմ 49 կաց :

Ինչ կատես, են կըլսես :

Ինչ կըրրբես, են խրրես :

Ինչ կը ցանես, են կը հնձես :

Ինչ չէր տեսել պատեն կախ, հի-  
մի տեսաւ ճակտեն կախ :

Ինչ տեղ գինի, ընտեղ քնի :

Ինչ տեղ հաց, ընտեղ կաց :

Ինչ տեղ պանիր, ընտեղ բանիր :

Ինչ տեղ վերք կայ, դիրք չկայ :

Ինչ տեղ դիրք կայ, վերք չկայ :

Ինքն բտեղ չի, իրա փայ Աս-  
տուածն բտեղ ա :

Իշի վրեն նստիլը մի ամօր, վեր  
գալը երկու :

Իշիցը վեր ա ընկել, չօշ չօշը չի  
բողում :

Իշի քացուցը 50 բեղամաղ 51 մի  
ըլնիլ :

Իշտահն ատամի տակին կըլնի :

Իրա համար քնում ա, ուրիշի  
համար երազ տեսնում :

Իրա հացն ուտում ա, ուրիշի վրեն  
խօսում :

Իր օտով եկած դօնաղը 52 պա-  
տիւ չունի :

Լալուն մեր էշն ա, որ աքի 53  
չունի :

Լաւ եզը լուծի տակին բեկու կըլի,  
լաւ կնիկը օրօրոցի :

Լաւ լեղնորդը 54 վերջը ջրի  
փայն ա :

Լաւ հաւը իրա ճուտերի վրայ  
ման կըղայ :

Լաւ տանձը 7 արջն ա ուտում :

Լէնին 55 ճար կայ, նեղին ճար չկայ :

Խալիխի 56 աչքը քեզ համար լիս  
չի տալ :

Խաղշատ զիտեմ, համա ձեն չունին :

Խելօքին մին, չիմարին քանի  
կուզես :

Խաչը տերը զօրաւոր կանի :

Խլնքօտին ծուխն էր մհանայ :

Խօսքը մեծին, ջուրը պզտկին :

Խօսքը վաղ վեր կենալը չի, Աս-  
տըծու յաջողալն ա :

Խօսքը ցան փռելը չի, ցան բօփ  
անլլն ա :

Մաղիկը բփի տակին վեր կընկնի :

Մառը որ վեր ընկնի, կացնա-  
ւորը կշատանայ :

Մառը քանի բար շատ ունենայ  
գլուխը կախ կըրցի :

Մառն ասեց կացնին, ընդուն  
ես ինձ կարենում կտրել, որ  
կորդ ինձանից ա :

Մերանաս, ձերի դատքն իմա-  
նաս :

Միտն 57 ինչ ա, քե իրա եղն  
ինչ ըլի :

Կաշառքը մուրը տեղը լիս կտայ :

Կատունըրը դուս էլան, մկները  
հախս 58 էլան :

Կատուի դռնը մտն չի հասաւ ,  
 ասեց , ես օր ուրբար ւ :  
 Կատուին ասին կճիրդ դեղ ւ ,  
 տարաւ խորը բազեց :  
 Կատուին ասին հէրդ ւ լաւ բե  
 մէրդ . ասեց , նած , նած :  
 Կատուին խողը , մկանը ման ւ :  
 Կարմիր ձուն զատկին կսազի :  
 Կեսուրդ մեռաւ , տեղդ լենացան :  
 Կծողի <sup>59</sup> ետեւը կայնի , քացի  
 տուողի առջեւը :  
 Կնիկարմատի մազն երկէն կըլի ,  
 խելքը կարճ :  
 Կնիկարմատին լսողն էլ կնիկ ւ :  
 Կովը հորրին , հորրը կովին , գը-  
 լուիը ցաւի նախարարածին :  
 Կուժ <sup>60</sup> քեզ ասեմ , կուչայ <sup>61</sup> դու լսի :  
 Կուժը արեւի զօրութիւնը չի ի-  
 մանալ :  
 Կուժը ջրի ճամբին կը կտարուի :  
 Կուշտը սովածին մանը կը բրբի :  
 Կուռի վերջը փոշիմանութիւն ւ :  
 Կտրած հացը չի սաղանալ :  
 Հազար բուման <sup>62</sup> պարտքս ըլի ,  
 մարդամիջի մարդս ըլի :  
 Հալալ մալը գելը չի տանիլ :  
 Հալալը մազ էլ ըլի , չի կտրուիլ :  
 հարածը գերան էլ դառնայ ,  
 կը կտրի :  
 Հայի յետի խելքն իմն ըլի :  
 Հայի խելքը գլխումն ւ , Վրացու  
 խելքը աջքումը :  
 Հայրն ու մայրը լաւ բաներ են ,  
 բայց Աստուած ամենից լաւ ւ :  
 Հանաքը չ'անաք <sup>63</sup> կըդառնայ :  
 Հաստ ու բարակ մի գին ւ , վնյ  
 գայ բարակ մանողին :  
 Հարեանիս <sup>64</sup> կսիրեմ , որ ձուիս <sup>65</sup>  
 աղ անի :

Հարեանիդ մի կովն ուզի , որ Աս-  
 տուած քեզ երկուսը տայ :  
 Հարիւր հակ <sup>66</sup> բամբակ կայ , հա-  
 րիւր ու մէկ ծակ կայ :  
 Հարիւր միրքիցն <sup>67</sup> մի մին մազ որ  
 հանես , մի միրուք կըդառնայ :  
 Հարսանիքը աղբորս ըլի , մանե-  
 նիքը <sup>68</sup> պապինս :  
 Հարսանիք գնամ ինչ տուն տա-  
 նեմ , մատակ ծամեմ ինչ կուչ  
 տանեմ :  
 Հարուստ մարդը օձ կերաւ ,  
 ասին դեղ ւ , խեղճ մարդը կերաւ ,  
 ասին քաղցած ւ :  
 Հաց ու պանիր' կեր ու բանիր :  
 Հացը հացարարին տուր , մէկն էլ  
 աւելի :  
 Հնց հաց առելով' փոր չի կշտանալ :  
 Հաւի կոկոսիցն իմացի , որ փո-  
 ռացաւ ունի :  
 Հաւը տանը կենայ , կուտն ուտի :  
 Հաւը ջուր ա խմում , Աստուծոն ա  
 մտիկ տալիս :  
 Հենց արա , որ կարմնջի տակի  
 ջուրը չփախցնես :  
 Հենց արա , որ ոչ շամփուրն երվի ,  
 ոչ խորովածը :  
 Հենց բան ես ասում , որ էշն ա-  
 խոռէն զոռում ւ :  
 Հենց զիտեմ մարդ ես դառել , մե-  
 կէ տեսեմ չ'արդ ես դառել :  
 Հետեւակը ձիաորին մասխարայ  
 ա բցում :  
 Հպարտին դրսեւը ձեռնցին , տանը  
 չասեց :  
 Հորրը որ կովի առաջն ընկնի ,  
 գելը կուտի :  
 Զին բնիրը <sup>69</sup> պոկեց , առաջ ի-  
 րան դպաւ :

Ձին ու ջորին կուսեցին, մեջտեղը  
էշը սատկեց :

Ձիու ոտները որ ջրումն ըլի,  
լուացնել չի ուզի :

Ձիուց վեր եկաւ, իշի վրէն նստեց:  
Ձկանը հարցրին ծովիցն ինչ խա-  
բար, ասեց բան շատ ունիմ  
ասելու, համա բերանս ջրով  
լիքն ա :

Ձմեռը համամչի դառնաս, ամա-  
ռը բաղմանչի :

Ձմեռը կատու ըլնես, ամառը  
շուն :

Ձմեռուայ վարդը կրակն ա :

Ձու անող հաւը կըջկըջան կըլի :

Ձուկը գլխիցը կհոտի :

Ձուկը ջրումը զին չի ըլի :

Ձուկն ու միսը մի պղնձումը չի  
եփուիլ :

Ձուագեղի խաբեր՝ բաւի կորը  
կըպաչեն :

Ձուի գողն ու ձիու գողը մին ա :

Ղայիմ <sup>70</sup> մարդի աղն աւլի <sup>71</sup>  
հետ կերբայ :

Ղօնաղը տան տիրոջ էշն ա :

Ճամբից դուս եկողի աչքը դուս  
կգայ :

Ճուտը ձուումը մաշուր <sup>72</sup> կըլի,  
մանուկն օրօրացումը :

Ճրագն իր տակին լիս չի տալ :

Մալը գնայ տերը հետը, որդին  
գնայ հէրը հետը :

Մածուն ա բան չի, ամէն մար-  
դու բան չի :

Մաշակարի մաշիկը <sup>73</sup> ծակ կըլի:

Մարդ մարդի յիքի <sup>74</sup> կըտայ,  
մարդ մարդի պտուղ չի տալ :

Մարդ մարդի դարդ չէր իմանում,  
կէս զիշերին ժամ էր կանչում :

Մարդիս աչքը դուս գայ լաւ ա,  
քանց բէ անուներ :

Մարդիս աչքը մենակ հողով կը-  
կշտանայ :

Մարդի նամուսը գտակն ա, կըն-  
կանը՝ լաջակը <sup>75</sup> :

Մարդին ջուր խմելիս օձն էլ ձեռ-  
չի տալ :

Մեղը ծախողը մատը կլիզի :

Մեղքը լալով՝ պարտքը տալով :

Մեծ էշը ախոռումն ա մնացել :

Մեծ մեծ դուներ՝ սոված շներ :

Մեծի ասած՝ պզտիկի լսած :

Մեկը հագարի անուն ա կոտրել :

Մեկ մի տալ, որ երկու չուզի :

Մեկ կայ՝ որ հագար ածի, հա-  
գար կայ՝ որ մեկ չածի :

Մի ձեռը ծափ չի տալ :

Մի ձեռով երկու ձմերուկ չի  
բռնուիլ :

Մի դայիմ երեսը լաւ ա, քանց  
տանու գուրանը <sup>76</sup> :

Մի մարդի փողերը որ աւելնայ՝  
տան սները <sup>77</sup> ծուռը կերեսան:

Մի տանից չէինք, համա մի  
ձենով էինք :

Մի զիծ քարը բօլ արեց <sup>78</sup> քցեց  
ծովը, հագար խնթօք չկարո-  
ղացաւ հանել :

Մի ծաղիկից օձը բոյն ա շինում,  
ճանճը մեղր :

Մի ծաղկով զարունք չի գալ :

Մի հենց տղայ ա, որ պղտոր ջրի  
հետ կըխմուի :

Մի մուկը օխտը կարաս <sup>79</sup> ա մուռ-  
տառել :

Մինչեւ բուրն եկաւ, լեզուն զը-  
լուխը կտրեց :



Մինչեւ հերքը մեզ հասաւ, լիսը վրայ հասաւ :

Մինչեւ Շուշանը գարդարունց, ժամերն արձակունց :

Մինչեւ չիբը <sup>80</sup> կըրջի, հիւանդի հոգին կրօջի :

Մինչեւ սէլը <sup>81</sup> շուռ չի անցնի, ճամփեն չի դրստուիլ :

Միսը միս ա, խաշուն աչքի լիս ա :

Միրութ չունիմ, որ խօսքս անց կենայ :

Մկան շեռը ջաղացին Ֆայտայ ա :  
Մնջի լիզուն տէրը կիմանայ :

Մուկը ծակը չէր մտնում, ցախաւելը <sup>82</sup> պոչիցը կապեցին :

Մտնելուց առաջ միտք արա, քե ինչպէս դուս գաս :

Մօտիկ հարեւանը լաւ ա, քան գնեռու բարեկամը :

Յետի շունը վազկան կրլի :

Յոպոպը ինքը հոտած ա, հենց զիտի <sup>83</sup> իրան բունն ա հոտած :

Նեղուրենին լեռուրիւն կայ, լեռուրենին — նեղուրիւն :

Շան հետ աղբերացիր, փետը ձեռիցդ վեր մի գցիլ :

Շանը տեր ունի, գիլին էլ Ա՞՞՞՞ :  
Շանը քանի քար քցես, ենքան կը հաչի :

Շան կաղալուն մի հաւատար :  
Շան հաջելն էլ մի փեշակ <sup>84</sup> ա :  
Շան պոչը քառսուն տարի մանկանեն <sup>85</sup> դնես, դրստուիլ չի :

Շան սատկիլը որ մօտենայ, մեջքի <sup>86</sup> դրանը կպտակի :

Շանիցը լակոտ վեր կայ :

Շանը տուր, տիրոջը խարր արա :  
Շատ անգամ հանաքը չ'անաք ա դառնում :

Շատ լալին ման եկողը՝ փսին ուստ կգայ <sup>87</sup> :

Շատ հօ, հօն՝ կուլին կզըծուացնի :  
Շատ մի սիրիլ, ատիլ կայ . շատ մի ատիլ, սիրիլ կայ :

Շեն տան հարսն ես գնացիլ, բաժա հացի կարօտ :

Շիտակախօս մարդի գտակը ծակ կրլի :

Շներն իրար հետ կոռուում են, գէլի դէմը միանում են :

Շները կոռուցին, բոշի բանը յաջողեց :

Շողոմքոր <sup>88</sup> գառն օխտը մեր ա ձծնիլ :

Շունը իւր տիրոջը կը նմանի, կատուն իւր տիկնոջը :

Շունը կաղալով չի սատկիլ :

Շունը կհաչի, քարվանը <sup>89</sup> կքօջի :

Շունը շան բարլիկը չի ծամիլ :

Շունը շան միսը կերաւ, ոսկորը դէն չքցեց :

Շունը սպանողին քաշ տալ կտան :

Շունն իրանց տանը դօջաղ կրլի :

Շուշանը շիօք չէր գիտի, վանքին խաւձարար դրին :

Ողորմի բրբոզին, ոչ ողորմի լարբրօղին :

Ոչ կուտեմ ձեր կոմշին <sup>90</sup> ոչ կըքշեմ ձեր գոմշին :

Ոչ խաչին խունկ ասա, ոչ երեսիսն բլիբ :

Ով ալարի <sup>91</sup>, ոչ դալարի :

Ով կհաղայ, նա կըկաղայ :

Ով փող ունի՝ խելք չունի . ով խելք ունի՝ փող չունի :

Ով չուստ <sup>92</sup>, նա կուշտ :  
Ոսկին պզտիկ ա, համա զինք  
մեծ ա :

Որդին որ բռնումը <sup>93</sup> ձուածեղ  
շինի, մօր պարտքիցն էլ չի  
կարալ դուրս գալ :

Որտեղ որ գնաս, են տեղի զը-  
դակը ծածկի :

Որ ջուրն ինձ կըխեղդի, ես նրան  
ծով կասեմ :

Ուղտը քրալով ջնն ջրիլ :

Ուղտին ասին, շլինքդ ինչի ա  
ծուռը . ասեց, ինչս ա դրուստ,  
որ ես դրուստ րի :

Ուրիշի ձեռով փուշ քաղի :

Պապը ժուռը <sup>94</sup> կերաւ, բոռի  
ատամն առաւ :

Պառաւն իր բանին բբու չի ասիլ :

Պաս ուտեմ պաս, են էլ բանե  
սպա՞ս :

Պղինձը վեր ընկաւ, ջկտարունց,  
ձենը վեր էլաւ :

Պզտկից սկսի, որ մեծին հաս-  
նիս :

Ջուրն իր գնացած տեղովը կերբայ :

Ջուրն իր ճամբէն կըգտնի :

Ջուրը մի տեղ որ շատ կենայ,  
կնտի :

Ջուրը պատիցը վերեւ մի տանիլ :

Ջրին ջմօտացած, մի բորկանայ :

Ջրի տարածը ձեղն <sup>95</sup> է բռնում  
ազատուելու :

Ռանջպար <sup>96</sup> մարդը լաւ ա քան  
զջինովնիկը :

Սառած օձն առաջ տաքացնողին  
կըկծի :

Սատանան ոչ մեռել ա, ոչ կը-  
մեռնի :

Սարերի տեղ ձորերն են որոտում :

Սարը սարին չի դիպչիլ, մարդը  
մարդին կդիպչի :

Սերը սովորը կուտի, բանը մուրը :

Սար ու ձոր, մօլլի փօր :

Սեւին սապոն, խեւին խրատն  
խնջ անի :

Սեւ կովը վեր ընկաւ, դանակա-  
ւորը շատացաւ :

Սեւ սիրտ, սխալտակ առամ :

Սերը սիրով կըլի, քաշքաշելով  
բան չի դառնալ :

Սիպտակ միսն երեւալուց, սեւ  
կարկրտանը լաւ ա :

Սիպտակ շունը բամբակածախին  
վնաս ա :

Սոխի տեղ սխտոր են ձեռում :

Սոխի քաղցրը չի րլիլ :

Սոխ ու հաց՝ սիրտը բաց :

Սովորին մի պակասցնիլ, անսօ-  
վորին մի սովորցնիլ :

Սուփրէն քցելու վախտը գնա,  
ժամը — դուս գալու :

Ստի տունը կրակ ընկաւ, ոչով  
(ոչ ոք) չհաւատաց :

Վախտը վախտին, քէ չէ ժամա-  
նակն անց ա կենցում :

Վատ բանը վատից ա դուս գալի :

Վիրեւ բքեմ երեսս ա, ներքեւ  
բքեմ միրուքս ա :

Տանձն ինչ արաւ, քէ կորն ինչ  
անի :

Տանձ ջեմ որ հասնեմ. խնձոր  
ջեմ որ կարմրեմ, ինչ կամ,  
— կամ :

Տանու խօսքը դուսը չի անց կենայ :

Տանուտերի վկեն զգիրն ա <sup>97</sup> :  
 Տանու տերտերին , օրնննն տեր՝  
 չկայ :  
 Տանը սատանայ, դուր քանանայ :  
 Տասը չափի, մին կտրի :  
 Տարին մի զատիկ, էն էլ նաւա-  
 կատիկ :  
 Տեսնես որ շուրը քեզ նետ չի  
 գալի, դու նրան հետեւիր :  
 Տերը տարածին էր ափսոսում,  
 գելը մնացածին :  
 Տերտեր արա զեղը քցի, քէ չի  
 ապրի, զետը քցի :  
 Տիրաւորին տերն ա պանել, ան-  
 տերին զէն ա կերել :  
 Տկտրի մտքից օրը տասնութինգ  
 զազ կտաւ. էր անց կենում :  
 Տուն քանդողի տունն Աստուած  
 կրանդի :

Յան իր զլուխը լիս կրցի, քէ  
 որ դու վրեղ չես դնել :

**Փ**ախչիլն էլ մի հունար օր <sup>98</sup> :  
 Փետը վեր ունես, զոզ շունը կի-  
 մանայ :  
 Փիս մարզը զատկին էլ փիս կրլի :  
 Փիսն ասողին, լաւը լսողին :  
 Փիս շանը մի քարն էր պակաս :  
 Փխ շունը ոչ ինքը կուտի, ոչ  
 ուրիշին կուտացնի :  
 Փիս շունով որսի գնալը լաւ չի :

Փորը հորի նման ա, ինչքան ու-  
 տումես՝ չի երեսում :  
 Փորը փորին շան չի :  
 Փորձած սատանէն լաւ ա, քան  
 զանփորձ նրեշտակը :

**Ք**ամին ասեց մարաքին, դուռդ  
 բաց արա, զարման <sup>99</sup> տուն  
 ածեմ. ասեց, ոչ քու բերածը  
 կուզեմ, ոչ քու տարածը :  
 Քամու բերածը քամին կտանի :  
 Քարը տեղը ծանր կրլի :  
 Քիչ խօսաս, շատ կրլես :  
 Քնածն ու մեռածը մին ա :  
 Քոստա էծը աղբրի ակնից ջուր  
 կրլսմի :  
 Քօռ եզր խիալով <sup>100</sup> ա մանգալի :  
 Քօռի ինչ վեջն ա, քէ մուրը  
 բանկ ա :  
 Քօռն ինչ կուզի-ջուխտ աչքով լիս :

**Օ**խար մենք էինք, օխար մեր  
 հերանք, մի մոծակի փաշայ  
 կերանք :  
 Օխար ծովից՝ մի կովից :  
 Օձն ամեն տեղ ծուռն ա ման  
 գալի, իր բունը մտնելիս՝  
 դրուստ :  
 Օձի զլուխը որ ցաւի, ճամփի մեջ  
 տեղը վեր կընկնի :  
 Օջով չասի, քէ իր ճրագն ընչանք  
 առաւօտը լիս կրտայ :

ԾՅՆ.ՕԹՈՒԹԻԻՆ. — 1 Թռչուն. 2 Զագ. 3 Զայն. 4 Զիւն. 5 Քոյր. 6 Սափոր.  
 7 Մեծ մայր. 8 Չայլ. 9 Մայր. 10 Մազիլ, ած. փեղեկ. 11 Այն պատճառաւ. 12 Բան  
 չգիտող. 13 Զդէ. 14 Աւանց վարպետի արձատրը. 15 Այլարի պոչ. 16 Վնաս.  
 17 Վատասկ. 18 Թշուաւ. 19 Արդար. 20 Այլայ փորելով. 21 Յետ, ած. զամուս.  
 22 Իմ չօր չօղուն. 23 Լեբուն, ած. պիզ. 24 Բռանցք, ած. եռմբոխ. 25 Տանցաւ,  
 ած. սկյրեկ. 26 Բրուտ, ած. բեռնակճի. 27 Գնչու, ած. չինկեանն. 28 ԱնխէԼը.  
 29 Յորն. 30 Զուլահակ, ած. չուկակ. 31 Կրպի. 32 Շիտակ, ճճմարիտ. 33 Օտար,  
 անծանօթ. 34 Տղուն պատճառաւ. 35 Կէսէն. 36 Օգտակար է. 37 Կատաւա կամ  
 քթանի հունա, ած. քեքեն բոխումու. 38 Արկանակ, ած. յովակ. 39 Ժողովուրդ.  
 40 Յայտնի է. 41 Պատառ. ած. լոխմայ. 42 Կամ բնութիւնը կողմրի կամ

վարքը. 43 Կարգ. 44 Արժանի. 45 Մածնապուր, 46 Կարուկ. 47 Բարեկամ.  
 48 Անօթ. 49 Ամուր. 50 Կիցք, աճ. բերք. 51 Մի նեղանար. 52 Հիւր, աճ. մի.  
 սամիր. 53 Պոչ. 54 Լողալ գիտցող. 55 Լայն. 56 Բաղմութեան. 57 Ճնճողուկ,  
 աճ. սերք. 58 Խաղալու ելան. 59 Խածատող որ շանը կտտուի. 60 Սափոր.  
 61 Դորակ կամ վարչ. 62 Պարսից մէկ թումանը՝ Հուասար է Ռուսաց տամն  
 բուրլին. 63 Կասակը շիտակի կիտիուի. 64 Դրացի. 65 Նիած հակիթ. 66 Բեռ.  
 67 Մորուք. 68 Մահ. 69 Յից, աճ. խաղրի. 70 Ժլատ, կծծի, աճ. նեքս. 71 Աւել,  
 աճ. սիփիրի. 72 Յայանի, աճ. պկլի. 73 Կօշկակարի կօշիկը. 74 Այդի, աճ.  
 պող. 75 Քոչ. 76 Բահ, աճ. լեակեր. 77 Սիւներ. 78 Գլորեց. 79 Քիւփ. 80 Չորցու-  
 ցած մրգեղէն. 81 Սպլ, աճ. արապ. 82 Տճ. մլլատ սիփիրիկաի. 83 Այն.  
 պէս կիարծէ. 84 Արհեա. 85 Մամուլ. 86 Մզկիթ, աճ. ճամի. 87 Վասին կը-  
 շանդիակի. 88 Շողըքթի. 89 Ճանապարհորդ. 90 Սերկելիլ. 91 Մուլմուլ.  
 92 Շուտ. 93 Ափի մէջ. 94 Խակ խաղող. 95 Շիւղ, աճ. բեօփ. 96 Երկրազործ.  
 97 Օգնական. 98 Վարպետութիւն. 99 Յարդ, աճ. սաման. 100 Կասկածելով :

## ՆՇԱՆԱՒՈՐ ՏՕՆԱՎԱՃԱՌԻ Ի ՆՈՐ ՌՈՒՍԻԱ

- ՅՈՒՆՈՒԱՐ. — 5 յԱսակի. — 6-26 ի Խարկով. — 15-31 ի Քիւն :
- ՓԵՏՐՈՒԱՐ. — 2 ի Բըլց եւ յՈւգոպոլ. — 5-11 յԱլեքսանդրիա եւ  
 ի Նովոմոսկովսկ. — 12-18 ի Նովոգորգենսկ եւ ի Բախմուտ :
- ՄԱՐՏ. — 4 ի Բորրինեց. 4-10 յԵլիսաւետգրադ, ի Նովոգորգենսկ,  
 յԵկատերինոսյաւ եւ յՈրելսով. — 10 ի Տիրասպոլ. — 11-17 ի Նովո-  
 միրգորոդ եւ ի Պաւլովսկ. — 25 ի Բերդեանսկ եւ ի Գինիբեսկ :
- ԱՊՐԻԼ. — 1-6 ի Նովոմոսկովսկ եւ ի Մելիտոպոլ. — 2 ի Պետրո-  
 պաւլովսկ. 13 յԱնանեւ, յԵլիսաւետգրադ եւ յԵկատերինոսյաւ :
- ՄԱՅԻՍ. — 1 ի Բերիսյաւ եւ յԱլեշկի. — 9 ի Տիրասպոլ, ի Նովո-  
 միրգորոդ, ի Վոզնեսենսկ, ի Ռոստով, ի Թալդան, ի Բըլց, ի Պու-  
 տաւա, ի Կախովկա, ի Նիկոպոլ. — 16 ի Քերսոն. — 24 ի Բալտա :
- ՅՈՒՆԻՍ. — 1-15 ի Խարկով. — 25 ի Նոդայսկ. — 25-30 ի Բալտա. —  
 29 յԱլեքսանդրիա, յԵլիսաւետգրադ, յԵկատերինոսյաւ, ի Նովոգոր-  
 գենսկ, յԱլեքսանդրովսկ, ի Բախմուտ, ի Մելիտոպոլ եւ ի Պաւլովսկ :
- ՅՈՒԼԻՍ. — 10-31 ի Պուտաւա. — 15-25 ի Նիժնիյ Նովգորոդ, ճա-  
 մաշխարհական տօնավաճառ. :
- ՕԳՈՍՏՈՍ. — 1 ի Վոզնեսենսկ եւ ի Նովոգորգենսկ. — 1-9 ի Նովո-  
 մոսկովսկ. — 1-27 ի Խարկով. — 26 ի Թալդան :
- ՍԵՊՏԵՄԲԵՐ. — 1 յԵլիսաւետգրադ. — 8 յԱնանեւ, ի Բախմուտ եւ  
 ի Ռոստով. — 14-30 յՕդեսսա եւ ի Պաւլոգրադ. — 23-30 ի Խարկով :
- ՀՈՎՏԵՄԲԵՐ. — 1 ի Տիրասպոլ, ի Կախովկա եւ ի Միխայլովկա.  
 — 1-15 ի Խարկով. — 14 ի Նոդայսկ. — 26-26 նոյեմբ. ի Քիշնեւ :
- ՆՈՅԵՄԲԵՐ. — 8 յՈրելսով. — 21 ի Նովոգորգենսկ եւ ի Բըլց :
- ԳԵՎՏԵՄԲԵՐ. — 6 յԱլեքսանդրիա. — 20-6 յունուարի ի Խարկով :

## ԺԱՄԱՆԱԿԱԽՕՍՈՒԹԻՒՆ.

Ժամանակախօսութիւն. — Ժամանակ. — Դար. — Տարի. — Նամանջ տարի. — Հայոց բուական. — Հրկից եւ Եզիպտացոց տարիները. — Յորկեան տարի. — Հոսովմայեցոց տարի. — Յուլեան տարի. — Գրիգորեան տարի. — Մանմետականաց տարի. — Ազարիայի բուական. — Ամիս եւ երկուտասան կենդանակերպք. — Շաբաթ. — Օր. — Տարեգիր. — Եօրներեակ. — Աղիւսակ Եօրներեկաց. — Վերադիր. — Աղիւսակ վերադրաց. — Արեւու շրջան. — Իննետասներեակ. — Ոսկեբիւ. — Թուականք.

ԺԱՄԱՆԱԿԱԽՕՍՈՒԹԻՒՆ կասուի ուսումնական գիտութեանց այն մասը, որով արեգական ընթացքին համեմատ՝ ժամանակը կորոշուի դարու, տարւոյ, ամսոյ շաբաթու, արուր, ժամու եւ ուրիշ ամենախօքք միջոցներու վերայ, եւ նորա անգոյ ապառնին ուղիղ հաշիւներով կկարգաւորուի:

ԺԱՄԱՆԱԿ. — Ժամանակ կամ ժամանակի շրջանն է մէկ ակնթարթէն սկսեալ մինչեւ ըլլաւոր տարիներու միջոցները, որ լուսոյ ու խաւարի անընդհատ յաջորդութեանց պատճառաւ՝ մարդիկ ընականապէս 24 ժամու միջոցի վերայ բաժանեցին, որ այն եւս անբաժանելի վայրկեաններէ կայանալով՝ անձայր մանեակի կամ բոլորշի շրջանակի պէս հետզհետէ յառաջ կերթայ եւ աշխարհիս ստեղծմանէն մինչեւ մեր օրերը եւ մեզմէ յետոյ եւս գալու դարերուն ժամանակը կբաղկացընէ: Ըստ սուրբ գրոց՝ ժամանակին սկիզբը աշխարհիս ստեղծման առաջին օրէն, այսինքն երկնքի շրջան առաժ վայրկեանէն եղաւ. թէեւ արեգական ու լուսնի մասնաւոր ընթացքը արարչագործութեան չորրորդ օրն որոշուեցան:

ԳԱՐ. — Ընդհանրապէս դար կասուի հարիւրամեայ ժամանակի միջոցը . բայց աշխարհիս մեծամեծ դիպ-  
ւածներու ժամանակաց միջոցներն եւս դար կկոչուին ,  
ինչպէս արարչագործութենէն մինչեւ Ջրհեղեղը , որ  
1655 տարւոյ միջոց է՝ առաջին դար կասուի , Ջրհեղեղէն  
մինչեւ Քրիստոս—երկրորդ դար , Քրիստոսէ մինչեւ աշ-  
խարհիս վերջը կամ Քրիստոսի երկրորդ գալուստը—  
երրորդ դար : Նոյնպէս դար կասուի նաեւ հազարամեայ  
ժամանակի միջոցը , եւ այն է սլաոճառք որ Քրիստոսի  
գալուստը աշխարհիս ստեղծման 5508 թուականին  
լինելով՝ մեր Շարականին մէջ 6-րդ դար գրուած է .

„ Իսկ նոր Ադամդ ի վեց դարուն՝

„ Այց արարեր կորուսելոյն “ :

եւ կամ թէ „ Որով զգեցաւ որդին զբրած ,

„ Ի վեց դարուն զմարմին մեղաց “ :

ՏՄՐԻ. — Տարի կասուի տասներկու ամսոց միջոցը ,  
որով երկիրս ծրի խաւարման վերայ մէկ ամբողջ  
շրջան կանէ : Տարին՝ աստղաբաշխական հաշուով եր-  
կու կբաժանուի . ա) Արեգակնային տարի , որով երկիրս  
12 ամսոց շրջանի կամ 365 օրերու՝ 5 ժամու՝ 48  
վայրկենի եւ 45 րոպէի մէջ՝ արեւուն չորս կողմը  
պտըտելով՝ իւր առանցքին վերայ կգառնայ . եւ բ)  
Լուսնական տարի , որով տասներկու լուսնական ամսոց  
կամ 354 օրերու՝ 8 ժամու եւ 48 վայրկենի միջոցին՝  
լուսինը երկրիս պէս արեւուն չորս կողմը պտըտելով՝  
իւր տարեկան շրջանը կկատարէ : Վերջնոյս առաջի-  
նէն , այսինքն արեգակնային տարիէն 10 օր ու գրե-  
թէ 21 ժամ ունեցած տարբերութիւնն է որ մեր լե-  
զուով վերադիր կասուի . սակայն լուսնի քաղաքական  
տարին ճիշդ 354 օր կհամբուի , որոյ վեց ամիսքը երես-  
նօրեայ են եւ վեց ամիսքը 29-օրեայ : Լուսնի հասարակ  
տարին 12 լուսնական ամիսներէ կբաղկանայ . իսկ  
լուսնի նահանջ տարին 13 ամիսներէ կամ 13 նոր  
լուսնի ծնունդներէ , որով տարին 384 օր կունենայ :

լուսնի քաղաքական տարին կբանեցընեն Հրեաներն ու Մահմէտականները . բայց Հրեաները լուսնոյ իննեւ-տասնամեայ շրջանի եօթը տարիները , այսինքն՝ եր-րորդը , վեցերորդը , ութերորդը , մետասաներորդը , չորեքտասաներորդը , եօթնեւտասներորդն ու իննեւ-տասներորդը նահանջ կամ 13-ական ամիս հաշուելով՝ տարւոյն շրջանը կուղղեն . իսկ մահմէտականացը նահանջ չունենալով՝ միշտ եւ կմնայ :

ՆԱՀԱՆՋ ՏԱՐԻ. — Քրիստոսի թուականի հասարակ տարին 365 օրերէ կբաղկանայ , որ եթէ 12 ամսոց վե-րայ բաժանեմք՝ քննորդը 30 կլինի եւ մնացորդը 5 , որ այն եւս այլ եւ այլ ամսոց վերայ զնելով՝ 5 ամիսը 31-օրեայ կլինի եւ 7 ամիսը 30-օրեայ . բայց Յուլիոս կեսարը Հռովմայեցւոց տոմարը նորոգելով՝ հասարակ տարին 365 օր եւ 6 ժամ հաշուեց . եւ ա-հա այս 6 ժամն է որ 4 տարուան մէջ մէկ օր ձեւա-ցընելով՝ փետրուարի օրերուն վերայ կաւելցուի , տարին 366 օր կհամրուի եւ նահանջ կկոչուի :

ՀԱՅՈՅ ԹՈՒՍԿԱՆ. — Մեր հին եւ նոր տոմարա-գրաց ասելովը Հայոց թուականը մեր Հայկ ցեղապե-տին ժամանակէն սկսած է՝ մեղմէ 4362 եւ Քրիստոսէ 2492 տարի յառաջ նաւասարգի 1-էն (օգոստոսի 11), այսինքն այն օրէն , յորում Հայկ զիէին սպաննելով՝ պատուիրեց իւրայնոց որ նոյն օրը տարեգլուխ հա-մարուի ու ամենայն տարի այն Հայոց ինքնիշխանու-թեան տարեգարձի օրը տօնախմբուի : Այս քաղաքա-կան կամ շարժական թուականն էր ահա որ մեր նախ . նիքը նահապետաց տարիներէն ի վեր՝ տարին միշտ 365 օր հաշուելով՝ Հայկայ բուսկան կանուանէին , որ Եգիպտացւոց Սորիական կամ Շնկան շրջանին պէս 1461 հասարակ եւ 1460 Յուլեան նահանջաւոր տարի-ներու շրջան էր . վասն զի յիւրաքանչիւր կատարման

այս շրջանիս՝ հասարակ եւ արեգակնային տարիներէ սկիզբը մի եւ նոյն օրը կհանգիպէր:— Հայկայ շրջանի սկսուած օրէն մինչեւ ցայժմ երկու ամբողջ շրջան անցած են. երրորդ շրջանը պիտի լրանայ 17 տարիէն վերջը, այսինքն Քրիստոսի 1888 թուականին, եւ չորրորդը պիտի սկսուի նոյն տարւոյ օգոստոսի 11-ին: Ինչպէս որ յայտնի է, մեր ազգին այժմու գործածական թուականի շրջանը տարբեր է Հայկայ շրջանէն, թէեւ նորա անհաստատ տարիներովը շարունակուած է. եւ տարբերութիւնն այս է որ Հայկայ երրորդ շրջանի 125-րդ տարիէն կսկսի, որ է Քրիստոսի 552 թուականը. եւ 532 տարուան շրջան է: Հաւանական է որ ասկէց յառաջ մեր ազգը գործածած լինի նախ՝ Նաբոնասարայ թուականը, որ Վարբակէս Մար, Բեղեսիս-Նաբոնասար եւ Պարոյր Նահապետի՝ Ասորեստանեայց թագաւորութիւնը վերջընելէն ու իրենց թագաւորութեանը պսակ ընդունելէն յետոյ սահմանեցին այն թուականը գործածել՝ Քրիստոսէ 743 տարի յառաջ:— Այն ժամանակները՝ ինչպէս որ Բաբելոնացոց, Պարսից, Մարաց եւ Եգիպտացոց տարիները, նոյնպէս եւս Հայոց տարին արեգակնային էր, բայց Յուլեան տոմարին ճշգրտութիւնը չունենալով՝ ամեն տարի նաւասարդի օրը կփոխուէր: Եւ երկրորդ՝ Հայոց լուսաւորութեան թուականը, որ ընտիր գրչագրաց մէջ գործածուած է:— Հայոց տարին ի սկզբանէ հետէ տասներեք ամիսներու վերայ բաժնուած էր, յորոց 12-ը 30-ական օր ունէին, եւ երեքտասներորդը՝ այսինքն Աւելեաց ամիսը 5 օր, որով տարին միշտ 365 օր կլինէր: Սակայն Յունաց եւ Հռովմայեցոց տարիները չորս տարին միանգամ նահանջ ունենալով, Հայոց տարին մէկ ամբողջ օրով յառաջ կերթար, որով եւ տօներու մէջ շփոթութիւն կլինէր. եւ որովհետեւ Լուսաւորչէն յետոյ սկսած էին Հայք բանեցընել նաեւ Անդրէաս բիւզանդացոյն



Հինգհարիւրեկի շրջանը, որոյ լրանալէն վերջը շիտ-  
թու թիւն եղաւ ազգին մէջ զատկի տօնը խախտուելուն  
համար, Եղիվարդեցի Մովսէս երկրորդ կաթողիկոսը  
տուժարական քննութիւններ անել տուաւ ժողովով եւ  
որոշեց որ այնուհետեւ նոր թուական ունենայ մեր  
ազգը. եւ ահա այս թուականն է որ օրացուցաց մէջ  
Հին ՏՈՄԱՐ կասուի եւ կսկսուի Քրիստոսի 552-էն յու-  
լիսի 11-էն (ըստ Յուլեան տոմարի): Բայց որովհետեւ  
սրբոց տօները կարգաւ ու անշխթ տօներու համար  
պէտք էր որ տարեգլուխը անշարժ ու անխախտ լի-  
նէր, երկուասաներորդ դարուն մէջ Յովհաննէս Սար-  
կաւազ վարդապետը Յայամաւուրքին մէջի տոմարն  
անխախտ պահելու համար՝ կարգ դրաւ որ չորս տա-  
րին մի անգամ նահանջ լինի (Աւելեաց ամսոյն օրերը  
6 համրելով), որով տարեգլուխն ալ միշտ օգոստոսի  
11-ին հանդիպի, ինչպէս որ Կիրակոս պատմադիրը  
կվկայէ ասելով. «Մեծիմաստն գիտութեամբ քան ըզ-  
յովովս եւ հանճարեղն յամենայնի՝ մտահարուստն  
Յովհաննէս, Սարկաւազն կոչեցեալ, ի Հաղբատ . . .  
զհաստատ եւ զանշարժ տոմարն կարգեաց փոխանակ  
շարժականին եւ անհաստատոյն»: Այս է ահա  
ՍՍՐԿԱՒԱՔԱՂԻՐ կոչուած անշարժ թուականը, որ  
գոթբաղդարար ազգիս մէջ ընդունելութիւն չգտաւ,  
եւ այժմ միայն օրացուցաց մէջ կգործադրուի ըստ  
Յայամաւորաց կամ ՅՅՅՄՄԱՒՈՒՐԱՅ ՏՈՄԱՐ գրուելով:  
Իսկ Հայոց մեծ թուականի ամիսներուն անունները  
սորա են.

- |              |             |
|--------------|-------------|
| 1. Նուասարդ. | 7. Մենեկան. |
| 2. Հոռի.     | 8. Արեգ.    |
| 3. Սանմի.    | 9. Անեկան.  |
| 4. Տրե.      | 10. Մարերի. |
| 5. Քաղոց.    | 11. Մարգաց. |
| 6. Արաց.     | 12. Հրոտից. |
| 13. Աւելեաց. |             |

ՀՐԷԻՅ ԵՒ ԵԳԻՊՏԱՅԻՈՅ ՏԱՐԻՆՆԵՐԸ. — Թէպէտ եւ  
 Հին ժամանակները գանուեցան երբեմն երբեմն այն-  
 պիտի անձինք որ կարծեցին թէ իւրաքանչիւր ազգ-  
 այլեւայլ տարի ունեցած է ի սկզբան, ինչպէս սիկի-  
 լիացի Դիոգորոս պատմիչը, Պլինիոսն ու Պլուտարքո-  
 սը, որք կասէին թէ «եգիպտացւոց տարին ի սկզբան  
 մեկ եւ յետոյ երկու լուսնական ամիս էր. բայց որով-  
 Հետեւ այն ծուռ ենթագրութիւնը հակառակ կենէ-  
 Աստուածաշնչի խօսքերուն, որ յայտնապէս կասէ թէ  
 «նոյ երբ Ջրհեղեղի ժամանակ տապանը մտաւ 600  
 տարեկան էր, յորում տասն ամիս եւ 54 օր կենալէն  
 յետոյ՝ 601 տարեկան հասակին ելաւ տապանէն՝ », <sup>1</sup>  
 պէտք է գիտնալ որ նահապետաց, ինչպէս նաեւ  
 Հրէից եւ եգիպտացւոց տարիները կարճ չեն եղած  
 քան զմերը. վասն զի եթէ Ջրհեղեղէն առաջ Մովսե-  
 սի պատմած տարիները մէկ մէկ ամիս լինէին, Ենով-  
 քը, Մաղաղայէնն ու Կայէնը եօթը տարեկան չեղած  
 ու այրութեան հասակը չառած՝ տղայ պիտի ունե-  
 նային, որ աւելի զարմանալի է քան թէ Մաթուսա-  
 ղայի 969 տարի ապրիլը. նոյնպէս եթէ նահապետաց  
 տարիները երկերկու ամիս հաշուեմք, կտեսնեմք որ  
 Փաղէկն ու Սերուքը Հինգ տարեկան չեղած՝ զաւակ  
 ունեցած են եւ հազիւ 24 տարի ապրած են, որ կնշա-  
 նակէ թէ նոցա կեանքը Արփաքսաղայ, Յակորայ ու  
 մեր կեանքէն շատ աւելի կարճ եղած է. մինչդեռ  
 ընդհակառակն, ինչպէս սուրբ գրոց վկայութենէն,  
 նոյնպէս եւ ընդհանուր ազգաց աւանդութենէն յայտ-  
 նապէս կտեսնեմք որ Հին ժամանակի մարգիկը մեզ-  
 մէ շատ աւելի երկայնակեաց եղած են, Հին ազգաց  
 տարին՝ մերինին պէս 12 ամսէ բաղկանալուն վերայ

<sup>1</sup> Նոյ էր ամաց վեց հարիւրոց, եւ ջրհեղեղ ջուրցն եղեւ ի վերայ  
 երկրի . . . յամսեանն մետասաներորդի երեսեցան գլուխք վերանց . . .  
 եւ եղեւ ի վեցհարիւրերորդի եւ ի միում ամի կենաց նոյի երաց նոյ  
 գտապանն (Ծննդոց է, Ը) :

վաղուց արդէն յիշատակած է երողոսոս՝ թէ « եգիպտացիք առաջինն եզան որ տարին 12 ամսոց վերայ 30-ական օրով բաժանեցին, որոց վերայ հինգ օր եւս Հերմէսն աւելցուց » :

**ՅՈՐԵԼԵԱՆ ՏԱՐԻ.** — Յորելեան կասուի ընդհանրապէս 50 տարուան շրջանը՝ որ եւ իցէ երեւելի դիպուածէ սկսելով: Յիսնամեայ յորելինին սկիզբը ասկէց 3260 տարի յառաջ հաստատուած է աստուածային հրամանաւ Մովսէս մարգարէին ձեռքով, որ ամենայն եօթներորդ տարին սուրբ կամ հանգստեան տարի անուանելէն զատ՝ եօթն անգամ եօթը տարիէն վերջինն ալ յորելեան անուանեց, որ թողութեան կամ ազատութեան տարի կնշանակէ. վասն զի այն տարին Հրեայք ոչ միայն ամեն ծառայական գործերէ կզազրէին, այլ եւ իւրեանց անասունները կզազրեցընէին գետին հերկելէն, որով գետինն ալ կզազրէր արօրին պատառուածքէն. այլ եւ պարտականներուն պարտքերը կնրէին, եւ սլ որ ուրիշէ բան առած լինէր (թէ շարժուն եւ թէ անշարժ ստացուածք) խիոյն յետ կզարձընէին: Եւս առաւել մէկուն քովը համազգի գերի կամ ծառայ պիտի չգտնուեր, հապա ամենքն ալ պիտի արձակէին: Այս օրէնքներս գրուած էին Հրէից՝ որ հայրենական ժառանգութիւնները անփոփոխ պահեն եւ ընտանի ու քաղաքական կռիւներու պատճառները վերցունին, միանգամայն եւ մարդկութեան գութը յիշեն ու բռնութիւնը վերցուի օրինաւոր եւ վայելուչ ընկերական հաւասարութեամբ:

Ինչպէս որ վերն ասինք, այժմ սովորաբար յորելեան կասուի 50 տարուան շրջանը՝ մէկ նշանաւոր դիպուածէ վերջը, ինչպէս մարդու ծննդեան յորելեանը, որ է կենաց 50 տարին, ամուսնութեան—որոյ յորելեանը շատ տեղ սովորութիւն եղած է իբրեւ երկրորդ հարսանիք հանդիսապէս կատարել: Ոմանք

ամուսնութեան 25 տարին արժաթի կանուանեն, իսկ 50-ը ոսկեղէն: Քաղաքական պաշտամանց մէջ ալ 50 տարի ծառայողը յորելական կասուի, որով կամ ծառայութենէն արձակուելով ամեն տարի իւր տարեկան թոշակը կառնու մինչ ի մահ, եւ կամ նոր պատիւ ընդունելով՝ ոտճիկը կաւելցուի:

ՀՈՌՎԱՐՍՏՅԵՅԻՈՅ ՏԱՐԻ. — Հին Հռովմայեցւոց տարին Հռովմայ շինութենէն սկսաւ Քրիստոսէ 749 տարի յառաջ՝ նոցա Հռոմուրտ թագաւորին հոգաբարձութեամբը, որ ժամանակակից էր Եսայեայ մարգարէին: Այս Հռոմուրտը կարծելով թէ արեգակը 300 օրուան մէջ կկատարէ իւր շրջանը, տարին 10 ամսոց վերայ կարգաւորեց եւ տարեգլուխը մարտ ամսոյն առաջին օրէն սահմանեց. բայց Հռոմուրտի յաջորդը՝ Նուսու Պուկիլիոս (Քրիստոսէ 700 տարի յառաջ) յաւելցուց տարւոյն վերջը նախ Յունուար ամիսը՝ ի պատիւ իւրեանց Յանուս՝ չաստուծոյն, եւ ապա Փետրուարը՝ յանուն Փերուսայ, որ Հռովմայեցւոց լեզուաւ մտրոպիւն կնշանակէ. վասն զի այս ամսուն կկատարէին նոքա իւրեանց քաւութեան եւ ննջեցելոց տօները, լապտերներ վառելով Պղուտոնի՝ յիշատակին համար: Յունուար եւ փետրուար ամիսները ժամանակ անցնելով տարուան սկիզբը փոխադրուեցան, յետ որոց կուգար մարտ ամիսը, որ Արէս չաստուծոյն նուիրուած էր: Հռովմայեցւոց ամիսներուն չորսը ի սկզբան 31-ական օր ունէին, եօթը՝ 29-ական օր. իսկ փետրուարը միշտ 28 օր, որով տարին 355 օր էր: Բայց որովհետեւ այս հաշիւը դարնանային հասարակածին չէր համեմատեր, Հռովմայեցիք իւրեանց տարին արեգական ընթացքին հետ համեմատելու համար, տարուան վերայ ուրիշ օրեր կաւելցընէին, երբեմն շատ՝ երբեմն քիչ. եւ տարին այնպէս խառնակ կլինէր, որ մայիսի կէսերը հասնելէն յետոյ եւս դեռ դարնանային դիշերահաւասարը հասած չէր վներ:

Այս շիտթութեանց պատճառաւ մէկ տումարական փոխութիւն եղաւ, որ սահմանողին անուամբը Յուլեան կոչուեցաւ ու այժմ՝ հին տմար կասուի:

<sup>1</sup> Կպատմեն քէ Հոռմուշու երբ Սարինացոց հետ հաշտութեան դաշինք դրաւ, մէկ կուստուն շինեց Յակոբ ճաստուծոյն անուամբ ու ծա՛նուա կոչեց մենեանը, որ լատիներէն դուռն ասել է. վասն զի երբ պատերազմ սկսուեր՝ այն մենեանին դռները կրանային (Յանուսէն օգնութիւն աջնելու յուսով), եւ երբ խաղաղութիւն լիներ՝ կփակէին: Այս պատճառաւ Յանուսի պատկերը երկու դէմքով կը նկարէին, նախ՝ իբրև նշան Հոռմուշուց ու Սարինացոց կցորդութեանը, եւ երկրորդ իբրև ապացոյց նորա գերանանձար իմաստութեանը, որով անցած քա-



ները կգիտնար եւ գալիքը կգուշակեր: Նուա Պոմպիլիոսը երբ տարւոյն վերայ երկու ամիս աւելցուց, Յանուսի անունովը մէկ սղոնձէ մենեան (կուստուն) շինել տուաւ, յորում 12 սեղանք կային ի նշանակ երկուստան ամսոց տարւոյն:

<sup>2</sup> Պոլուտոնը Կոռնոսի երեք որդւոց կրտսերը՝ այսինքն Արամազդայ եւ Պոսիգոնի փոքր եղբայրն էր: Այս սակնարարացեալ կոչուած առաս-

պելեալ ջաստուծոյն պաշտօնատարներ կհամարուէին նախ՝ Գիոսի եւ  
րեք ծերունի որդիքը, այսինքն *Հոսդամանտ*, *Էսկոս*, եւ *Միկոս*,



որ ղժոխք տարուած հողիներուն դատապարտութեան վճիռներ կու-  
տային մեծ խստութեամբ: Երկրորդ՝ Քարոն անունով ղժոխոց նաւա-  
վար ժանտ ծերունին, որ մեղաւոր մեռելոց ուրուատիպները նաւու



մէջ կժողվէր ու ղժոխոց *Ստիւքս* եւ *Մխերոն* գետերէն անցնելով տար-  
տարուս կտանէր: Երրորդ՝ *Կերքերոս* կոչուած երեք զլուխ ունեցող  
առասպելեալ շունը, որ ղժոխքի դռներուն պահպանութիւն անելով՝



դժոխք գնացողներուն սիրով ճանապարհ կուտար : իսկ դժոխքէն եկեղներուն՝ յանկարծ վերան վազելով կույ կուտար : և այլն : Պղտատոնի պատկերը ամենատղեղ կերպով կնկարէին՝ չորս ձի լծուած կառքի վերայ, որուն մէկ ձեռքին մէջ ևս դժոխաց փականքը դրուած կրկներ :

**ՅՈՒԼԵԱՆ ՏԱՐԻ.** — Յուլիոս կայսրը Հռովմայեցւոց տարւոյն շիտթութիւնը վերցընելու համար քանի մի աստղաբաշխներու հետ խորհուրդ անելէն յետոյ վերջապէս հաշիւները ճշգեց . իննսուէն օր աւելցուց տարուան վերայ, եւ սահմանեց որ այնուհետեւ տարին 365 օր համրուի, եւ ամիսները փոփոխակի 30, 31 օր լինին . իսկ փետրուար ամիսն ըստ առաջնոյն 28 օր մնայ : Եւ որովհետեւ այն ժամանակը կկարծէին թէ նահանջ օրը ամբողջ 6 ժամ է, որոշեց որ 4 տարին մէկ օր աւելի լինի, այսինքն նահանջ տարին փետրուար ամիսը 29 օր ունենայ եւ տարին 366 օր լինի : Յուլեան տոմարը երկար ժամանակ բանեցուցին արեւելեան եւ արեւմտեան քրիստոնեաները, եւ մինչեւ ցայժմ գրեթէ բոլոր արեւելցիք՝ Եւրոպացւոց մէջ ալ Յոյներն ու Ռուսները Յուլեան տոմարով կերթան, բայց արեւմտեայք ամենքն եւս նոր տոմարը կգործադրեն, որ կասուի նաեւ

**ԳՐԻԳՈՐԵԱՆ ՏԱՐԻ.** — Գրիգոր երեքտասաներորդ պապը տեսնելով որ Յուլեան տոմարը աստղաբաշխական հաշուով ամեն տարի 11 վայրկեան 24 բոպէ եւ 30 մանրերկրորդ առաջ կերթայ ու 120 տարուան մէջ 24 ժամ տարբերութիւն կանէ գարնանային հասարակածէն, որ անխախտ մարտի 20-ին պիտի լինէր, եւ սխալ հաշուով մարտի 10-ին ընկնելով՝ զատկի տօնը կխախտուէր, 1582 թուականին երեւելի աստղաբաշխներու հետ խորհուրդ անելով սահմանեց որ մէկէն 10 օր յառաջ անցնին Յուլեան տոմարէն, այսինքն նոյն տարւոյն հոկտեմբեր ամսոյն 4-էն յետոյ 5 գրեւու տեղը 15 գրեն, որպէս զի այնուհետեւ գար-

Նանային հասարակածը անսխալ մարտի 20-ին հանգիպի: Բայց որովհետեւ այս հաշուով եւս 100 տարւան մէջ 25 օր նահանջ անելով՝ դրեթէ 19 ժամ կաւելնայ, որ 400 տարիէն յետոյ 76 ժամ կանէ: Այս բանիս դիմացն առնելու համար՝ պապը որոշեց որ ամեն երեք դարեգլուխը (որ չորս չորս համրելով նահանջ կուգայ) հասարակ տարի համարուի, եւ միայն չորրորդը նահանջ լինի. այսինքն 1700-ը, 800-ը, 900-ը հասարակ տարիներ լինին ու 1600-ը եւ 2000-ը նահանջ: Գրիգոր պապի այս տումարական փոփոխութեան մասին թէեւ ի սկզբան նոյն իսկ արեւմտեան եկեղեցականաց մէջ մեծամեծ տարաձայնութիւններ ելան, որք Յուլեան տոմարին հետեւելով նախ տան օրը պահեցին եւ ապա 1700 թուականը նահանջ անելով տասնեւմէկ օր յետ մնացին, բայց վերջը տոներու եւ քաղաքական գործողութեանց շխոթութիւններուն պատճառաւ՝ Գրիգորեան տոմարին հետեւեցան 1700 թուականին նորաղանդները, (որ փետրուարի 18-էն յետոյ տասնեւմէկ օր ձգեցին ու մարտի մէկն անցան). 1752-ին Անգղիացիք, 1753-ին Տանիմարացիք, Շուեդները եւ այլն: Միայն Ռուսներն ու Յոյները չընդունեցան մինչեւ հիմա Գրիգորեան տոմարը: Մեր ազգն ալ այս մասին Ռուսաց հետեւելով Յուլեան տոմարով կերթայ: Եւ որովհետեւ Յուլեան տոմարին հետեւողները 1800-ին ալ նահանջ արին, մեր տարին նոր տոմարէն 12 օր յետ մնաց: Այս պատճառաւ է ահա որ Լատինացիք մեզմէ յառաջ անցնելով՝ երբեմն հինգ շաբաթ առաջ կը կատարեն զատիկի տօնը. վասն զի թէպէտ (ըստ նոր տոմարի) զատիկը մարտի 9-էն կամ 10-էն մինչեւ ապրիլի 14 եղած միջոցէն ոչ յառաջ կգտնուի եւ ոչ վերջը, բայց որովհետեւ նոր տոմարը հինէն 12 օր յառաջ է, զատկական լուսնին լրումն եւս ըստ նորոյն 4 կամ 5 շաբաթ յառաջ կհանգիսի:



**ՄՍ.ՀՄԵՏՍ.ԿՍ.ՆԱՅ ՏՍ.ՐԻ.** — Մահմետականաց տարին Արարացւոց լեզուաւ հիւնրա կամ հիւնրեք կասաւի, որ փախչել կնշանակէ, վասն զի Մահմէտը՝ Քրիստոսի 622 թուականին յուլիսի 15-էն 16 անցնող գիշերը Մէքքէէն Մէգինէ փախաւ, եւ այն նշանաւոր դէպքէն նոցա թուականն սկսաւ: Բայց որովհետեւ հիւնրէթի տարիները լուսնական են, նոցա ամիսներն եւս փոփոխակի 30 ու 29 օր ունին, որ բոլորը միասին տասներկու ամսուան մէջ 354 օր կլինին. արեգակնային հասարակ տարիէն տասներեւեկ օր պակաս: Այս պատճառաւ Մուհարրէմ ամիսը՝ որ նոցա տարեմուան ու առաջին ամիսն է, միշտ փոփոխական կլինի եւ տարւոյն ամեն եղանակներուն մէջ կթափառի: Մահմետականը՝ համեմատութեամբ արեգակնային ամսոց ու տարւոյն՝ հաստատուն տարեգլուխ չունենալով՝ ամենայն տարի տասներեւեկ օր առաջ կանցնին, որ երեք տարուան մէջ գրեթէ մէկ ամիս կլինի ու 13 տարուան մէջ՝ գրեթէ մէկ տարի: Այս հաշուով մեր 33 տարին նոցա համար 34 է. եւ մէկը որ 66 տարեկան է, իրենց հաշուով 68 տարեկան կլինի: Նոյնպէս՝ հիւնրէթի սկիզբը, որ Քրիստոսի 622 թուականէն սկսելով մինչեւ ցայժմ 1249 տարի է, նոցա հաշուով 1288 տարի կլինի, որ 39 տարի տարբերութիւն ունի:

**ԱԶԱՐԻԱՅԻ ԹՈՒՒԱԿԱՆ.** — Եօթներեւտասներորդ դարուն սկիզբները Հայոց նոր թուական մի սկսաւ, որ իւր սահմանողին անուամբը Ազարիայի կամ Փոֆր քուական կոչուեցաւ. վասն զի 1605-ին երբ Օսմանեանց եւ Պարսից պատերազմին ժամանակը Շահաբբաս թագաւորը բազմաթիւ Հայեր տարաւ Պարսկաստան (որք Ասղահանայ հանգէպը ընակելով՝ տասը տարուան մէջ հետզհետէ ճոխացան ու նոր Զաղաքազարը շինեցին), այն ժամանակը (1615) իբրեւ երեւելի անցը Հայոց ի Պարսկաստան, Ազարիա վարդապետը՝ Դաւիթ եւ Մելքիսեդեկ կաթողիկոսաց հրամանաւը

Հայոց փոքր թուականը սահմանեց, առանց տուժարական փոփոխութեանց, որ միայն Յովհաննէս Սարկաւազ վարդապետին հետեւելով՝ 4 տարին մի անգամ նահանջ արաւ, (Աւելեաց ամիսը 6 օր համընթաց), եւ ամիսներն այսպէս անուանեց.

- |              |             |
|--------------|-------------|
| 1. Շամս.     | 7. Թիրայ.   |
| 2. Ադամ.     | 8. Դամայ.   |
| 3. Շրար.     | 9. Համիրայ. |
| 4. Նախայ.    | 10. Արամ.   |
| 5. Ղամար.    | 11. Ովզան.  |
| 6. Նաղար.    | 12. Նիրնան. |
| 13. Աւելեաց. |             |

Աղարիայի թուականը՝ իբրեւ նոր Զուղայեցւոց վերաբերեալ թուական թէպէտ ընդունելութիւն չգտաւ Ազգիս մէջ, բայց միշտ օրացոյցներու մէջ գործածական է:

ԱՄԻՍ. — Ամիս կատուի տարւոյն երկոտասաներորդ մասը, որ ի սկզբան լուսնի առաջին երեւոյթէն որոշուեցաւ. վասն զի մարդիկ տեսնելով որ լուսինը իւր կանոնաւոր շրջանը կատարելէն յետոյ վերստին կծնանի, այն նորածնութիւնը ամսագրութիւն անուանեցին, եւ լուսնի պէս պէս երեւոյթներուն, այսինքն երկընքին երեսը լուսնի առաջին անգամ երեւնալուն Ծնունդ յուսնի ասացին, կամաց կամաց աճելէն ու կէս լինելէն յետոյ Առաջին ֆառոյ յուսնի, ամբողջ սկաւառակը լուսաւորելուն պէս՝ Լրումն յուսնի, իսկ հետզհետէ պակսելէն ու կիսամաշ կերպով երեւելէն յետոյ՝ Վերջին ֆառոյ յուսնի: Սակայն բաւական ժամանակէն յետոյ լուսնի տեղը արեգակնային ամիսն սկսան գործադրել, որով եւ ամարագիտաց մէջ սովորութիւն եղաւ ամիսը արեգակնային եւ յուսնային օրերու վերայ բաժանել: Աստղաբաշխական արեգակնային ամիսը 30 օր, 10 ժամ, 29 վայրկեան եւ 4 մանրերկրորդ կհաշուի. իսկ լուսնային ամիսը՝ 29 օր, 12 ժամ, 44 վայրկեան, 2 մանրերկրորդ եւ 8 տասնորդական մասունք:—Կռա-

պաշտութեան ժամանակ ամսագլխոյ կամ ամսամտի օրերը՝ քուրմերէն մէկը ուշագրութեամբ կհսկէր լուսնի նորմանը, եւ տեսնելուն պէս կիմացընէր զօհարարին, որ քուրմերու գլխաւորը կլինէր, եւ նա բարձր ճայնիւ կհրատարակէր ժողովրդեան ամսամտի օրը, հրաւիրելով որ ցանկացողները երթան զօհ մատուցանեն նոյն ամսոյ կուռքին: — Այս կուռքերէն զատ՝ տարւոյն ամիսները հին ժամանակներէն ի վեր տասներկու համաստեղութեանց վերայ բաժնուած են, որք ընդհանրապէս կենդանակերպ կատուին, եւ են. Խոյ, Յուլ, Երկաւոր, Խեցգետին, Առիւծ, Կոյս, Կշիռ, Կարիճ, Ազեղնաւոր, Սյծեղջիւր, Ջրհոս եւ Չուկն, որոց աստղաբաշխական տեղեկութիւնը մեր նպատակէն դուրս լինելով՝ գրեմք միայն հեթանոսութեան գարեբէն ի վեր անոնց վերայ եղած առասպելեալ պատմութիւնը՝ Հռովմայեցոց հին տարեգլխէն սկսելով.



Ա.) ԽՈՅ, որ Մարտ ամսուն դիմացը դրուելով՝ նորա նշանը կհամարուի, եւ առասպելեալ պատմութիւնն այս է. Թերացոց Ատամաս Թագաւորը իւր նեփիէ կնոջ՝ յանկարծական ցնորմանը համար՝ Թողուցեր ու տեղը Ինովը առել էր. երբ նեփիէին խելքը գլուխն սկաւ ու Ատամասայ մօտ դարձաւ, Ինով նախանձեցաւ եւ վախնալով որ նորա տղայքը Ատամասայ յաջորդեն, այնչափ աշխատեցաւ ու սուտ պատգամներ բերել տուաւ չաստուածներէն, որ Ատամասը համոզուեցաւ աստուածոց կամքը կատարելու համար իւր Փրիքսոս որդին ու ելլէ աղջիկը Ապողոնի զոհ անել: Արամազդ՝ որ աստուածներուն հայրը կհամարուէր, այս բանս, կասն, իմացուց Փրիքսոսին եւ զիրենք ազատելու համար՝ մէկ ոջլաբ

յուզարկեց ոսկի բուրդով, որոյ վրայ հեծան քոյր ու եղբայր եւ օդուն մէջէն սկսան երթալ: Սեւ ծովուն *Չակար գալեսի* ասուած կիրճին վերայէն անցնելու ժամանակ ելլէին գլուխը պտրտելով՝ ծովն ընկաւ, որ այն ժամանակէն *Ելլեպոստոս* կոչուեցաւ. իսկ Փրիքոսս՝ Կողքիս քաղաքն իջաւ (որ Հայոց եւ Վրաց սահմանի մէջ քաղաք էր) Այիդէս Թագաւորին մօտ. այնտեղ ոչխարը մորթեց զոհ արաւ, բուրդն ալ պահեց: Այիդէս, որ Փրիքոսսին փեսայացուցել էր, մէկ օր նախանձելով՝ սպաննեց զինքը, եւ այն ոչխարին բուրդը, որ *ոսկեգեղմե* կասուէր՝ յափշտակեց: Այս որ տեսաւ Փրիքոսսին կինը, իւր զաւակները Յունաստան փախուց. Յունաց երիտասարդներն ալ Յասոնի առաջնորդութեամբը նաւ մի շինեցին, որ *Արցունաւ* (առաջին նաւ) կոչուեցաւ եւ զնացին Կողքիս, Փրիքոսսին մահուան վրէժն առին ու ոսկեգեղմը յետ դարձուցին. իսկ ոչխարին յիշատակը պահելու համար՝ երկնքի համաստեղութեանց կարգը դասեցին զինքը:

Բաց յայտմանէ՝ Իոյ կենդանակերպին վերայ կասն նաեւ Թէ երբ Բաքոս կամ Սպանդարապետ Ափրիկէի տիրելու ժամանակ իւր ընկերներովը աւագուտ անսպառին մէջ ծարաւէն կպասակէր, ոչխարին մէկը աւագին մէջէն բղխած ազրիւր մի տեսաւ ու ցուցուց նոցա, որով Բաքոս այն ոչխարը աստեղաց կարգը դասեց:

Բ.) ՅՈՒՂ, որ Ապրիլ ամսոյն նշանն է: Այս կենդանակերպին վերայ քանի մի դիպուածներու յիշատակներ կան՝ մէկը միւսէն առասպել ուստի եւ որոշ կերպով կարելի չէ գիտնալ Թէ ո՞ր յիշատակին համար դրուած է: Հաւանական կարծիքն այս է. Արամազդ, կասն ուզելով որ զԵրոսպան (Փիւնիկէի Ագենոր Թագաւորին աղջիկը) առանց իմացընելու իրեն կին առնու, ցուլի կերպարանք մտաւ ու գնաց Ագենորի



կենրուն մէջ խառնուեցաւ. Երոսպան չգիտնալով՝ այս բանս, երբ դիպուածով մի այն եզին վերայ հեծաւ, Արամազդ ծովը ցատկեց ու լողալով Կրեոէ կղզին գնաց, եւ այն երկիրը՝ ուսկից անցաւ՝ այն աղջկանը անուհով *Երոսպա* կոչեց. ահա այս ցուլին համար է կասն ապրիլ ամսոյն կենդանակերպը:

Գ.) ԵՐԿՈՒՈՐԵԱԿ, որ Մայիսի դիմացը կդրուի. նորա առասպելեալ պատմութիւնը՝ Կաստոր եւ Պոլիկեւտիս զոյգ եղբարց դիպուածն է: Այս երկու եղբարց մէկը՝ Պոլիկեւտիս՝ Արամազդայ որդի համարուելով՝ անմահ էր. իսկ Կաստոր—մահկանացու. եւ Յասոնին հետ մէկտեղ Կողքիս գնացողներէն էին նաև սոքա: Շատ քաջութիւններ անկէն յետոյ՝ Կաստորը Իդաս իշխանէն սպանուեցաւ՝ անոր դէմ անիրաւութիւն անելուն համար: Պոլիկեւտիսն ալ զԻդասն սպաննեց, բայց իւր սիրելի եղբոր մահուանը վերայ սաստիկ տրտմած՝ Արամազդայ աղաչեց որ կամ Կաստորը ոչնչացընէ, կամ զինքն ալ մահկանացու անէ: Արամազդայ սիրտը շարժեցաւ անոր վերայ, բայց խնդիրքն ալ ծանր երեսելով՝ անմահութիւնը մէջերնին բաժնեց, այսինքն այնպէս արաւ որ փոփոխակի ապրին, եւ այնպէսով երկուքն ալ անմահ եւ մահկանացու լինին. վերջը երկուքն ալ տարաւ երկինք համաստեղու-



Թեանց կարգը դասեց, որով իբրև կենդանակերպք *Երկուորեակը* ասուեցան, եւ երկրիս վերայ ալ իբրև *Գիտսի որդիք՝ Գիտսկուրեակը* կոչուեցան:

Գ.) ԽԵՅԳԵՏԻՆ կասուի Յունիս ամսոյն նշանը, որոյ առասպելեալ պատմութիւնը այսպէս կաւանդեն բանաստեղծները: Յունաստանի Արգոլիս գաւառի Լերնեան լճին քով անճոռնի վիշապ մի կար, որ *Հոյրու* կանուանէին, եւ այն կողմերը մեծամեծ վնասներ կանէր: Այս վիշապը կասն, 100 գլուխ ունէր եւ թէ որ մէկը կտրուէր, իսկոյն տեղըն ուրիշ եօթը հատ կրուսնէր. սորա դէմ մի միայն ճարն էր կրտուելուն պէս՝ մէկէն կտրած տեղը այրելով խարելը, բայց ո՞վ կկտրողանար սիրտ անկ այս բանիս: Հերակլէս, որ Յունաց Վահագն է, եւ ամեն դիւցազանց մէջ անուանի, սորա ճարը գտաւ. իւր Յուսս բարեկամը հետն առած վիշապին դէմ ելաւ. ինքը նորա գլուխները կը կտրէր, Յուսս ալ մեծ ջահով մի շուտ շուտ գլխուն տեղը կայրէր:

Իսկ Հերա կամ Յունոն դիցուհին (դուստր Կունոսի) որ ջէր ուզեր վիշապին մահը, մէկ խնցղետին յուզարկեց որ Հերակլեսին ոտքը խածնէ-



լով՝ արգիլէ վիշապին գլուխները կտրելէն. Հերակլէս այն խնցղետինն ալ սպաննեց, որով Հերա զինքը համաստեղութեանց կարգը դասեց:

Ե.) Ամիհիծ, որ Յուլիոս ամառն նշանն է, եւ առասպելաւ պատմութիւնը այս է. Յունաստանի Լերնեան լճին մօտ՝ նեմեայ անտառին մերձակայքը մէկ ահագին առիւծ կար, որ ոմանք լուսնէն քնկած էր



կկարծէին եւ ոմանք չաստուածոց ծնունդ կհամարէին: Սա շատ վնաս կանէր այն կողմերը, եւ զէնքով ջէր վիրաւորուեր որ սպաննեն: Երկու դուռով քարայրի մէջ կքնակէր, որ միշտ փախչելու տեղ ունենայ՝ թէ որ մէկ զօրաւոր թշնամի գայ վրան: Հերակլէս դռներուն մէկը գոցեց եւ մէկայէն ներս մտաւ. եւ որովհետեւ երկամբ ջէր ներգործեր առիւծի անձին, ձեռքով բռնեց վիզէն ու սխմելով խղղեց. մօրթն ալ հանեց վրան հագաւ, նորա գլուխն ալ սաղաւարտի տեղ իւր գլուխն անցուց: Ահա այս զարմանալի առիւծն է որ Յունաց աստուածները երկինք հանելով՝ համաստեղութեանց կարգը դասած են:

Զ.) ԿՈՅՍ կասուի Սգոստոս ամառն դիւնացի կենդանակերպը, որ յիշատակ է կասեն Ասորէա չաստուածուհւոյն: Ասորէան աշխարհիս առաջին *ուկեղեկ* կոչուած դարուն մէջ երկիրս իջել էր եւ արդարու-

Յեան շատուած կիսամարուէր : Երբ մարդիկ անիրաւութիւնը շատցուցին , Ասորէան կամաց կամաց քաղաքները Յողոց երկինք դարձաւ :



Շատ անգամ սորա մէկ ձեռքը կշիռք բռնած կնկարեն , մէկալը սուր , որով արդարութիւն կնշանակէ : Բայց ոմանք Ասորէայի տեղ կկարծեն որ երիկօնը լինի այս կոյսը , որ Իկարոս Յագաւորին աղջիկն էր . հովիւները երբ Իկարոսն սպաննեցին , երիկուն յուսահատութենէն ինքզինքը կախեց :

Է.) ԿՇԻՌ , որ Սեպտեմբերի դիմացը կը դրուի ,—Ասորէայի արդարութեան կշիռքը կցուցընէ : Ոմանք ալ կարծին թէ Թէմիսի նշանն է ,



որ երկնի եւ երկրի աղջիկն էր ըստ առասպելաց , եւ արդարութիւն սիրող շատուածուհի մի :

Ը.) ԿԱՐԻՃ , որ Հոկտեմբերի նշանն է , յիշատակ է այն կարիճին որ Արտեմիս շատուածուհին զրկեց Որիոն կամ Հայկ անունով քաջին



ուտը խայթելու , վասն զի Որիոն կկարծենար թէ ամեն գազանի կառն թէ : Արտեմիսն ալ անասնոց որսորդ լինելով՝ իրեն նախատինք համարեց այս բանս եւ ուզեց վրէժն առնուլ Որիոնէն :

Թ.) ԱՂԵՂՆԱՒՈՐ, 'տյեմբերի նշանն է' այս յիշատակաւ. կրսնն Թէ երբ կուտաս ձիու կերպարանք մտնելուն համար՝ իւր Գիրոն որդին ձիամարդ եղաւ, եւ Արտեմեայ հետ որսորդութիւն անելով լեռները՝



շատ արուեստներ սովորեցուց Յունաց, այնպէս՝ որ մինչեւ Արիլլեսի դաստիարակն եղաւ, Հերակլէս վրան նախանձեւով՝ Լերնեան վիշապին արինովը Թամբլուած նետովը խոցեց զԳիրոն, Գիրոն ալ Արամազդայ աղաջեց որ իւր կեանքն առնէ. Արամազդ լսեց աղաջանքին եւ զինքը կենդանակերպից կարգն անցուց:

Ժ.) ԱՅՆԵՂՁԻՒՐ, 'Իեկտեմբերի նշանը, որոյ համար կպատմեն Թէ Կրէտէի Թագաւորին Ամաղթէա աղջիկը՝ մէկ եղնիկի կամով մեծցուց Արամազդը, այն պատճառաւ եղնիկն ալ *Ամաղթէա* կոչուեցաւ: Ար-



մազդ այս եղնիկն իւր երկու ձագերովը աստեղաց կարգը դասեց եւ Նորա մէկ եղջիւրը մուսայից բնծայեց, որ իւրեանց խնդիրքը կատարէ. այս պատճառաւ այն Ամաղթեղջիւրը՝ Առատուժեան եղջիւր եւս կոչուեցաւ:

ԺԱ.) ՋՐՀՈՍ, որ Յունուարի դիմացը կը դրուի եւ առասպելաւ պատմութիւնը այսպէս կաւանդուի: Տրոյիոյ Թագաւորի *Գանիմեդէս* անունով որդին Արամազդայ սիրելի վննելով՝ իրեն մատուակն եղաւ:





Մէկ օր սա Իգա լերին վերայ որսի ելած ժամանակ՝ Արամազդայ արծիւը խնց զինքը եւ սարաւ երկինքը կենդանակերպից կարգը դրաւ :

ՃԲ.) ՁՈՒԿՆ կամ ՁԿՈՒՆՔ, որ Փետրուարի նշանն է, եւ յիշատակ է այն ձկներուն, որոց վերայ հեծան Աստղիկն ու իւր երոս որդին, եւ



Տիվոն հսկային ձեռքէն փախչելով՝ եփրատ գետէն անդին անցան եւ ազատեցան : Այս ձկներուն հայրն ալ, կրտէ Ովիդիոս բանաստեղծը, մէկ օր Խիս դիցուհւոյն ծարաւած ժամանակը ջուր խմցուցել էր :

**ՇԱՒԱԹ.** — Շարաք կամ Եօրնեակ կասուի եօթն օրուան շրջանը, որ ոմանք լուսնի եօթնօրեայ փոփոխութիւններէն պատճառած կհամարին, եւ ոմանք եօթնօրեայ արարչագործութեան աւանդութենէն մտած, որ շատ հաւանական է. մանաւանդ թէ Հրէից մէջ շատ հին է այս սովորութիւնը, վասն զի Աստուած պատուիրած էր Մօլսեսի բերանովը որ 6 օր աշխատին, եւ եօթներօրդ օրը հանգստանան : Արեւելեան ուրիշ ազգերն եւս, ինչպէս Եգիպտացիք, Հայք, Ասորիք անյիշատակ ժամանակէ հետէ այս սովորութեանը կհետեւէին. եւ միայն արեւմուտքի մէջ կռապաշտութեան ժամանակ Հռովմայեցիները իննական

օր կհամարէին շաբաթը եւ Յոյները տասնական, որոց ամիսը երեք շաբաթէ կը բաղկանար, բայց նորա եւս քրիստոնէութենէն յետոյ սկսան եօթնական օր հաշուել մէկ շաբաթը: — Շաբաթուան եօթն օրերը Հրեայք մէկմէկու ետեւէ կարգաւ կհամարէին ի սկզբանէ հետէ, եւ առաջին օրուան Միաշաբաթի կասէին, երկրորդին երկուշաբաթի, երրորդին երեքշաբաթի, չորրորդին Չորեքշաբաթի, հինգերորդին Հինգշաբաթի, բայց ի վեցերորդ օրէն, որ (Ռաբաթ) — *quies* զանգուշակեալ կանուանէին, ուսկից Յոյք եւ Հայք առնելով՝ յունարէն *Φαρασκη* (*παρασκη*) եւ հայերէն Ռաբաթ ասուեցաւ. իսկ եօթներորդ օրուան Շաբաթ կասէին, որ հանգիստ կամ հանգստեան օր կնշանակէ: — Արեւելեան քրիստոնեայք ընդհանրապէս Հրէից հետեւեցան այս կողմանէ, եւ միայն միաշաբաթի օրուան անունը ի պատիւ Յարութեան Քրիստոսի փոխեցին եւ յունարէն *Κυριακή* անուանեցին որ *skrianiakian* կնշանակէ. եւ Ս. Հարց ժողովովը որոշուեցաւ որ Հրէից շաբաթին տեղը այն օրը սուրբ պահուի Քրիստոսի Յարութեան եւ միանգամայն Հոգւոյն սրբոյ գալստեան յիշատակին համար, որ կիրակի (միաշաբաթի) օրը հանդիպեցաւ: Իսկ արեւմտեան քրիստոնեաներէն սմանք շաբաթուան օրերը եգիպտացոց եօթը մոլորակաց կոչմամբն անուանեցին, որ մինչեւ ցայժմ գործածական է լատինացոց մէջ. վասն զի Բշ. օրուան՝ օր *Լուսնի*, Գշ. — օր *Հրասի*, Դշ. — օր *Փայլածուի*, Եշ. — օր *Լուսնբազի*, Ուր. — օր *Արուսկի*, Շբ. — օր *Երեւակի* եւ *Կիր.* — օր *Արեւու կանուանեն*: եւ որովհետեւ կը ապաշտուածեան ժամանակ եօթը մոլորակները մէկ մէկ չատուածոց կնուիրէին, շաբաթուան օրերն եւս նոյն կուռքերուն, այսինքն Բշ. օրը *Անահիսին*<sup>1</sup> ընծայեցին, Գշ. — *Արեւիկն*<sup>2</sup>, Դշ. — *Հերմեսին*<sup>3</sup>, Եշ. — *Արամազդին*<sup>4</sup>, Ուր. — *Ախրոդիսկին*<sup>5</sup>, Շբ. — *Կոռնոսին*<sup>6</sup> եւ *Կիր.* (միաշաբաթի) *Ապոլոնին*<sup>7</sup> կարծելով թէ սոքա կտիրեն օրերու առաջին ժամերուն:



՝ Անահիտը, որ յունարէն Արտեմիս եւ լատիններէն Տիանա կասուի՝ Գիտսի դուստրը եւ Ապաղոնի քոյրն էր եւ որտորդուրեան զիցունի կնամարուէր: Լեբանոսուրեան, ժամանակ այնչափ պատիւ ունէր Հայոց մէջ, որ ,, Փառք եւ կեցուցիչ ազգիս մերոյ“ կանուանէր Տըրդատ բազաւորը: Սորա արձանը Հայաստանի մէջ շատ տեղեր կային, յորոց երևելին ու ոսկիէ բափածը եկեղեաց զաւառի *Երիզա* կամ *Երզնկա* քաղաքին մէջ կանգնուած էր. սրով *ոսկիամայր* կամ *ոսկիածին* եւս կոչուեցաւ մեր նախնի մատենագիրներէն: Եփեսոսի մէջ եւս մէկ ամենափառաւոր մննեան ունէր՝ *Քաւեփոն* ճարտարապետին ձեռքովը շինուած, որ աշխարհիս եօրն հրաշակեաց մէկը կնամարուէր: Կոստան ծախքը, որոյ երկայնութիւնը 425 ոտնաչափ էր եւ լայնութիւնը 220, Ասիոյ բոլոր ժողովուրդներէն ընծայուեցաւ եւ շինութիւնը 200 տարի քշեց: Վարսուն ոտնաչափ բարձրութեամբ 127 հատ սիւներ ունէր, որոց ծախսը նոյնքան բուով բազաւորներ նուիրած էին:



<sup>2</sup> Արեւ կամ ըստ լատինացոց Մարսը Արամազդայ որդին էր եւ աստուած պատերազմի կհամարուէր, ուստի եւ ձեռքը նիզակ բրոնձեղէնէ կնկարուի: Քուրմերը պահպանութիւն կանէին սորա 12 վահանին, յորոց մէկը երկնքէն ընկած էր կասէին: Այս կուռքին անունովը կոչուեցաւ Մարտ ամիսը:



<sup>3</sup> Հերմէս, որ յունարէն ու լատիներէն Մերկուրիոս կասուի՝ Արամազդ շատուծոյ եւ Մայա լաւերծանարսի որդին էր, զեւպան եւ քարգման կկոչուէր Ողիմպոսի մէջ բնակող շատուածոց, եւ ամենայն տեղ արագութեամբ հասնելուն համար, զլիտն կամ ուսերուն վերայ բեւեր կնկարէին: Հնրմեսի կուստան մէջ հերանոսներն իւրեանց գոնէրու լեզունները կայրէին, ի պատիւ ճարտարախօսութեան նորա, եւ իւրեանց տան դռներուն վերայ պատկերը կքաշէին գողերէն ու առաջակներէն պաշտպանուելու նպատակաւ:



<sup>4</sup> Արամազդ, որ յունարէն Դիոս կամ Զեւս, լատիներէն Յովիս կամ Նուպիտէր եւ պարսկերէն Որմիզդ կասուի ծնած էր Կոռնոսէն ու

Ռեայն (Կիւրեղէ) եւ անմահից ու մանկանացուաց հայր եւ ամենայն աստուածոց վնագոյնը կհամարուէր : Սա իւր մօրը խորամանկութեամբը կրեաւի մէջ Սմաղբեայ այժուս կարովը մեծանալով՝ հայածեց երկնքէն զիւր հայրը եւ բոլոր աշխարհիս տիրելէն վերջը՝ իւր երկու եղբարց հետ բաժին արաւ . այսինքն Պոսիդոնին ծովու իշխանութիւնը տուաւ , Պղոտոնին զծովոց եւ իրեն երկնից , ուր ինքն պիտի բնակէր : Պատկերը (ինչպէս մեր եւս զբաժ եմք) կնկարուի զանի վերայ բազմած , մէկ ձեռովը արքունի զաւազանը բռնած եւ միւսովը կայծակներ . ոտքի տակն եւս քեւերը տարածած արծիւ կլինի :



Յունաց Ափրդիտէն կամ Վեներոսն , որ լատիներէն Վեներա եւ հայերէն Աստղիկ կկոչուի , ըստ առասպելեաց ծովու փրփրատեսակ ալիքներէն ծնուած կհամարուի եւ գեղեցկութեանը համար *Ճաղկանց յշխոյ* կանուանուի : Սա կնկարուի իբրեւ ամենագեղեցիկ դիցունի ծովային չորրորտանեաց կարծր կեղևէն շինուած կառքի վերայ նստած՝ որուն երկու աղանի լծուած են , եւ մէջքը կամարածն զօտի կապած , որ շատ գեղեցիկ կնկարագրէ Հոմերոս : Նախնի Հայկազանց կուսալատութեան ժամանակ ամեն տարի օգոստոսի 6-ին կտօնուէր այս դիցունուոյն տօնը , եւ զանազան ծաղիկներով կզարդարուէր տաճարը : Սորա կուստունը Հայաստանի Աշտիշատ քաղաքին մէջ շինուած էր , որ *Սենեակ Վանագնի* կասուէր . եւ այնչափ յարգի էր Հայոց մէջ , որ ոսկի զարդերով լցուցել էին տաճարը : Գիցունուոյն Ափրդիտէ անունը Յունաց *ἄφροδ*—փրփուր եւ *δαιμα*—կանեմ բառերէն շինուած է . վասն զի կասն Ռուանոսի մէկ կարիչ արիւնը ծովու փրփուրին մէջն ընկաւ :

և անկէց ծնաւ Ափրդիտէն : Վարդավառի տօնի օրը , որ նախնի աստուածապաշտ հայկազունք սովոր էին աղանիք բուռցանել իբրև Նոյի տապանէն ելնելու յիշատակ , կռապաշտութեան ժամանակ դիցուհւոյն տօնին սկսան կատարել այն հանդէսը , որ յետոյ մեր Ս. Լուսաորիչը Գրիստոսի Պայծառակերպութեան տօնին փոխարկեց :



<sup>6</sup> *Կռնոս* , որ լատիներէն *Սատուրնոս* եւ պարսկերէն *Չրուան* կասուէր , Ռեբանոսի եւ Նատայ , այսինքն երկնի եւ երկրի որդին էր : Սա ժամանակաւ երիցազոյն եւ առաջին ջատուած կնամարտի կոոց մէջ . ուստի եւ ժամանակ կրարգմանուի :



<sup>7</sup> *Ապոդոն* , որ լատիներէն *Փերոս* եւ պարսկերէն *Միհր* կասուէր , Դիոսի որդին էր , եւ արեգական՝ բանաստեղծութեան ու երաժշտու-

րեան աստուած կհամարուեր: Սորա անունովը զրբե ամենայն տեղ կուատուն շինուած էր, որոց մէջ աւելի հռչակաւորն էր *Պիոս* կղզւոյն միջինը: — Մեր նախնեաց ժամանակ Արմաւիր քաղաքին մէջն էր սորա պղնձէ ձուլուած (*քալուած*) ոսկեցօծ արձանը՝ որ արեւմտեան պատերագմին մէջ Արտաշէս առաջինը՝ Լիւղացոց Կրիստոս քաղաւորին յաղթելէն վերջը՝ բերած էր Հայաստան:

Օր. — Օր կասուի արեգական մէկ երեւելէն մինչեւ երկրորդ երեւիլն անցած միջոցը, որ երկու գլխաւոր մաս կբաժանուի, այսինքն ՅՈՐԵՆԿ ԵՆ ԳԻՇԵՆՐ: — Յորեկն է օրուան լուսաւոր մասը, որ արեւուն ծագելէն կսկսի եւ մինչեւ մտնելը կտեւէ. իսկ զիշերը օրուան խաւար մասը, որ արեւուն մտնելէն կսկսի եւ մինչեւ ծագելը կտեւէ: — Օրուան այս երկու մասունքը մէկմէկու հաւասար չեն. վասն զի անտեանային արեւադարձէն սկսեալ մինչեւ անտեանային արեւադարձը՝ ցորեկը հետզհետէ կերկրննայ եւ գիշերը կկարճանայ. իսկ ընդհակառակն ամառնային արեւադարձէն սկսեալ մինչեւ ձմեռնային արեւադարձը՝ ցորեկը հետզհետէ կկարճանայ եւ գիշերը կերկրննայ: Արեգակը երբ այս երկու արեւագարձերուն ճիշդ մէջտեղը, այսինքն գիշերահաւասարակից կէտը հասնի, գիշեր ու ցորեկ հաւասար կլինին: — Արեւելեան ազգաց շատերը, ինչպէս Բաբելացիք, Հայք, Յոյնք եւ Ասորիք արեւը ծագելէն կսկսէին իւրեանց օրը. իսկ եգիպտացիք ու Հնովմայեցիք՝ կէս գիշերէն, որ մինչեւ ցայժմ Եւրոպացի ազգաց շատերը նոյն ժամանակէն կսկսին իւրեանց օրը: Հայոց մէջ մէկ օրուան միջոցը քսանեւչորս հաւասար մասունք բաժնելու սովորութիւնը շատ հին ժամանակէ մտած է. վասն զի ազգային հին տոմարներու մէջ անյիշատակ ժամանակներէ հետէ օրուան 24 ժամերուն հետագայ անունները տրուած կտեսնեմք՝ արեւուն ելնելէն սկսեալ.

Յորեկուան ժամերուն տնունները .

- |                 |                  |
|-----------------|------------------|
| 1. Այգ.         | 7. Շանբակող.     |
| 2. Ծայգ.        | 8. Հրակար.       |
| 3. Ծայրացեայ.   | 9. Հուր փայլեայ. |
| 4. Ճառագայրեայ. | 10. Քաղանրեայ.   |
| 5. Շառաւիղեայ.  | 11. Առաւօտ.      |
| 6. Երկրասես.    | 12. Արփող:       |

Գիշերուան ժամերուն տնունները .

- |               |                |
|---------------|----------------|
| 1. Խաւարակ.   | 7. Խօրափեայ.   |
| 2. Աղջամուղջ. | 8. Գիգակ.      |
| 3. Մրացեայ.   | 9. Լուսանեմ.   |
| 4. Շաղաւօտ.   | 10. Առաւօտ.    |
| 5. Կամաւօտ.   | 11. Լուսափայլ. |
| 6. Բաւական.   | 12. Փայլածու:  |

Հրեայք, Յոյնք, Հռովմայեցիք ու Հայք ցորեկուան տաններիւ ժամերը չորս հաւասար մաս կրածնէին՝ իւրաքանչիւր մասը երեք երեք ժամ. եւ առաջին ժամ կասէին այն միջոցին՝ որ արեւուն ելնելէն կսկսէր, երրորդ ժամ — նախընթացէն 3 ժամ վերջը, վեցերորդ ժամ — արեւը ելնելէն 6 ժամ յետոյ, իններորդ ժամ — արեւը մանելէն 3 ժամ յառաջ, ինչպէս .

„ Ի յուրբարու ժամ երրորդին  
 Բնեռեցար Տէր ի Խաչին . . .  
 Եւ ի յերրորդ ժամ գկողածինն  
 Ի յօգնութիւն եւ հողածինն “.

(ՇԱՐԱԿԱՆ.)

Նոյնպէս չորս մաս կրածնէին գիշերուան տաններ-  
 կու ժամերը, իւրաքանչիւրը երեք երեք ժամ. եւ  
 արեւը մանելէն յետոյ առաջնոյն կասէին առաջին  
 պահ, երկրորդին — երրորդ պահ, երրորդին — վեցերորդ  
 պահ ու չորրորդին — իններորդ պահ, ինչպէս որ Աւե-  
 տարանը կասէ. « Եթէ գիտէր տանուտէրն՝ յորում  
 պահու գող գայ, հսկէր եւ ոչ տայր ական հատանել  
 գաան իւրոյ » .

(ՄԱՏՔ. ԽԻ, 43).



**ՏԱՐԵԳԻՐ.** — Տարեգիր կասուի այն տառը, որով տարւոյն տօները կգանուի: Մեր հայկական 35 (Ա—Փ) տառերը՝ զատկի երեսունհինգամեայ օրերու շարժականութեան վերայ դասաւորելով, ամեն տարւոյ զատկի ամսաթուոյն հաշուէն կգանուի տարեգիրը. եւ որովհետեւ զատիկը այն երեսունեւհինգամեայ փոփոխութենէն վերջը նորէն իւր առաջին թուոյն, այսինքն մարտի 22-ին վերայ կգառնայ. պէտք է հաշուել որ երբ զատկի օրը այս ինչ քառիմ մարտի 22-ին ընկնի, այն թուոյն տարեգիրը Ա. տառը կլինի, եթէ 23-ին՝ Բ, 24-ին Գ եւ այլն, եւ այսպէս զատկի ամսաթիւերը տարեգրաց հետ յառաջ երթալով կհասնին մինչեւ ապրիլի 25-ը, որոյ տարեգիրն է Փ տառը. եւ այն օրէն, (ապր. 25) աւելի առաջ չանցնիր զատկի տօնը, որով եւ տարեգիրը դարձեալ Ա. էն կսկսի: — Օրինակ. այս տարի զատկի օրը մարտի 28-ին ընկնելով՝ տարեգիրն եւս է տառը կլինի. վասն զի մարտի 22-էն հաշուելով մեր այբուբենի 7-րդ գիրը է տառն է:

**ԵՕԹՆԵՐԵԱԿ.** — Եօթներեակ կկոչուի այն տառը որ ամբողջ տարւոյ մէջ եղած եօթներեակները կամ կիրակիները կցուցանէ, եւ այս պատճառաւ կիրակագիր եւս կասուի: Եօթներեակը գտնելու համար պէտք է մեր (Հայոց) թուականէն 1153 թիւը հանել եւ մնացածը բաժանել 28-ի վերայ, եւ յետոյ քանորդը թողելով՝ առնուլ աւելցած թիւը, եւ այնու մտնել հետագայ եօթներեկաց աղիւսակին մէջ, եւ ուր վերջանայ՝ այն տառը կլինի եօթներեակ կամ կիրակագիր, որով նոյն տարւոյ մէջ եղած կիրակիները, երկուշաբթիները, երեքշաբթիներն ու միւս օրերը դիւրապէս կյայտնուին: — Օրինակ. եթէ տարւոյս Հայոց թուականէն, այսինքն 1320-էն հանեմք 1153-ը՝ կմնայ 167. եւ եթէ այս 167-ը բաժանեմք 28-ով, քանորդը կլինի 5 եւ մնացածը 27. որով եօթներեկաց աղիւսա-

կիս առաջին խորանէն 1, 2, 3, 4 եւ այլն համարելով յառաջ երթամք, 27. երորդ խորանին մէջ Ե տառը կգանեմք, որ է տարւոյս եօթներեակը :

ԱՂԻՍԱԿ ԵՕԹՆԵՐԵԿԱՅ.

Ա	Բ	Գ	ԳԵ	Զ	Է	Ա
ԲԳ	Գ	Ե	Զ	ԷԱ	Բ	Գ
Գ	ԵԶ	Է	Ա	Բ	ԳԳ	Ե
Զ	Է	ԱԲ	Գ	Գ	Ե	ԶԷ

ՅԱՆՑԹՈՒԹԻՒՆ. — Այս աղիւսակի մէջ երկու տառով հանդիպած եօրներեկի տարին նո՞սանջ կլինի միշտ :

ՎԵՐԱԳԻՐ. — Վերադիրը արեգական եւ լուսնոյ տարեկան շրջանի տարրերութիւնն է, որ տասեւմէկ օր կհամարուի. վասն զի արեւու տարին լուսնոյ տարիէն 11 օր աւելի է. ուստի առաջին տարւոյ վերագիրը 11 է, երկրորդինը՝ 22—երրորդինը՝ 33—յօրմէ 30-ը հանելով կմնայ 3, չորրորդինը՝ 14—հինգերորդինը 25 եւ այլն : — Վերագիրը գիւրին կերպով գանելու համար մեր ազգային թուականէն պէտք է հանել 1162, եւ մնացածը բաժանել 19-ով, եւ ինչ որ աւելնայ՝ կարգաւ նայել հետագայ աղիւսակին մէջ, եւ սր խորանին մէջ յաւելեալ թիւը վերջանայ, այն է տարւոյն վերագիրը :—Օրինակ. եթէ տարւոյս Հայոց 1320 թուականէն հանեմք 1162-ը, կմնայ 158, Այս մնացեալ թիւը եթէ բաժանեմք 19-ով (լուսնի շրջանով), քանորդը կլինի 8 եւ մնացորդը 6, որ վերագրաց աղիւսակին ծայրէն համրելով՝ երբ 6-րդ խորանը հասնեմք, ժժ=19 թիւը կգանեմք, որ է տարւոյս վերագիրը :

ԱԳԻՒՍԱԿ ՎԵՐԱԳՐԱՅ.

ԻԳ	Ե	ԺԶ	ԻԷ	Ը	ԺԹ	Լ	ԺԱ	ԻԲ	Գ
ԺԳ	ԻԵ	Զ	ԺԷ	ԻԸ	Թ	ԻԱ	Բ	ԺԲ	—

ԱՐՆԵՒՈՒ ՇՐՋԱՆ. — Առեռու շրջան կամ Շրջան արեգակնային կոչուածը 28 տարուան միջոց է, որոյ վերջանալէն յետոյ՝ նոյն թուերուն կգառնան, այսինքն կիրակիներն ու շաբաթուան օրերը նոյն թուերովը կամ տառերովը կնշանակուին, ինչ որ առաջ կը գրուէին: — Վերը գրուած եօթներեկաց աղիւսակէն (էջ 118) յայտնի է արդէն որ արեգական այս 28-ամեայ շրջանը՝ եօթնական թուով չորս կարգի եւ 28 խորանի վերայ բաժանելով, 28 տարիէն առաջ չէ կարող անդրադառնալ:

ԻՆՆԵՒՍԱՍՆԵՐԵԱԿ. — Շրջան յունի եւս կասուի այս իննեւտասնամեայ միջոցը, որոյ վերջանալուն պէս լուսնի նորմունքն ու լրմունքը դարձեալ նոյն օրէն կսկսին, թէ եւ ոչ նոյն ժամէն ու վայրկենէն: Իննեւտասներեակը գտնելու համար մեր ազգային թուականէն 1142-ը հանելէն յետոյ՝ մնացածը 19-ով բաժանելու է, աւելցած թիւը ինկեսասներեակ կլինի տարւոյն: — Օրինակ. տարւոյս Հայոց 1320 թուականէն եթէ հանեմք 1142 կմնայ 178, որ այս եւս բաժանելով 19-ի վերայ, քանորդը կլինի 9 եւ մնացորդը 7, որ տարւոյս իննեւտասներեակն է: Բայց թէ ինչո՞ւ համար մեր օրացուցին սկիզբը՝ իննեւտասներեակը 8 գրուած է եւ ոչ 7, պատճառն այն է որ մեր տարին նահանջ չունենալով՝ իւր սկսուած ժամանակէն (552) կամ եղիվարդեցի Մովսէս կաթողիկոսի օրերէն մինչեւ ցայժմ մէկ տարիի չափ առաջ անցած է: Բայց

որպէս զի ստոյգ կերպով գիտնամք թէ անսխալ է մեր այս հաշիւը եւ կամ քանիւրորդ լուսնի շրջանն է այժմ, պէտք է աշխարհիս ստեղծման թուականը, այսինքն 7379-ը բաժանեմք 19-ի վերայ, որոյ քանորդը կլինի 388 եւ մնացորդը 7: Քանորդը կցուցրնէ որ մինչեւ 1871 թուականը 388 լուսնի շրջան անցած է եւ 389-երորդն սկսած է. իսկ մնացորդ 7 թիւը կցուցրնէ որ 1871 թուականին եօթներորդ տարին է այժմու լուսնի շրջանին: — Այս լուսնի շրջանին գանողն ու կարգողն եղաւ Մեսոն ակթենացին Քրիստոսէ 433 տարի առաջ, տեսնելով որ այս ինչ տարւոյ յունուարի 1-ին եղած լուսնի ծնունդը, տասնեւինը տարիէն վերջը դարձեալ նոյն օրը կհանդիպի: Լուսնի եւ արեւու շրջանները մէկմէկու հետ բազմապատկելով 532 մեծ շրջանը կարտագրեն, վասն զի այս երկու շրջանները ի միասին սկսելով՝ 532 տարիէն յառաջ երբէք մէկմէկու չեն հանդիպիր: — Օրինակ. մեք արդէն վերը տեսանք որ շրջան արեգակս կասուի 28 տարուան միջոցը, իսկ շրջան լուսնի 19 տարուայ միջոց. արգ եթէ այս երկու այլ եւ այլ թիւերը բազմապատկեմք  $28 \times 19$ , արտագրեալը կլինի 532, որ մեծ շրջան, շրջան հինգհարիւրեկի կամ հինգհարիւրեակ կասուի, եւ որոյ վերայ հիմնուած է նաեւ մեր տօնացոյցը. վասն զի 532 տարիէն յետոյ, դարձեալ նոյն օրերը, տօներն ու ամսաթուերը կուգան, ինչ որ 532 տարի առաջ էին:

**ՈՍԿԵԹԻԻ.**— Աթենացիք ոսկերիս անուանեցին լուսնի շրջանը. վասն զի նոքա Մետոն աստղաբաշխի նոր ու երեւելի գիւտին վերայ զարմանալով՝ քաղաքին հրապարակին մէջ մէկ մարմարիոնէ կոթող կանդնեցին (Քրիստոսէ 432 տարի յառաջ), եւ վերան իւրաքանչիւր տարւոյ լուսնի շրջանին թիւն սկսան օսկիէ գլխատառով գրել, եւ այս պատճառաւ ոսկերիս ասուեցաւ, որ մինչեւ ցայժմ գործածական է լատինացւոց մէջ:

ԹՈՒՒԱԿԱՆՔ. — Թուականը մէկ այլ եւ այլ հաշիւ է իւր պէս պէս սկսուածքովը, ինչպէս

Հրէիցը, որ աշխարհիս ստեղծմանէն կսկսի.

Յունացը, որ ողիմպիական խաղի սկիզբէն կը համրուի (1).

Սելեւկիացւոցը, որ Մեծին Աղեքսանդրի մահուանէն վերջը կսկսի.

Հռովմայեցւոցը—Հռովմ քաղաքի շինութենէն (753).

Քրիստոնէիցը — Քրիստոսի ծննդէնէն.

Մեր ազգային (մեծ) թուականը — Հին տումարի նորոգութենէն, որ Քրիստոսի 552 թուականին եղիվարդեցի Մովսէս Բ կաթողիկոսը կարգի դրաւ.

Փոքր կամ Ազարիայի թուականը — նոր Զուղայի շինութենէն (1615).

Իսկ Տաճկացը՝ իւրեանց ամիրապետէն (Մէհէմմետէն), որ Քրիստոսի 622 թուականէն կսկսի:

Ուստի ներկայ 1871 տարւոյս սկիզբը,

Հրէից թուականն է . . . . .	5631
Ողիմպիական կամ Հին Յունաց թուականը .	2647
Սելեւկիացւոցը . . . . .	2178
Հռովմայեցւոցը . . . . .	2620
Մեր ազգային (մեծ) թուականը. . . . .	1320
Փոքր կամ Ազարիայի թուականը. . . . .	255
Տաճկացը . . . . .	1287

(1) Արզնանօրդաց վերադառնալէն յետոյ՝ Յոյնք Հերքիւլեայ առաջնորդութեամբը (Քրիստոսէ 1346 տարի յառաջ) տեսակ մի խաղ հնարեցին, որոյ տեղը Կորնթոսի մերձակայքը ողիմպիական Գիոսի արձանին մօտ լինելով՝ ողիմպիական խաղ անուանեցին: Այն խաղը չորս տարին կամ յիսուն շաբաթը մէկ անգամ կխաղային Յունաստանի երիտասարդաց քաջերը. քայց որովհետեւ խաղին մէջ Կորնթոն եղիմնացին մեծամեծ քաջութեամբք յաղթող գտնուեցաւ. (ողիմպիական խաղերուն 28-րդ անգամը), Յոյնք այն քաջին յիշատակը պահելու համար՝ ողիմպիական բուականն սկսան Քրիստոսէ 776 տարի յառաջ:

Յ Ո Ւ Ց Ա Կ

ՀԱՆՈՒՅՑ ՏՈՎԱԾՆԱՅ 100 ԲՈՒՐԵԻ ԳՐԱՄԱԳԱԿՈՑ.

Մ Է Կ Ս Ա Ր Ի Ն

ԸՍՏ ՀԱՆՈՒՅՑ.

	4 <sup>0</sup> / <sub>0</sub>		5 <sup>0</sup> / <sub>0</sub>		6 <sup>0</sup> / <sub>0</sub>		7 <sup>0</sup> / <sub>0</sub>		8 <sup>0</sup> / <sub>0</sub>		9 <sup>0</sup> / <sub>0</sub>		10 <sup>0</sup> / <sub>0</sub>	
	բ.	կ.	բ.	կ.	բ.	կ.	բ.	կ.	բ.	կ.	բ.	կ.	բ.	կ.
1 ամսուան . . . . .	—	33 <sup>1</sup> / <sub>3</sub>	—	44 <sup>2</sup> / <sub>3</sub>	—	50	—	58 <sup>1</sup> / <sub>3</sub>	—	66 <sup>2</sup> / <sub>3</sub>	—	75	—	83 <sup>1</sup> / <sub>3</sub>
2 . . . . .	—	66 <sup>2</sup> / <sub>3</sub>	—	83 <sup>1</sup> / <sub>3</sub>	1	—	1	16 <sup>2</sup> / <sub>3</sub>	1	33 <sup>1</sup> / <sub>3</sub>	1	50	1	66 <sup>2</sup> / <sub>3</sub>
3 . . . . .	1	—	1	25	1	50	1	75	2	—	2	25	2	50
4 . . . . .	1	33 <sup>1</sup> / <sub>3</sub>	1	66 <sup>2</sup> / <sub>3</sub>	2	—	2	33 <sup>1</sup> / <sub>3</sub>	2	66 <sup>2</sup> / <sub>3</sub>	2	—	3	33 <sup>1</sup> / <sub>3</sub>
5 . . . . .	1	66 <sup>2</sup> / <sub>3</sub>	2	8 <sup>1</sup> / <sub>3</sub>	2	50	2	91 <sup>2</sup> / <sub>3</sub>	3	33 <sup>1</sup> / <sub>3</sub>	3	75	4	16 <sup>2</sup> / <sub>3</sub>
6 . . . . .	2	—	2	50	3	—	3	50	4	—	4	50	5	—
7 . . . . .	2	33 <sup>1</sup> / <sub>3</sub>	2	91 <sup>2</sup> / <sub>3</sub>	3	50	4	8 <sup>1</sup> / <sub>3</sub>	4	66 <sup>2</sup> / <sub>3</sub>	5	25	5	83 <sup>1</sup> / <sub>3</sub>
8 . . . . .	2	66 <sup>2</sup> / <sub>3</sub>	3	33 <sup>1</sup> / <sub>3</sub>	4	—	4	66 <sup>2</sup> / <sub>3</sub>	5	33 <sup>1</sup> / <sub>3</sub>	6	—	6	66 <sup>2</sup> / <sub>3</sub>
9 . . . . .	3	—	3	75	4	50	5	25	6	—	6	75	7	50
10 . . . . .	3	33 <sup>1</sup> / <sub>3</sub>	4	16 <sup>2</sup> / <sub>3</sub>	5	—	5	83 <sup>1</sup> / <sub>3</sub>	6	66 <sup>2</sup> / <sub>3</sub>	7	50	8	33 <sup>1</sup> / <sub>3</sub>
11 . . . . .	3	66 <sup>2</sup> / <sub>3</sub>	4	58 <sup>1</sup> / <sub>3</sub>	5	50	6	41 <sup>2</sup> / <sub>3</sub>	7	33 <sup>1</sup> / <sub>3</sub>	8	25	9	16 <sup>2</sup> / <sub>3</sub>
12 ամսուան կամ մեկ տարուան . . . . .	4	—	5	—	6	—	7	—	8	—	9	—	10	—

## ՅՈՒՅԱԿ

Կ Ա Յ Ս Ե Ր Ա Կ Ա Ն

և ևկեղեցական տնից Ռուսաց, յորս փակին ամենայն դասաստանակցիք և ուսումնարանք ի 1871 ամիս.

## ՅՈՒՆՈՒՍՐ

- 1 Ուր. Կաղանդ.
- 6 Դշ. Յայտնութիւն Տեառն.

## ՓԵՏՐՈՒՍՐ

- 2 Դշ. Տեառնընդառաջ.
- 5 և 6 Ուր. և Շր. առուրք Բուն բարեկենդանի.
- 19 Ուր. Օր Գանակալութեան Վեհափառ Ինքնակալին ամենայն Ռուսաց ԱԼԵԲՍԱՆԳՐԻ ՆԻԿՈԼԱՅԵՎԻՉ.
- 26 Ուր. Ծնունդ Վեհափառ Կայսրորդայն Թագածառանգ Մեծի Իշխանին ԱԼԵԲՍԱՆԳՐԻ ԱԼԵԲՍԱՆԳՐՈՎԻՉ.

## ՄԱՐՏ

- 25 Աւագ Հինգշաբաթի, Աւետուան Ս. Աստուածածնի.
- 26 և 27 Աւագ Ուրբաթ և Շաբաթ.
- 28 Կիր. Չատիկ.
- 29-էն Մարտի մինչ ց3 Ապրիլի Չատակական շաբաթ.

## ԱՊՐԻԼ

- 4 Կիր. Յիշատակ ազատութեան Վեհափառ Կայսեր ամենայն Ռուսաց ԱԼԵԲՍԱՆԳՐԻ ՆԻԿՈԼԱՅԵՎԻՉ ի մեծ վտանգէ.
- 17 Շր. Ծնունդ Վեհափառ Ինքնակալին ամենայն Ռուսաց ԱԼԵԲՍԱՆԳՐԻ ՆԻԿՈԼԱՅԵՎԻՉ.

## ՄԱՅԻՍ

- 6 Եշ. Համբարձուան Քրիստոսի.
- 9 Կիր. Փոխադրութիւն նշխարաց Նիկողայոսի սրանջ. հայրապետին.
- 16 և 17 Կիր. և Բշ. Երրորդութիւն և Հոգեզարուստ.

### ՅՈՒՆԻՍ

29 Գշ. Առաքելոցն Պետրոսի և Պողոսի.

### ՅՈՒԼԻՍ

22 Եշ. Անուանակոչութիւն Վենափառ. Կայսրուհւոյն ՄԱՐԻԱՅ ԱԼԵԲ-  
ՍԱՆԳՐՈՎՆԱՅ.

### ՕԳՈՍՏՈՍ

- 6 Ուր. Վարդափառ.
- 15 Կիր. Վերափոխումն.
- 26 Եշ. Թագադրութիւն Վենափառ. Կայսեր Ինքնակալի ամենայն Ռու-  
սաց ԱԼԵԲՍԱՆԳՐԻ ՆԻԿՈԼԱՅԵՎԻՉ և Վենափառ. Կայսրուհւոյն  
ՄԱՐԻԱՅ ԱԼԵԲՍԱՆԳՐՈՎՆԱՅ.
- 29 Կիր. Գլխատումն Յովնաննու. Կարապետին.
- 30 Բշ. Տօն անուան Վենափառ. Կայսեր Ինքնակալի ամենայն Ռուսաց  
ԱԼԵԲՍԱՆԳՐԻ ՆԻԿՈԼԱՅԵՎԻՉ և Ժառանգի նորին ԱԼԵԲՍԱՆԳՐԻ  
ԱԼԵԲՍԱՆԳՐՈՎԻՉ.

### ՍԵՊՏԵՄԲԵՐ

- 8 Գշ. Ծնունդ Ս. Աստուածածնի.
- 14 Գշ. Խաչվերաց.
- 26 Կիր. Յովնաննու. աւետարանչին.

### ՀՈԿՏԵՄԲԵՐ

- 1 Ուր. Պաշտպանութիւն Սուրբ Աստուածածնի.
- 22 Ուր. Տօն հրաշագործ պատկերի Ս. Աստուածածնին որ ի Խազան.

### ՆՈՅԵՄԲԵՐ

- 14 Կիր. Ծնունդ Վսեմ. Դշխոյին և Մեծի Ժառանգուհւոյն ՄԱՐԻԱՅ  
ՅԷՅՅՈՒՈՐՈՎՆԱՅ.
- 21 Կիր. Ընծայումն Սուրբ Աստուածածնի.

### ԳԵԿՏԵՄԲԵՐ

- 6 Բշ. Նիկողայոսի սքանչելագործ հայրապետին.
- 25, 26 և 27 Շր. Կիր. և Բշ. առուրք Ծննդեան Տևառն.



## ԿԱՅՍԵՐԱԿԱՆ

### Ա. Զ. Գ. Ա. Տ Ո Հ Մ Ռ Ո Ւ Ս Ա Յ.

Վեհափառ Կայսր Ալեքսանդր Նիկոլաևիչ 1818, ամբարձաւ ի զաջ ԿայսերուՅեանն ի 18 փետրուարի 1855.

Վեհափառ Կայսրուհին ՄԱՐԻԱ Ալեքսանդրովնա, ծնաւ ի 27 յուլիսի 1824.

Կայսերազն Մեծ Իշխանն եւ Թագառանգ Ալեքսանդր Ալեքսանդրովիչ, ծնաւ ի 26 փետրուարի 1845.

Կայսերազն Մեծ Իշխանուհի ՄԱՐԻԱ Ֆելիցոլովնա, ծնաւ ի 14 նոյեմբերի 1847.

Կայսերազն Մեծ Իշխան Նիկոլաև Ալեքսանդրովիչ, ծնաւ ի 6 մայիսի 1868.

Կայսերազն Մեծ Իշխան Ալեքսանդր Ալեքսանդրովիչ, ծնաւ ի 26 մայիսի 1869.

Կայսերազն Մեծ Իշխան Վլադիմիր Ալեքսանդրովիչ, ծնաւ ի 10 ապրիլի 1847.

Կայսերազն Մեծ Իշխան Ալեքսիս Ալեքսանդրովիչ, ծնաւ ի 2 յունուարի 1850.

Կայսերազն Մեծ Իշխան Սերգեյ Ալեքսանդրովիչ, ծնաւ ի 29 ապրիլի 1857.

Կայսերազն Մեծ Իշխան Պոլոս Ալեքսանդրովիչ, ծնաւ ի 21 սեպտեմբերի 1860.

Կայսերազն Մեծ Իշխան Կոստանդին Նիկոլաևիչ, ծնաւ ի 9 սեպտեմբերի 1827.

Կայսերազն Մեծ Իշխանուհի Ալեքսանդրու Իոսեֆովնա, ծնաւ ի 26 յունիսի 1830.

Կայսերազն Մեծ Իշխան Նիկոլաև Կոստանդինովիչ, ծնաւ ի 2 փետրուարի 1850.

Կայսերազն Մեծ Իշխան Կոստանդին Կոստանդինովիչ, ծնաւ ի 10 օգոստոսի 1858.

Կայսերազն Մեծ Իշխան Դեմետր Կոստանդինովիչ, ծնաւ ի 1 յունիսի 1860.

Կայսերազն Մեծ Իշխան Վեռապետրովսկի Կոնսուլ-Գեներալի, ծնաւ ի 1 յուլիսի 1862.

Կայսերազն Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեւիչ Երեցն, ծնաւ ի 27 յուլիսի 1831.

Կայսերազն Մեծ Իշխանուհի Ալեքսանդրովնա Պետրովնայ, ծնաւ ի 21 մայիսի 1838.

Կայսերազն Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեւիչ Կրտսերն, ծնաւ ի 6 Նոյեմբերի 1856.

Կայսերազն Մ. Իշ. Պետրոս Նիկոլայեւիչ, ծն. ի 10 յնվ. 1864.

Կայսերազն Մեծ Իշխան Միքայիլ Նիկոլայեւիչ, ծնաւ ի 13 Հոկտեմբերի 1832.

Կայսերազն Մեծ Իշխանուհի Օլգա Յեոդորովնայ, ծնաւ յ 8 սեպտեմբերի 1839.

Կայսերազն Մեծ Իշխան Նիկոլայ Միքայիլովիչ, ծնաւ ի 14 ապրիլի 1859.

Կայսերազն Մեծ Իշխան Միքայիլ Միքայիլովիչ, ծնաւ ի 4 հոկտեմբերի 1861.

Կայսերազն Մ. Իշ. Գեորգ Միքայիլովիչ, ծն. ի 11 օգ. 1863.

Կայսերազն Մեծ Իշխան Ալեքսանդր Միքայիլովիչ, ծնաւ ի 1 ապրիլի 1866.

Կայսերազն Մեծ Իշխան Սերգեյ Միքայիլովիչ, ծնաւ ի 25 սեպտեմբերի 1869.

Կայսերազն Մ. Իշխ. Ելենա Պաւլովնա, ծն. ի 28 դեկտ. 1806.

Կայսերազն Մ. Իշ. Մարիա Ալեքսանդրովնա, ծ. ի 5 հոկ. 1853.

Կայսերազն Մ. Իշ. Մարիա Նիկոլայեւնա, ծն. ի 6 օգ. 1819.

Կայսերազն Մեծ Իշխանուհի Ե. Թագուհի Վիրաճերբգի Օլգա Նիկոլայեւնա, ծնաւ յ 30 օգոստոսի 1822, հարսնացեալ արքային Վիրաճերբգի Կարոլսի Փրեդերիկոսի Աղեքսանդրի.

Կայսերազն Մ. Իշ. Օլգա Կոնսուլ-Գեներալնա, ծն. ի 22 օգ. 1851.

Կայսերազն Մեծ Իշխանուհի Վերա Կոնսուլ-Գեներալնա, ծնաւ ի 4 փետրուարի 1854.

Կայսերազն Մեծ Իշխանուհի Աննա Միքայիլովնա, ծնաւ ի 16 յուլիսի 1860.

Կայսերազն Մ. Իշխ. Կոնսուլ-Նեյ Միքայիլովնա, ծն. ի 16 օգ. 1827, հարսնացեալ դքսին Մեկլենբուրգ-Շտրեկիցի Գեորգայ.

ԱԶԳԱՅԻՆ

ՏԵՍՉՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Ի ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՆԻՆ.

ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԾԱՅՐԱԴՈՅՆ ՊԱՏՐԱՐԲ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՏԷՐ ԳԷՈՐԳ Գ,

Սրբազնագոյն Կաթողիկոս Կամազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի.

ԱՆԴԱՄԲ ՍԻՆՆՆՈՒԹՅՈՒՆ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՆԻՆ.

Սարգիս Արքեպիսկոպոս Զաւալեան, Յովնանէս Արքեպիս. Ասյանեան, Գրիգոր Եպիսկոպոս Սագինեան, Գարրիկ Եպիսկոպոս Այվազեան, Թադևոս Եպիսկոպոս Զիւնական, Գրիգոր Եպիսկոպոս Մուշեղեան, Պօղոս Վարդապետ Տեր Մարգարեան, Փրոկուրոր կամ Գործակալ Սաաւ. Սովեանիկ Կարապետ Յովսէփեան Վասակեանց, Առեւնադպիր Սուքիան Ստեփանոսեան Թաղիանոսեանց.

Ի ՎԻՃԱԿԻՆ ՆԱԽԻՋԵԻԱՆԻ ԵՒ ԲԵՍՍԱՐԱՐԻՈՅ.

Վիճակաւոր Առաջնորդ ՏԷՐ ԳԷՈՐԳ Արքեպիսկոպոս Մկրտչեանց. Անդամք վիճակային Կոնստանտինոպոլիսի. Սարգիս Վարդապետ Տեր Գառապրեան, Գաւիթ Աւագ քահանայ Շանվերտեանց, Մարտիրոս Աւագ քահանայ Տեր Գաւրեանց, Առեւնադպիր Ներսէս Յակոբեանց.

ԱՆԴԱՄԲ ՀՈԳԵԻՈՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆՑ.

Ի Պետերբուրգ. Եփրեմ Վարդապետ Ալբնեանց, Գրիգոր քահանայ Տեր Գրիգորեանց.

Ի Մոսկուա. Յարութիւն Աւագ քահանայ Կեօքչեանց.

Ի Գրիգորուպոլիս. Գաւիթ Աւագ քահանայ Շանինեանց, Կարապետ քահանայ Մերճանեանց.

Ի Նոր Նոսիլիէւան. Դեորզ Վարդապետ Մարտիրոսեանց, Պօղոս Աւագ քահանայ Խոճեանց, Խաչատուր Աւագ քահանայ Զարիֆեանց.

Ի Քիչկեւ. Մարտիրոս Աւագ քահանայ Բշլալեանց, Խաչատուր քահանայ Մոզայեանց.

Ի ՎԻՃԱԿԻՆ ԱԺՏԷՐԻՍԱՆԻ.

Վիճակաւոր Առաջնորդ ՏԷՐ ԳԷՈՐԳ Արքեպիս. Վենապետեանց.

Անդամք վիճակային Կոնստանտինոպոլիսի. Յովսէփ Աւագ քահանայ Բունիարեանց, Սիմեոն քահանայ Ղարիբջանեանց, Գաւիթ քահանայ Դադաշեանց, Առեւնադպիր Ա. Բեկմանեանց.

### Ի ՎԻՃԱԿԻՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԵՏԻ.

*Վիճակաւոր Առաջնորդ ՏէՐ ՄԱԿԱՐ Արքեպիսկոպոս.*

*Անդամք վիճակայիև Կոնստանտնուպոլսի, Իսանկ Աւագ քանանայ Սահառունի, Մկրտիչ Աւագ քանանայ Տէր Գրիգորեան, Յարութիւն քանանայ Սուզանաճեանց. Ասեկադոցիւր Արի Տէր Մինասեանց.*

ԱՆԿԱՄՔ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆՑ.

*ՅԱխչիսայ. Սուքիաս Վարդապետ Պարզեանց, Եղիա Աւագ քանան. Համբարձումեանց, Գեորգ Աւագ քանանայ Յովակիմեանց.*

*Ի Գորի. Մամբրէ Վարդապետ Սանասարեանց, Ստեփան քանանայ Տէր Ստեփանեանց, Միքայել քանանայ Սիմեոնեանց.*

*Ի Գանձակ (Ելիսաւետապօլ). Գրիգոր Վարդապետ Տէր Ստեփանոսեանց, Ատուածատուր քան. Յարութիւնեանց, Գրիգոր քանան. Թումանեանց:*

### Ի ՎԻՃԱԿԻՆ ԵՐԵՒԱՆԱՅ.

*Փոխանորդ Առաջնորդիև, ՄԵՍՐՈՊ Վարդապետ Սմբատեանց.*

*Անդամք վիճակայիև Կոնստանտնուպոլսի. Գրիգոր Վարդապետ Տէր Գրիգորեանց, Պօղոս Աւագ քանանայ Տէր Աւետիսեանց, Խաչատուր քանանայ Բարախանեանց, Գեորգ քանանայ Թաղիանոսեանց.*

ԱՆԿԱՄՔ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆՑ.

*Ի Տարև. Յովաննէս Վարդապետ Ղալամեանց, Յովակիմ Վարդապետ Ղամբեանց, Սիմեոն քանանայ Ուստափօլեանց.*

*Ի Հին Նախիչևան. Արիստակէս Վարդ. Սեդրակեանց, Մկրտիչ քանանայ Պարզեանց, Ստեփանոս քանանայ Մանտեսի Փանոսեանց.*

*ՅԱլեքսանդրոպօլ. Կարապետ Վարդ. Տէր Գալստեանց, Յովսէփ Աւագ քան. Կոստանեանց, Մարտիրոս քան. Մանտեսի Կարապետեանց.*

### Ի ՎԻՃԱԿԻՆ ՂԱՐՍԲԱՂՈՒ.

*Վիճակաւոր Առաջնորդ ՏէՐ ՍՍԳԻՍ Արքեպիսկոպոս Ջալալեանց.*

*Անդամք վիճակայիև Կոնստանտնուպոլսի. Յովակիմ Վարդապետ Տէր Գրիգորեանց, Յարութիւն քանանայ Մեկրոնեանց, Սիմեոն քանան. Տէր Իսրայելեանց, Կարապետ քանանայ Տէր Դանիէլեանց.*

ԱՆԿԱՄՔ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆՑ.

*Ի Նուխի. Արիստակէս Վարդապետ Դուրեանց, Աւագ քանան. Տէր Աւագեանց, Սեմեոն քանանայ Տէր Պօղոսեանց.*

### Ի ՎԻՃԱԿԻՆ ՇԱՄՍԻՒՈՅ.

*Վիճակաւոր Առաջնորդ ՏէՐ ԱՆԳՐԷՍԱՍ Արքեպիսկոպոս.*

*Անդամք վիճակայիև Կոնստանտնուպոլսի. Մկրտիչ քանանայ Սաբունջեան, Սարգիս քանանայ Փիրվերդեանց.*

## ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԻՒՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ.

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Կ.-Պօլսոյ Տէր ՄԿՐՏԻԶ Արքեպիսկոպոս Խրիմեան, Նախագան Կրօնական ժողովոյն եւ Ազգային վարչութեան .

*Փոխանորդ Պատրիարքի*, Կարապետ Ծայրագոյն Վարդապետ Սերօբեան .

*Պաշտօնակալք Դիւանատան Պատրիարքի*, Գեորգ Գրիգորեան, Ա զրագիր Տաճկերենի. Ալեքսան Սազայեան, Գործակատար. Թովմաս Փափագեան, Դիւանադպիր Խառն ժողովոյ. Բարրողիմեոս Թեյեան, Բ զրագիր Հայերենի եւ Դիւանադպիր Տնտեսական Խորհրդոյ. Կարապետ Խաչատրեան, Բ զրագիր Տաճկերենի. Գալուստ Տէր-Պօղոսեան, Դիւանադպիր Գառաստանական Խորհրդոյ.

Անդամք Կրօնական ժողովոյն — անձինք 13. Անդամք Բաղաքական ժողովոյն — անձինք 20. Անդամք Ընդհանուր ժողովոյն — անձինք 66. Անդամք Ուսումնական ժողովոյն — անձինք 7. Թիւ առաջնորդաց գտանելոց ընդ իշխանութեամբ Ս. Պատրիարքին Կ.-Պօլսոյ — անձինք 52, այսինքն 32 եպիսկոպոսք եւ 20 վարդապետք.

### ԳՂԵԱՒՈՐ ՊԱՇՏՈՆԱՏԵԱՐԲ Ի ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՏԱՀԱՅՑ.

*Անդամք Անքեամբ Առլիկչի* (յԱրդարութեան Ատենին). — Գասպար Էֆենտի Գասպարեան, Յովսէփ Էֆ. Վարդանեան, Յովնաննեա Էֆենտի Վանանեան.

*Անդամք Շուրայի Տէպիքի* (յԱրքունի Խորհրդարանին). — Արքին Էֆենտի Տատեան, Միհրան Էֆ. Տիգեան, Պետրոս Էֆ. Գույումճեան, Պօղոս Էֆ. Մարրեան, Սարգիս Էֆ. Աղարեկեան, Յովնաննեա Էֆենտի Թըկըրեան, Յովնաննեա Էֆ. Սարըզեան.

*Խարիճիկչի* (ի Նախարարութեան Արտաքին Գործոց). — Սարգիս Էֆենտի Համամճեան, Ընդհանուր քարտուղար արտաքին ըրբակցութեանց. Գ. Ս. Օտեան Էֆենտի, Խարիճիկ Բեաքիպի.

### Ի ԳՐԱՆՈՅԻՆ ԱՐՏԱԲԻՆ ԹՂԹԱԿՅՈՒԹԵԱՆՑ.

*Դիւանապետ Յովնաննեա Նուրեան. Փոխանորդ դիւանապետի Կոստանդ Կոտտանդեան. Համարակալ Գրիգոր Խըտըրեան. Անդամք 8.*

### Ի ԳՐԱՆՈՅԻՆ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԵԱՆՑ.

*Տեսուչ Ստեփանոս Արզումանեան. Ծղեակաւ տեսչի Ստեփան Զայեան. Անդամք 13.*

Ի ԳՐԱՆՈՅԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆՑ.

Անդրանիկ Մ. Նառչեան, Գասպար Թօքատեան, Մկրտիչ Թեմակ-  
քիճեան, Յակօր Տիվիքճեան, Յովսէփ Թընկերեան, Նիկողայոս Պարոն-  
եան, Նշան Անրվերեան, Պետրոս Տէր-Երեմեան.

Ի ԳՐԱՆՈՅԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ.

Անդամք.—Պօղոս Պառնասեան, Արքայաճամ Ալբուսրարմաք, Բարբիկ  
Հիւնքեարաբէկեանեան, Իլիաս Տեմիրճիպաշեան, Մինրան Բարամաճեան,  
Յովակիմ Բեիզեան.

Տեսուչ Արտարին Գործոց Ի Ուռնուզ Յովհաննէս Խորասանճեան.

Ի ԴԱՏԱՐԱՆԻՆ ԾՈՎԱՅԻՆ ԱՌԵՒՏԻՈՅ.

Անդամք.—Յովհաննէս Յովակիմեան, Բաւլաքի Հաննէեան, Պօղոս  
Պոյաճեան, Յովհաննէս Թօքատեան.

Ի ՀՐԱԶԻՆԱՐԱՆԻՆ.

Առաքել էֆենտի Տատեան եւ Թորոս պէյ Սիտակեան.

ԱՆԴԱՄՔ ԶԱՆԱԶԱՆ ԺՈՂՈՎՈՅ.

Մուտքիք (յՈւսումնական ժողովոյն).—Միւնիք էֆենտի, Նախագահ  
Ուսումնական ժողովոյն. Փերբէք, օգնական նախագահի. Անդամք  
Սիմոն պէյ, Արքիմ Սարաֆեան, քննիչ զրոց. Արքիմ Թէրզեան, Տե-  
սուչ անտառաց. Գաւիթ Կեօնճեան, քարտուղար Ի Նաֆիէ.

Թիմարէք (յԱռեւտրական ժողովոյն). — Օհաննէս էֆ. Սուրենեան,  
նախագահ Գ առնին. Թովմաս Խորասանճեան եւ Սիմոն Նարինեան,  
անդամք Ա առնին. Տիզրան Եռեսուֆեան, անդամ Բ առնին. Յով-  
հաննէս Էմինեան, անդամ սննկական ժողովոյն. Ստեփան Գարագա-  
շեան, առննադպիր. Գարրիէլ Գարրիէլեան, օգնական առննադպիր.  
Պօղոս Պեզճեան, նաւաքիչ դատի.

Նախագահ առեւտրական առնինի Չմիւռնիոյ Մ. Աղաբոն էֆենտի.

Մաշիշէյի (Ի Նախարարութեան Գանձուց Տէրութեան).— Յովհաննէս  
էֆենտի Չամչեան ընդհանուր վերատեսուչ հաշուակալութեանց. Տիրան  
պէյ Ալեքսանեան եւ Գեորգ պէյ Բազարատեան, անդամք հաշուակա-  
լական ժողովոյն.

Ի Մարառասն Ղարաբիոյ. Տեսուչ Միքայէլ էֆենտի Փորրուգայեան.  
Բարտուղարք Քերեատճեան Մկրտիչ եւ Պետրոս. Բննիչ վաճառելի  
նիւրոց Գրիգոր Վիչենեան. Անդամ զինուորական ժողովոյն Ներսէս  
էֆենտի Տատեան. Դիւանապետ եւ առաջին բարգձման զրանոցին Աե-  
րասբէրի Գրիգոր էֆենտի Մարկոսեան. Անդամ զրանոցին Արքիմ  
էֆենտի Խանտամեան.

ՊԱՏՐԻԱՐԹՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ.

Ամենապատիւ ԵՍՍՅԻ Արքեպիսկոպոս, Պատրիարք Ս. Արտոյն.

Վրբանէս Վարդապետ, տեղապահ Պատրիարքի.

Միարսէք Արտոյն. Եպիսկոպոսք 3, Վարդապետք 3է.

### ԹԻԻ ԲՆԱԿԶԱՅ ՌՈՒՍՍԱՍՏԱՆԻ.

(Ըստ նոր աշխարհագրաց.)

Ռուսք 46 միլիոն. Լեհք 4 միլիոն. Սերուիացիք եւ Բուլղարք 100 հազար. Լիբուանացիք 2 միլիոն. Գերմանացիք եւ Շուետք 800 հազար. Հրեայք 2 միլիոն. Հայք 1 միլիոն 200 հազար. Մոլդաւիացիք 400 հազար. Յոյնք 70 հազար. Գնչուտք (Բոշայք կամ Չինկեանէք) 100 հազար. Ֆինք 4 միլիոն. Սիբերիոյ բնակիչները 5 միլիոն 300 հազար. Վրաստանի եւ լեռնային բնակիչները 3 միլիոն. եւրոպացի գաղթականք եւ բնակիչք Թուրքեստանի 8 միլիոն. Ընդ ամենայն = **76,970,000.**

### ԹԻԻ ԲՆԱԿԶԱՅ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ.

Ռուսելի 10,510,000. Մոլտովայաքիա 4,605,510. Սերուիա 4,222,000. Գարատաղ 100,000. Լիբանան, Փոքր Ասիա եւ Միջագետք 11,187,000. Հայաստան եւ Քիւրտիստան 5,565,490. Եգիպտոս եւ Ափրիկէ 4,840,000. Ընդ ամենայն = **37,930,000.**

### ԹԻԻ ԲՆԱԿԶԱՅ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ.

Տաճիկք 482 հազար. Հայք 195,359. Յոյնք 136,864. Հրեայք 34,655. Այլեւայք 111,122. Ընդ ամենայն = **960,000.**

### ԹԻԻ ԱՍՆՆԱՅՆ ՀԱՅՈՅ.

Օսմանեան տերութեան մէջ, Արեւելեան եւ Հարաւային կողմանք Հայաստանի, Փոքր Ասիա, Ասորիք, Եգիպտոս, Ռուսելի եւ Գանուրեան Խշխանութիւնք . . . . .	2,500,000
Ռուսաստանի մէջ, Միջին եւ Հիւսիսային մասունք Հայաստանի, Վրաստան, Շիրուան եւ Գաղստան, Ռուսաստանի միւս մասերը եւ Լեւնաստան . . . . .	1,200,000
Աւստրիոյ մէջ . . . . .	25,000
Պարսկաստանի մէջ . . . . .	150,000
Հնդկաստանի եւ ասիական Արշիպեղազոսի կղզիներուն մէջ . . . . .	25,000
Աշխարհիս այլեւայլ կողմերը ցրուածները իբր . . . . .	100,000

---

Ընդ ամենայն. . . . **4,000,000**

Տ Ո Ւ Տ Ա Կ

տարբերութեան ժամաց այլևայլ քաղաքաց երկրագնախաճանառութեամբ միջորէին Պետերբուրգի.

Անուանք քաղաքաց.	Քաղաք	Քաղաք	Քաղաք	Քաղաք	Քաղաք	Քաղաք	Քաղաք
<b>Ի ՍԱՆՄԱԿԱՆ ԹՈՒՆՈՒՅՆ.</b>							
Աջօ . . . . .	առ.	44	27	56	25	8	2
Ածառչրիան . . . . .	կա.	42	53	—	58	8	—
Արիանդերլի . . . . .	»	4	40	54	54	8	—
Բագու . . . . .	»	1	18	8	49	56	—
Գերլինդ-Քորս . . . . .	առ.	11	58	56	—	—	—
Երևան . . . . .	կա.	42	56	48	16	8	—
Խազան . . . . .	»	1	15	16	22	8	—
Խարկով . . . . .	»	42	25	44	—	8	—
Ներք . . . . .	»	12	24	44	56	8	—
Մոսկուս . . . . .	»	42	29	4	52	48	—
Ներքնիակ . . . . .	երկ.	5	45	8	—	8	—
Նիժնի-Նովգորոդ . . . . .	կա.	42	56	8	40	48	16
Նովոչերքասով . . . . .	»	42	59	12	8	55	98
Պոլտավա . . . . .	»	42	47	4	9	41	38
Ռիգա . . . . .	առ.	41	55	12	5	25	—
Սարատով . . . . .	կա.	1	5	4	10	55	58
Սիմֆերոպոլ . . . . .	»	42	42	44	—	—	—
Ստաւրոպոլ . . . . .	»	42	46	44	—	—	—
Վարշավա . . . . .	առ.	41	22	52	—	—	—

ՍԱՆՏԻՍԻՄԻՆ. — Առ. ճշանակ արատօտիան, կա. — կաթորան, երկ. — երկրիան.



## ՆԱՄԱԿԱՅ ԾԱԽՔ

### Ն Ե Ր Ք Ի Ն Ն Ա Մ Ա Կ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ք.

Ա) Հասարակ նամակի համար իւրաքանչիւր լոտին 10 կոպէկ:

Բ) Գրամական, այսինքն Թղթադրամով, ոսկի կամ արծաթ փողով, եւ Լեհաստանի ու Ֆինլանդիոյ պահպանողական գանձուց դրամական Թղթերովը յուղարկուած նամակին համար լոտին 10 կոպէկ:

Գ) Գրոշմաւոր չգրուած Թղթով կամ մանր արծաթեղէններով եղած նամակին համար լոտին 10 կոպէկ:

Դ) Ապահովացուցեալ (страховое) նամակի համար լոտին 25 կոպէկ:

Ե) Թանկագին բաներով ծրարին (тюре) համար, եթէ մէկ ֆունթէն պակաս է ծանրութիւնը, իւրաքանչիւր լոտին 10 կոպէկ. իսկ եթէ մէկ ֆունթէն ծանր լինի իւրաքանչիւր ֆունթին դարձեալ 10 կոպէկ:

Զ) Ծրարներով կամ փոքրիկ տակառներով յուղարկուած ոսկի կամ արծաթ դրամներուն համար, ֆունթին ըստ հեռաւորութեան տեղւոյ կառնուի նոյն գինը, ինչ որ հասարակ ծրարներու համար (տես էջ 134):

Է) Ապահովացուցեալ նամակի համար՝ որոյ հետ դրուած է նաեւ Թղթադրամ, մուրհակ (вексел) եւ ուրիշ պարտքի վերաբերեալ Թղթեր դրոշմաւոր Թերթի վերայ գրուած, եւս եւ վկայութիւնը (документ), իւրաքանչիւր լոտին 25 կ.:

Ը) Լեհաստանի Թագաւորութեան Վարշաւի եւ Լիւբլինի կուսակալութիւններն յուղարկուած ծրարներու համար, ֆունթին 20 կոպէկ. իսկ վկայութեանց համար ֆունթին 25 կոպէկ: Պոլցկի, Ռադոմի եւ Ազուստովի կուսակալութիւններն յուղարկուած ծրարներու համար ֆունթին 25 կոպէկ. իսկ վկայութեանց համար ֆունթին 45 կոպէկ:

## Ծ Ր Ա Ր Ն Ե Ր Ո Ւ

### Ե Ի Վ Կ Ա Յ Ո Ւ Թ Ե Ս Ն Յ Գ Բ Ե Ր Ո Ւ Հ Ս Մ Ս Բ

ՀՍՏ ՀՆՈՒՄՈՐՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱՅ ԿԱՌՆՈՒԻ.

1 վերստէն մինչեւ 300, ֆունքին 10 կոպէկ.

իսկ վկայութեան զրբրու համար 15 կոպէկ.

Նոյնպէս 300 վերստէն մինչեւ 800 ֆունքին 15 կոպ. վկ. զր. 25 կոպ.
» 800-էն » 1000 » 20 կոպ. » » 35 կոպ.
» 1000-էն » 1800 » 25 կոպ. » » 45 կոպ.
» 1800-էն » հեռու » 30 կոպ. » » 55 կոպ.

**ՄԱՆՕԹՈՒԹԻՒՆ.** — Երկարուղիով յուղարկուած զրբերը բոլրէ երկզով (содержим) խաչաձև կփարբոսին. իսկ հասարակ ճանապարհով յուղարկուածները՝ հաստ լաքի մեջ կփարբոսին:

Փոխանակ սովորական ծրարներու 10, 15, 20, 25 եւ 30 կոպ. հասարակ գնոյն ֆունքին, զրբերու ծրարներէն կառնուի ֆունքին միայն 3, 5, 7, 9 եւ 11 կոպ. ըստ հեռաւորութեան:

## ՌՈՒՍԱՍՏԱՆԻ

ՔԱՂԱՔՆԵՐՆ ՅՈՒՂԱՐԿՈՒԱԾ ԾՐԱՐՆԵՐՈՒ ԵՒ ԴՐԱՄԻ ՀԱՄԱՐ ԿԱՌՆՈՒԻ.

1.) Մինչեւ 300 րուբլիի արժէքը՝ հարիւրին մէկ, այսինքն րուբլիին 1 կոպէկ.

2.) 300 րուբլիէն մինչեւ 600՝ կառնուի 3 րուբլի.

3.) 600 րուբլիէն մինչեւ 1500՝ կառնուի հարիւրէն կես, այսինքն րուբլիէն կես կոպէկ.

4.) 1500 րուբլիէն մինչեւ 3000՝ կառնուի 7 րուբլի 50 կոպ.

5.) 3000 րուբլիէն վեր եղած գումարին համար՝ իւրաքանչիւր րուբլ. կառնուի քառորդ կոպէկ.

6.) Նոյն հաշուով կառնուի նաեւ սպիտակ զրոշմաւոր բոլբերուն եւ մուրհակներուն համար, զրամի արժողութեան վերածելով.

7.) Ամեն ծրարներու համար, եւս եւ րանկազին րաներով եղածներուն համար միակերպ վճարք հաստատուած է, այսինքն ծրարը յուղարկողին յայտնած արժողութեանը իւրաքանչիւր րուբլիին 1 կոպ.

8.) Յետ յուղարկուած ծրարներու եւ վկայագրոց համար փոշրի ծախք չառնուիր:



## Ռ Ո Ւ Ս Ա Ս Տ Ա Ն Է Ն

ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ ՅՈՒՂԱՐԿՈՒԱԾ ՆԱՄԱԿԱՅ ԵԱԽՔԸ.

### ԵՒՐՈՊԱ.

	<i>Կող.</i>
Պրուսիա, Աւստրիա, Գերմանիա, Հոլանդա, Բրիտանական կղզիք.	20
Դանիա եւ Զուիցերի (1).	26
Բելգիա . . . . .	23
Դաղդիա . . . . .	36
Սպանիա եւ Պորտուգալ՝ կես լոտին . . . . .	29
մեկ լոտին . . . . .	49
Պապին երկիրները, Տոսկանա, Պարմա եւ Մոդենայ, Աւստրիայէն	
<i>մինչև ւասմանագրոյս . . . . .</i>	<i>20</i>
<i>Զուիցերիէն եւ ձեւոյայէն . . . . .</i>	<i>52</i>
<i>Դաղդիայէն . . . . .</i>	<i>55</i>
Սարդինիա, Սիկիլիա եւ Դեապոլիս. <i>Զուիցերիէն . . . . .</i>	<i>36</i>
<i>Դաղդիայէն . . . . .</i>	<i>42</i>
Շուեդ՝ <i>Ֆինլանդիայէն . . . . .</i>	<i>20</i>
<i>Պրուսիայէն . . . . .</i>	<i>33</i>
Նորուեգիա, <i>Ֆինլանդիայէն մինչ ցասմանագրոյս . . . . .</i>	<i>40</i>
<i>Պրուսիայէն . . . . .</i>	<i>38</i>
Յունաստան . . . . .	34
Յոնիական կղզիք . . . . .	30
Մալտա . . . . .	30
Մոլդաւիա . . . . .	29
Վալաքիա . . . . .	32
Եւրոպական Տաճկաստան . . . . .	30

### Ա Ս Ի Ա.

Ասիական Տաճկաստան . . . . .	59
Արաբիա . . . . .	55
Զին եւ ձապոն . . . . .	65
Հնդկաստան . . . . .	65
Ճաւա, Մոլուկեանք, Փիլիպպեանք, Բոունեոյ եւ Սումատրա . . . . .	65
ՄԱՆՍՅՈՒԹԻՒՆ. — Ասիական Տաճկաստանի, սլաւոնքն Բաթում, Տրապիզոն, Մերսին, Չիւսանիա, Փոքր Աղեքսանդրիա, Բէյրութ, Յոսպէ եւ Եգիպտոսի Աղեքսանդրիա քաղաքները 30 կողէկ:	

(1) Ապէլին կատարակները չգրինք.

### ԱՓՐԻԿԷ.

Եգիպտոս . . . . .	55
Ալճեր . . . . .	36
Սենեգամբիոյ մէջ Անգոլիացւոց եւ Պորթուգալացւոց ունեցած երկիրները . . . . .	40
Սենեգամբիոյ մէջ Գաղղիացւոց ունեցած երկիրներն ու Բարսյուսոյ Գլուխը . . . . .	65
Կանարեան կղզիք . . . . .	57
Ափրիկէի միւս կղզիները . . . . .	46

### ԱՄԵՐԻԿԱ.

Կանադա . . . . .	40
Վանկուվեր եւ Բրիտանական Կոլումբիա . . . . .	59
Միացեալ Նահանգք, <i>Բեյցիայէն Անգոլիայէն</i> . . . . .	59
<i>Պաուսիայէն</i> . . . . .	46
Որեգոն եւ Կալիֆոռնիա <i>ամերիկական նաւով</i> . . . . .	26
<i>Անգոլիական նաւով</i> . . . . .	48
Մեխիկոյ, <i>Գաղղիայէն</i> . . . . .	65
Միջին Ամերիկա, ալսինքն Գուատեմալա, Նիկարաուա, Մոսկիտեան ծովեզր, Հոնդուրաս . . . . .	40
Կոստա-Ռիկա, Եուկատան, Սան Սալվադոր . . . . .	56
Նոր Գրանադա . . . . .	56
Վենեցուելա, Գուիանա . . . . .	40
Պերու, Բոլիվիա . . . . .	89
Չիլի, Հաւարակած, Արաւկանիա, Ռիոյ դէ լա Պլատա, Պարագուայ, Ուրուգուայ, Բրազիլ եւ Կուրա կղզի . . . . .	65
Անտիլեան կղզիք . . . . .	40

### ՈՎԿԻՍՆԻՍ. (ԱԻՍՏՐՍԱԼԻՍ).

Հարաւային Նոր Գալլես, Ադելայիդէ, Վան Դեմեն եւ Նոր Զելանդա, <i>Անգոլիայէն՝ անգոլիական նաւով</i> . . . . .	56
<i>Անգոլիայէն՝ մասնաւոր նաւերով</i> . . . . .	34
<i>Գաղղիայէն</i> . . . . .	65
Սենդուիչ կղզիք եւ Վիկտորիայի գաղթականութիւն . . . . .	56





ԱՄՍԱՅՈՅՑ

ԳԻՂԱԿԱՆ

ՄՇԱԿՈՒԹԵԱՆՑ

## ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ



երկրագործութիւնը, այսինքն երկիր բանելը մարդուս կենաց եւ նորա բնատուր ապրուստին գլխաւոր դուռն է. վասն զի Աստուած այնպիսի՝ յատկութիւն տուած է երկրիս, որ զինքը խնամքով մշակողները կերակրէ միշտ :

Երկիրս իւր բարիքը նոցա՝ միայն տալ կզլանայ, որք իւրեանց աշխատանքը իրեն տալ կվախնան :

Մարդս աշխատելու համար ծնած լինելով՝ լաւ պիտի գիտնայ որ ե՞նէ աշխատիլ չուզենայ, վնասակար է մարդկութեան :

Յիրաւի, աշխատանք ասածդ ի սկզբան ծանր կերելի ամենուն, բայց այս ալ մտածելու է թէ աշխատանաց պտուղին ու արդեանցը պէս քաղցր բան կա՞յ աշխարհիս վերայ :

Օգտակար ժողովրդոց մեծ նշանը՝ երկրագործութեան պարապիլն է :

Սպարտացիք երկրագործութեան վերայ մասնաւոր օրէնք դնելով՝ նորա մէկ յօդուածին մէջ այսպէս գրած էին. « Կհրամայենք՝ իբրեւ Թագաւոր, կաղաչենք՝ իբրեւ ծառայ, կսովորեցընենք՝ իբրեւ փիլիսոփայ եւ կսպառնանք՝ իբրեւ հայր, որ ծնողք իւրեանց զաւակացը երկրագործութիւն սովորեցընեն, որպէս զի անկարօտ կեանք անցընեն, ու հրապարակներուն մէջ պարապ ման գալով՝ թշուառ չլինին :

Հոովմայեցիք ալ օրէնք դրած էին, որ դքսի երկիրներէն եկող մէկը չկարողանայ առանց բննութեան նոցա քաղաքին մէջ բնակիլ : Քննութիւնը ո՛չ թէ այս էր որ կը հարցընէին թէ ուսկի՞ց կուգայ, ո՞վ է կամ ի՞նչ ազգէ է, — ոչ. այլ քննիչը (որ այն ժամանակը Կատոն համարակալն էր) օտարականին ձեռքը կըռնէր, կշօշափէր ու կզննէր, թէ որ փափուկ ու դատարկակեաց մարդու ձեռք լինէր, իսկոյն յետ կդարձընէր. իսկ եթէ կարծրացած աշխատաւորի ձեռք, ուրախութեամբ կընդունէր զինքը :

## ՅՈՒՆՈՒԱՐ

**ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆՔ.**—Ժամանակ է երկրագործին կանուխ ցանկու հունտերը, այսինքն *արևատուրք* ասուած ցորենի, վարսակի եւ զարիի սերմացուները գնել ու պատրաստել. սաստիկ ցուրտերու ժամանակ երկրագործական գործիքները մաքրել ու սրել, եւ եզիպտացորենը հատել:

**ՄԵՂՈՒԱՐՈՒԾԱԿԱՆՔ.**—Ամսոյս մէջ մեղունները ուրիշ զեռնոց նման բմբաժ կամ քուն եղած կլիին. ուստի պէտք է փերակներուն մօտ բարձր ձայներ հանելով զարբեցրնել զիրենք, մանաւանդ այս պատճառաւ որ զարբեցրնելն յետոյ հարկ կլինի շատ մեղրով կերակրել զիրենք: Սաստիկ ցուրտերու ժամանակ պէտք է մեղուաց փերակներուն վերայ հսկել որ ոչ ցուրտէ մրսին եւ ոչ առանց կերակուրի մնան: Երկ ցուրտին պատճառաւ հարկ լինի փերակաց տեղը փոխադրել, լաւ ու օգտակար է առաջուան տեղը բողոսել ու զանազան լարերով ծածկել փերակը, քան թէ փոխադրութեան պատճառաւ մեղունները զարբեցրնել:

**ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆՔ.**—Այգեգործին եւս ժամանակ է ամսոյս մէջ հանդիպած խոնաւ ու ամպոտ եղանակներուն՝ ծառերուն չոր ճիւղերն ու բուփերը կտրել, չոր ու անպիտան խոտերը ժողովել ու վառելու գործածել. բրնձի, բալի, ծիրանի, նուշի եւ ուրիշ ծառեր տնկելու տեղերը փորել ու փոսերը պատրաստել: Չիւնի եւ սաստիկ ցուրտի ժամանակ յօտոցը (*բէշաէ, պուտայրճը պուչաղը*) սրել եւ այգիներու համար ձայրերը սրած ցիցեր պատրաստել:

**ԱՆԱՍՆԱԿՐԾԱԿԱՆՔ.**—Կովերն ու եզները օրը երեք անգամ կերակրելու է, այսինքն առաւօտը կանուխ, կեսօրին եւ երեկոյին: Ամսոյս ցուրտերուն պատճառաւ անասունները շատ կուտեն. ուստի լաւ կլինի որ խոտին հետ խառն յարդ (*սաման*) տրուի նոցա: Ծնած կովերուն վերայ մասնաւոր խնամք տանելու է, հորբերը առանձին ու տաք խրճիթի մէջ պահելու է, եւ ջուրը թէ կովին ու թէ հորբին քիչ մը տաքցուցած տալու է: Ոչխարները՝

երկ զետիներ ծածկուած չէ ձիւնով, ցորեկները կարելի է արածելու քողուլ եւ երեկոները աղ տալ. իսկ նորածին գառնուկները առաւօտեան ու երեկոյեան ծծած կարեն գատ՝ պէտք է քիչ քիչ ամենալաւ խոտով կերակրել ու այնպէս սնուցանել: Օրը 4 կամ 5 անգամ կերակրելու է ոչխարները, եւ այն՝ քիչ քանակութեամբ, որպէս զի աւելուցք չքողու: Թէ որ նորածին գառնուկները հին ոչխարներուն մօտ կձմբեն, լաւ կլինի որ խոտը նախ գառնուկներուն եւ յետոյ նոցա կերածին մնացորդը ոչխարներուն դրուի: Առնասարակ պէտք է ամենալաւ խոտը գառնուկներուն տալ, միջակը՝ ոչխարներուն, իսկ վատը կամ ոչխարաց կերածին մնացորդը՝ խոյերուն: Նախելու է որ պաղ եղանակներուն ընդհանրապէս միջակ խոտով կերակրուին անասունները. իսկ տաք օդերուն՝ լաւ ուտելիքով: Տկար ոչխարները տաք զոմի մէջ պահելու է եւ վարակով խառնած լաւ խոտ տալու է: Միայն տաք օրերը պէտք է կեսօրուան միջոցին դուրսը զոմին քովը կերակրել, եւ մի նոյն ժամանակ զոմին դռները բաց ձգելով հովանարել, որ վնասակար օդերը մաքրուին: Օրը երկու անգամ ջրելու է ոչխարները, առաւօտն ու երեկոյին: Թէ որ խոտի քիչութեան պատճառաւ հարկ լինի յարդով միայն կերակրել ոչխարները, զգուշութիւն բանեցրնելու է որ ուտելէն վերջը մէկէն ջուր չտան. վասն զի անկէց նախ փորճարինք եւ ապա ուրիշ հիւանդութիւններ կպատահի: Աջքացաւ, որ աջքին մէջը ժողուած աղբէն (*չկօյէ*) կլաւաջանայ, միշտ աջքերը կակուղ լաքով սրբելով կլաւանայ. իսկ ցաւին պատճառաւ եղած աջքին կարմրուցքը քաշելու համար՝ բարակ մաղէ անցուցած շաքարի փոշի պէտք է ցանել մէջը, որ բոյորովին առողջանայ աջքը:

**ՏՆՏԵՍԱԿԱՆՔ.** — Հաւերը կորեկով եւ սագերը գարիով ու բեփով կերակրելու է, որ քէ զիրանան եւ քէ շատ հաւկիք ածեն. այլ եւ կովի կարեն եղ հանել, եւ ամառուան համար սառոյց պատրաստել պէտք է: Թոզերը զիրցընելու համար առաւօտները աղով խառն բեփ, կեսօրները եգիպտացորեն եւ երեկոները խոտ ուտեցընելու է:



## ՓԵՏՐՈՒՄ

**ԵՐԵՄԱՅԱՆՍԿԱՆՔ.** — Տաք երկիրներու մէջ ժամանակ է գետին հերկելու: Աշնան մէջ հերկած գետիններուն վերայ, երէ ողբ ներկ, պէտք է *արևաուտքա* ցորենը, վարսակն ու գարին ցանել, եւ քիչ ժամանակէն յետոյ երկիրը տափանել որ դուրս մնացած սերմերը հողին մէջ բաղուին:

**ՄԵՂՈՒԱՐՈՒԹԱՎԱՆՔ.** — Ամսոյս մէջ շատ անգամ յունուարէն աւելի ցուրտեր կ'պատահին. ուստի եւ պէտք է յունուարի կանոնները եւս առաւել ճշդութեամբ պահել: Ընդհանրապէս մեղուները սաստիկ ցուրտի կամ ձիւնի ժամանակ փերակէն ելածներուն պէս մէկէն չպաղելու համար՝ հմուտք խորհուրդ կուտան փերակներուն շորս կողմը յարդ (*սամակ*) եւ մոխիր փռելու. այլ եւ իւրեանց բունէն հեռացած ժամանակները՝ փերակին քովի ձիւնը տախտակներով ծածկելու, համարելով՝ որ ո՛չ այնչափ ցուրտը, որչափ ձիւնն իւր սպիտակութեամբը կ'կուրցընէ մեղուաց աչքը, որով շատ անգամ իւրեանց փերակի տեղը կորսընցընելով՝ ցուրտէն կ'պաղին ու բոլորովին կատակին: Երէ ողբ տաք լինի, մեղուները արեգակը ծագելուն պէս իրենք իրենց կէլնէն փերակներէն եւ քիչ մը բոջբտելէն ու զովանալէն յետոյ նորէն իւրեանց տեղը կ'դառնան: Այդ միջոցները, այսինքն մեղուաց ելած ժամանակը, որքան կարելի է շուտով պէտք է փերակը մաքրել, որ աղտոտութենէ յուսաջացող ցաւերէն անվնաս մնան:

**ԱՅԳԵԳՈՐԾԱՎԱՆՔ.** — Երէ յունուարի մէջ սաստիկ ցուրտեր եղած լինին, ամսոյս մէջ պէտք է նախընթացին յիշուած խրատները կատարել. այլ եւ ձիւն, այժի կամ ոչխարի աղբ դիզել, որ վարելիք հողին հետը խառնելով գորաւոր լինին բոյսերը:—Ընդհանրապէս ամսոյս մէջ կտնկէն վարդի, ելակի (*земляника*) ու հաղարջի (*смородина*) ծառերը:

**ԱՆԱՄՆԱԿՐԾԱՎԱՎԱՆՔ.**—Անասնոց զոմը պէտք է տաք պահել. ձիերու եւ եզներու կերակուրն ու աշխատանքը անելցընել, եւ խոզերու տնակի փտած խոտերը դուրս

հանել որ խոճորները (խոզի ձագերը) անվնաս մնան : Կովերը լաւ կերակրելու է, վասն զի ամսոյս մէջ յունուարէն աւելի կլշանան . իսկ ոչխարները ողորկ սառոյցէն (розолежда) ազատ պահելու համար պէտք է զոմերուն մէջ կերակրել . վասն զի այն սառոյցին վերայ դժուարութեամբ քաշելով՝ նոցա ոտքերը կվիբաւորուին : Թէ որ եղեամն (ցրաղը, քոթ) լինի, ոչխարներուն առաւօտը պէտք է խոտ տալ եւ յետոյ դուրս հանել . վասն զի եղեամն վնասակար է ոչխարաց . ուստի եւ մինչեւ չանհետանայ՝ խոհնմութիւն է զոմերէն դուրս չհանելը : Երեկոները խոտ տալէն յառաջ՝ քէ ոչ ամեն օր, զքէ երբեմն պէտք է աղ տալ . իսկ ջրելը առաւօտուն բողջընելու է : Ընդհանրապէս 1000 ոչխարին 40 ֆունք աղ կըտրուի . իսկ զառներուն — կէսը : Ամսոյս մէջ ոչխարներուն վերայ կարծր խոցեր կզոյանան, զոմերուն մէջ քաց աղբերու վերայ նստածներուն, կամ քէ հովուաց զոմերը անմարտիք պահելու անհոգութեանց պատճառաւ : Այն խոցերէն բժշկելու սպեղանիքը (*մէհլէմ*) այս է . առ 12 ֆունք հնուց աղած խոզի իւղ, հալեցընելէն վերջը հետը խառնէ 7 ֆ. կտուանատի իւղ (*кннпое каци*), 10 ֆունք բեւեկնոյ իւղ (*кннпдэрт*) եւ 4 ֆ. բարակ ծեծած ծծումբ (*сэра*) . այս բոլորը խառնէ կրակի վերայ եւ պաղելէն վերջը վերք ունեցող ոչխարաց մորթիներուն վերան քսէ քանի մի օր՝ մինչեւ որ մորթիին տակի կուստերը բոլորովին անհետանան : Թէ որ ոչխարները միայն խոտ կուտեն, պէտք է նայել որ խոտը ամենալաւը լինի եւ խառնուած չլլինի փտտածներու հետ, վասն զի հմուտ անասնապահներու ձեռքով փորձուած է որ ծանրած ոչխարները փտտած խոտ կերած ժամանակները՝ իւրեանց զառնուկները՝ ծնելու օրերէն առաջ կըձգեն :

**ՏՆՏԵՍԱԿԱՆՔ.**—Երէ յունուարին սաստիկ ցուրտեր չպատահին, ամսոյս մէջ պէտք է սառոյց ժողովել, եւ մարտի ցուրտերը մտածելով՝ փաթիլ եւ ածուխի համար հոգ տանել : Ուշադրութիւն անելու է նաեւ աշնան ժամանակէն ձմեռուան համար պատրաստուած սոխի եւ զետախնձորի վերայ, որ սաստիկ ցուրտերէն չպաղին ու չփճանան :

Մ Ա Ր Տ

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆՔ. — Այս ամսուն մէջ է երկրագործի աշխատութեան զլխաւոր ժամանակը. վասն զի քէ տաք եւ քէ ցուրտ երկիրներու մէջ մարտին կսերմնն ցորենը, գարին, վարսակը, վուշը եւ այլն: Ո՛րքան շուտով սերմուին գարնան արտերը, այնքան աւելի յուսայի է նոցա արդիւնաւոր լինելը: Ժամանակ է կաղամբ, բանջար, մանանխի եւ մեկոն ցանելոյ: Ուշադրութիւն դարձնելու է որ սերմանուած արտերուն մէջ անասունք չըմտնեն:

ՄԵՂՈՒԱՐՈՒԾԱԿԱՆՔ. — Մեղուներն ընդհանրապէս ամսոյս մէջ կսկսին ձագեր հանել, ուստի պէտք է փերակին դուռը բաց ձգելով ազատ բողոյզ գիրենք. վասն զի քէ որ եղանակը տաք լինի, իրենք իրենց կելնեն բռջըտելու եւ զբօսելու, իսկ եթէ ցուրտ լինի փերակին՝ մէջ կմնան, որով դուռը դարձեալ հարկ կլինի փակելու: Թէ որ եղանակը տաք լինի, ամսոյս վերջը կարելի է մեղը կտրել:

ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆՔ. — Յունուար ամսոյն մէջ նոր ծառեր տնկելու համար փորուած փոսերը նորէն աչքէ անցնելու է, եւ քէ որ քամիներու կամ անձրեաց հեղեղներու պատճառաւ լցուած լինին՝ մաքրելէն յետոյ պէտք եղած ծառերը տնկելու է: Երէ ոչը տաք լինի, ժամանակ է ծառերը պատուաստ (*աշրամա*) անելու, ծառերուն տակի կարծրացած հողերը փորելու, որ քէ ըստ բաւականին անձրեւի չուր ծծեն եւ քէ արեւու ծառերուն արմատին վերայ ունեցած ազդեցութենէն շուտով պտուղ տան. այլ եւ խաղողի որք կամ խաղողնիք տնկելու եւ արդէն տնկուածներուն տակերը փորելու: Նոյնպէս պարտեզներու մէջ հաւասար զծով ճամբանէր բանալու, ջրանցքները մաքրելու եւ զանազան ծաղկանց հունտեր պատրաստելու: Ամսոյս մէջ կըտնկեն ծիրանի, նուշի, դեղձի, սալորի, բուրի, բալի, կեռասի, խնձորի, տանձի եւ ուրիշ ծառերը:

ԱՆԱՍՆԱՐՈՒԾԱԿԱՆՔ. — Զիերը ամորձատելու (կատելու) համար ամենէն յարմար ամիսը մարտն է: Մատակ ձիւ-

րուն վերայ քէ ծանր աշխատանաց եւ քէ ուտելեաց կողմանէ մասնաւոր խնամք տանելու է. վասն զի նորա ընդհանրապէս ամսոյս մէջ կձենն իրենց քուռակները: Կովերն ու եզները արածելու դրկելու է. իսկ հորբերուն առաւօտները խոտ տալու է: Ամսոյս մէջ ցուլիքը (*պուդա*) կովերուն, խոյերը (*գոլ* կամ *խոլ*) ոչխարներուն եւ նոխազները (*քէքէ*) այծերուն (*քէլի*) քով բողջընելու է. իսկ այն դանաները (արու հորբերը) որ պիտանի չեն լաւ ցեղ լառաջացընելու, ամորձատելու է: Ոչխարներն արածեցընել պէտք է, եւ կանուխ ծնած գառնուկներըն փորհարինքէ ազատ պահելու համար՝ քիչ վարսակով խոտն քեփ տալու է: Յղի կամ ծանրած ոչխարները առհասարակ պէտք է արծեցընել այն տեղերուն մերձակալքը, ուր որ պիտի ծնանին: Հին ոչխարներն ու մեկ տարեկան գառները կարելի է ամսոյս վերջերը բոլոր օրը դաշտին մէջ բաց երկնքի տակ բողջընել, ի հարկէ նայելով որ կեցած տեղերը լեռներու տակ լինի, որ պաղ քամիներէ չվնասին: Բայց քէ որ եղանակը երկարատեւ անձրևներուն պատճառաւ խոնաւ լինի, այն ժամանակը աւելի լաւ է զոմերուն մէջ կամ նորա մերձակայ տեղերն արծեցընել ոչխարները, որ ոչ բուրդերուն քանակութիւնը պակսի եւ ոչ մրսին: Տեղեր կան որ լեռներ չկան. ուստի դաշտերու մէջ զիշերօրիկ հովիւները, իւրեանց ոչխարաց հօտը (*սիւրիւ*) ցուրտ քամիներէն պահպանելու համար անպիտան լարդէ ու խոտերէ երկար ու բարձր պատեր կձեւացընեն: Սոյնպիսի պատեր կշիւնն քիչ մի աւելի բարձրութեամբ նստել այն տեղերը, ուր ձմեռ ժամանակ կերակուր կուտան ոչխարաց: Իւրաքանչիւր հովիւ իւր ոչխարը ուրիշներէն շուտով զտանելու համար պէտք է նշաններ դնէ վերաները: Հազար ոչխարաց նշանին համար 20 ֆունք ձիւք (*սեօրտ*) եւ 3 ֆունք խոզի իւղ կ'հարկաւորի:

ՏԵՏԵՍԱՎԱՆՔ.— Հաւերու եւ սագերու կուտը կանոնաւոր տալով՝ ջանալու է զտափկուան համար պէտք եղած հակիրը ժողովել: Կովի կարէն սեր, եղ ու մածուն հանել եւ կանխածին ոչխարաց կարէն պանիր պատրաստել:

## Ա Պ Ր Ի Լ

ԵՐԿԵԳՈՐԾԱԿԱՆՔ. — Հիւսիսային՝ այսինքն ցուրտ երկիրներու մէջ ընդհանրապէս ամսոյս մէջ կսկսին վարուցանք անելը. իսկ հարաւային՝ այսինքն տաք երկիրներու մէջ ժամանակ է սեխ, ձմերուկ, կորեկ, եգիպտացորեն, լոպի, գետնախնձոր, սսպն, սիսեռն, բողկ, ծներեկ <sup>1</sup>, նեխուր <sup>2</sup>, անանուխ <sup>3</sup>, կապար <sup>4</sup>, կինամոմոն <sup>5</sup>, պատինճան <sup>6</sup>, շահասպրամ <sup>7</sup>, ստեպղին <sup>8</sup>, քրքնջուկ <sup>9</sup>, սոխ, սխտոր, պղպեղ եւ ուրիշ սոցա նման համեմունք եւ բանջարեղէնք՝ ցանել. այլ եւ անցեալ մարտի մէջ վարօակ <sup>10</sup> ու գարի սերմանած տեղերն եղած կունտ կունտ հողերը տակիանով փշրել:

ՄԵՂՈՒԱՐՈՒԾԱԿԱՆՔ. — Մեղուներն ամսոյս մէջ օդոյ բարեխառնութենէն մեկ նոր ոյժ ստանալով՝ մեծ աշխուժով կսկսին նոր ծաղկած ուռիներու, սերկեհիի, ծիրանիի եւ ուրիշ ծառերու վերայ բռջըտիլ եւ մեղրաբերական հիւր ժողովել. եւ անա այս է պատճառը որ ամսոյս մէջ բազմաբիւ ձագեր կհանեն. ուստի եւ մեղուի տէրը մեծ ուշադրութիւն պիտի դարձրնէ որ միշտ փերակները մաքուր լինին: Երէ մեղուաց մերձակայքը գետ կամ լիճ չկայ, պէտք է ամանով ջուր դնել փերակին մօտ: Ապրիլի մէջ քիչ անգամ կպատանի որ ցուրտի պատճառաւ մեղուները ծաղկունք չգտնելով՝ քաղցածութիւն կրեն. իսկ պատահած ժամանակը պէտք է մաքուր մեղրով կերակրել զիրենք, բայց երէ այնպէս պատանի որ մեղր չգտնուի, այն ժամանակը պէտք է շաքարի կտորներ ձգել փերակին մէջ:

ԱՅԿԵԳՈՐԾԱԿԱՆՔ. — Ամսոյս սկիզբները բոլոր այգին պէտք է փորել, եւ մի եւ նոյն ժամանակ խաղողնիքի

<sup>1</sup> Ռու. Спаржа, ՏՃ. գուշ գծնմող: <sup>2</sup> Сельдерей, — քերէվիզ:  
<sup>3</sup> Мята, — նանէ: <sup>4</sup> Каперсы, — քէպէրէ: <sup>5</sup> Корица, — տարչին:  
<sup>6</sup> Дежневка, — փաթ լըճան: <sup>7</sup> Василиекъ — ֆէսիլէն: <sup>8</sup> Морковь, — հալուճ: <sup>9</sup> Щавель, — գուշու գուշաղը: <sup>10</sup> Овёсъ, — եռլաֆ:

անյորդ ճիւղերը կտրել : Երե եղանակը ցուրտ լինի , նոր ծառեր անկելը կարելի է շարունակել : Հայաստանի մեջ ընդհանրապէս ամօսյա մեջ կրտնկեն խաղողնիքին մօտի ցիցերը , որ շատ օգտակար է երբեմն պատահած սաստիկ քամիներէն ճիւղերն անվնաս պահելու կողմանէ :

**ԱՆԱՍՏԱԿԱՐՄԱՆԱԿԱՆՔ.**—Գոմերն ու մտօրները պէտք է մաքրել ու հովոտել : Մատակ ձիերը իրենց քուռակներուն հետ ցորեկները դաշտի մեջ բողջընելու է որ կանաչ խոտ ուտեն . իսկ երեկոները քուռակին մօրը վարսակ տալու է : Ոջխարներն ըստ մեծի մասին ապրիլի մեջ կծնեն իրենց գառնուկները . ուստի պէտք է մաքիները (օջառ, եզ ոջխար) զէր երեկոները՝ քեփով կերակրել , եւ շարաքը մեկ անգամ աղ ուտեցընել : Գառները զօմերուն մերձակայքը պէտք է արածեցընել եւ զգոյշ կենայ որ անձրեւէ ու սաստիկ քամիէ շվնասուին : Այն մաքիները որ իրենց գառնուկներուն սովորած են , անոնցմէ պէտք է առանձին հօտ կազմել 50-էն մինչեւ 100 բուով : Այնպէս մաքի կրգանուի որ բոյորովին իրեն մօտ չբողուր նորածին գառնուկը , այն ժամանակը պէտք է գառնուկին վրան աչիւր ցանել՝ բարակ ձեծած աղով խառն , որպէս զի մաքին լիզելով ընտելանայ գառնուկին : Այն գառնուկները որ կսկսին խոտ ուտելու , կարելի է դաշտ հանել արծեցընելու , ուր երե օրը տաք ու չոր լինի՝ կարելի է նաեւ զիշերները պահել . բայց նայելու է որ կեցած տեղերը հեռու չլինի ջրելու տեղէն : Յօդաբեր զիշերները ոջխարաց հօտը պէտք չէ բողույ դաշտի մեջ , վասն զի գառները կաղայ կսկսին , եւ բերաններուն քովերը խոցեր կելնեն , զոր մեղրախառն խօզի իւղ քսելով կրթշկեն :

**ՏՆՏԵՐԱԿԱՆՔ.**—Շտեմարանները հովոտելու եւ ըստ կարելւոյն մաքուր պահելու է : Կովի կարեն երկու տեսակ իւղ , այսինքն կոզի (կարի իւղ) եւ կարազ (սերի իւղ) հանելու է : Բնակարանի պատահանները բանայ , սենեակները հովոտել եւ պատերուն աւրուած տեղերը ձեփել տալ պէտք է . բակին մեջ եւս համեմունք եւ զանազան բանջարեղէնք ցանել տալու է :

## Մ Ա Յ Ի Ս

**ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆՔ.** — Այս ամենագեղեցիկ ամսոյն մեջ բոլոր բնութիւնը մէկ նոր կենդանութիւն ստանալով՝ երկրագործին պարտքն է իւր բոլոր վարուցանքին վերայ ամենայն ուշադրութեամբ հսկել, որ մեջը անասունք չբնակնեն ու չկոխկրտանն: Տաք երկիրներու մէջ երկրագործի աշխատանքն է մայիսին խոտ հնձելն ու չորցրելը: այլ եւ կանեփ եւ շողգամ (*բռնա շէղէմ*) ցանելը:

**ՄԵՂՈՒԱՐՈՒԾԱԿԱՆՔ.** — Ամսոյս մէջ պտղատու ծառերն ու ծաղիկները ծաղկելով՝ մեղուները ապրիլէն առեւի արդիւնաւոր կլինին եւ գրեթէ ամեն օր հիւք ժողովելու կելնեն: ուստի մեղուարուծին եւս պարտքն է հսկել որ իւր մեղուաց պարքը ուրիշ մեղուներու հետ չխառնուին կամ մի եւ նոյն ծաղկանց վերայ հիւք ժողովելու ժամանակ պատերազմի չելնեն միմեանց դէմ, որ շատ անգամ մեծ կտորած կանեն:

**ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆՔ.** — Թէ որ ապրիլին փորուած չէ այգին, ամսոյս սկիզբները անպատճառ պէտք է փորել, եւ միանգամայն խողողնիքին հիւղերը քովի ցիցերուն վերայ կապել: Մրգեղինաց ամեն մէկ ծառին վերայ նայելու է, եւ ուր որ բրբուրի (*բրբրրր*) բոժոժ գտնուի, խսկոյն ոչընչացրնելու է: այլ եւ նորատունկ ծառերը, թէ որ անձրեւ չլինի, շարքը երկու անգամ ջրելու է:

**ԱՆԱՄՆԱԳԱՐՄԱՆԱԿԱՆՔ.** — Մտակ ձիերն իրենց քուռակներուն հետ դաշտերու մէջ արածեցրնելը պէտք է շարունակել: Էջ ոչխարները այս ամիս եւս գառնուկներ կձնանին: ուստի պէտք է խնամքով կերակրել զիրենք: Տաք երկիրներու մէջ 15-էն վերջը կսկսեն բուրդ խզելը: բայց ուր որ ծով կամ գետ կայ, խզելէն յառաջ լաւ ու օգտակար կլինի թէ որ 8 կամ 10 օր ամենայն երեկոյ լուացուին, որով թէ ոչխարները կգովանան եւ թէ նոցա բուրդը կմաքրուի: Պէտք է նաեւ այլեւայլ գունով բուրդ ունեցող ոչխարները գատել եւ միակերպները մէկտեղ ժողու-

լին վերջը խզել, որ յետոյ դժուարութիւն չլինի մեկմեկեզատելու: Նայելու է որ ամսոյս մէջ տարբութեան պատճառաւ շատցած աիգերը (ոչխարաց ոչիլ) փոքրիկ մախասներով պոկուին ու փճացուին, եւ կամ թէ որ խիստ շատ են արջասպային քարի (кунородамъ каменъ) փոշին ցանելով՝ անհետացուին: Ոչխարները խզելէն վերջը՝ խկոյն ուշադրութիւն դարձրնելու է որ անոնցմէ քոս ունեցողները բժշկուին այն սպեղանիքով որ փետրուար ամսուն մէջը դրած ենք. թէ եւ ոմանք քոսի համար այս ճարը կանեն, այսինքն 100 քոսոտ ոչխարի համար կառնուն 5 Փունք ջանցուցած կիր. այս կիրին վերայ ջուր լեցընելով քայքայելէն վերջը՝ հետը կխառնեն 2 Փունք կալաքար (шоталъ), 2 Փունք եղջերուի իւղ եւ 1 Փունք բուսկնոյ իւղ (свинопаръ): Այս խառնուրդին հետ կառելցընեն 15 վեղրա կամ 450 Փունք ջուր հասարակ ծխախոտով խառնած. այլ եւ մեկ Փունքի չափ հաւի ծերտ: Այս նիւթերով շինուած ճարին մէջ 10-էն մինչեւ 18 օր լուանալէն յետոյ ոչխարաց վերքը բոլորովին կանհետանան: Գոմերն ու մուրները շուտ շուտ մաքրել եւ միշտ աղբը դուրս հանել պէտք է. իսկ ձիերուն կանաչի հետ խառնած չոր խոտ տալու է, եւ երեկոյ առաւօտ ծովու կամ զետի մէջ լուանալու է: Խոզերու երամակը ցորեկ ժամանակները դաշտերու մէջ՝ ճանիճներու մօտ բողբոջնելու է. իսկ զոմէշները լիճերու մերձակայքն արածելցընել պէտք է, որ տաքէն նեղացած ժամանակ՝ լճին մէջը պառկելով զովանան:

ՏԻՏԵՍԱԿԱՆՔ. — Բակին մէջ ցանած կանաչեղէնները երբեմն երբեմն երեկոյեան ժամանակ ջրելու է: Ամսոյս մէջ եկած անձրեւի ժամանակ՝ տան պիտոյիցը համեմատ տակաւ պէտք է դնել դուրսը որ անձրեւով լցուի, եւ անցեալ տարւոյ զինիի լիւր (մուրտը) խառնելով՝ արեւի տակ բողբոջնելու է մինչեւ որ կանոնաւոր քացախ լինի, եւ այնուհետեւ իսկոյն ներս առնելու է որ արեգական ազդեցութենէն սաստիկ կտրուկութեան հասնելով՝ քացախը մեկէն չբուրանայ: Ժամանակ է վարդի քաղցրաւնին (կիւշէկի) եփելու:



## Ե Ո Ւ Ն Ի Ս

**ԵՐԿԱԳՈՐԾԱԿԱՆՔ.** — Ցուրտ երկիրներուն մէջ այս ամիս կսկսին խոտ հնձելը: Պէտք է արտերուն քովի ջրային տեղերը առուակներ բանալով չորցընել ու անպէտք բուփերը կտրել եւ վառելու գործածել: Հնձած խոտերը չորցընելէն վերջը ժողովել ու մեկտեղ դիզել, եւ մեկմեկէ կապած երեք ձող (*սըրըր*) ձգել վերան, որ քամիի ժամանակ խոտը չցրուի: Ժամանակ է գետնախնձորի (*картофель*) արմատին վերայ հողակոյտ անելու:

**ՄԵՂՈՒԱՐՈՒԾԱԿԱՆՔ.** — Մեղուաց պարբը ամսոյս մէջ կրագ՝մանան. ուստի եւ մեղուարանը պէտք է մոմագոծ եւր փերակներ ունենայ պատրաստած, որ որսալ կարողանայ եւ կամաց կամաց փերակին մէջ ժողովէ զիրենք. բայց այս եւս զիտնալու է որ թէ տկար եւ թէ ուժով մեղուաց պարբին համար՝ նոր փերակներուն մէջ անպատճառ խորիխս (մոմէն չբաժնած մեղր) դնելու է առջևէն, որպէս զի ուժովները աւելի շուտով ընտելանան, իսկ տկարները սկզբնական պաշար ունենան:

**ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆՔ.** — Այս ամիս զգուշութեամբ պէտք է շրջել այգիներուն մէջ, որ նորարոյս հիւղերն ու բողբոջները (*ֆիտան*) չբախին: Առուակներու մէջ բուսած խոտերը պէտք է մաքրել եւ ջրանցքները շտկել. այլ եւ նոր տնկած խաղողիքին տակի խոտերը պոկել: Ամսոյս մէջ կհասնի ծիրանն ու կեռասը, եւ խաղողն իւր քովի ցիցերուն վերայ կսկսի փաքրուիլ:

**ԱՆԱՍՆԱՂԱՄՄԱՆԱԿԱՆՔ.** — Անասնոց զոմերն ու մսուրները պէտք է բաց ու մաքուր պահել որ ճանճերէ չհնդուին: Մարտի վերջերն ու ապրիլի սկիզբները ճնած ձիերը քիչ քիչ գործի դնելու է, եւ ոչխարները զով ժամանակները միայն արածեցընելու է. գիշերներն եւս իրենց զառնուկներուն հետ մեկտեղ անմշակ արտերու վերայ բողբոջելու է: Հովուին կամ անասնաբուծին պարտքն է գիշերները լաւ արածեցընել, եւ արեգակը դեռ չծագած

զրել : երէ ցուրտի պատճառաւ ոչխարաց բուրդը խզուած չեն մայիսին , ամսոյս մէջ անպատճառ պէտք է խզել , որ քէ տաքէ չնեղուին եւ քէ անորժակով արածեն : Խզելն վերջը մէկ տարեկան խոյները , որ փոքրիկ հօտերու մէջ խառնուած էին եւ զիշերները շատ անգամ զոմերու մէջ կանցնէին , պէտք է հին մաքիներու հօտին մէջ ցրուել . իսկ մէկ տարեկան ոչխարները քէ որ բազմաքիւ չեն , նոյնպէս կարելի է առոյգ (*կէնն*) խոյերու հօտին մէջ խառնել : Բայց քէ որ մէկ տարեկան խոյները այնչափ շատ են որ նոցա քանակութիւնը 1000-էն կանցնի , այն ժամանակը պէտք է զանոնք մաքիներուն հօտէն առանձին արձնելընել : Մեք արդէն ասինք որ ամսոյս մէջ ոչխարները ամենայն օր առաւօտները կանուխ պէտք է ջրել . դորա պատճառն այն է որ արեգակը ծագելէն յետոյ խոտերը հետզհետէ կցամաքին ու բառամին . ուստի ջրելն վերջը անմիջապէս արձնելու է , որպէս զի օրը տաքնալէն յետոյ բարձրադիր ու զովարար տեղոյ մի վերայ հանգիստ առնուն ոչխարները : Շատ տեղ ամսոյս մէջ ձմեռուան ցանքի համար երկիր հերկող եզներն ու զոմշները ցորեկուան սաստիկ տաքերուն հանգիստ կրողուն եւ զիշերուան զովերուն կաշխատցընեն : Ժամանակ է եզներու մէջէն ձերերն ու անկորդները վաճառելու յուղարկել :

ՏԵՏԵՍԱՎԱՆՔ. — Յունիս ամսէն սկսելու է քիչ քիչ ձմեռուան փայտին տարեկան պատրաստութիւնը տեսնել , եւ տանիքներուն վնասուած ու անուած տեղերը շտկել : Բալ (*վիշէն*) ու ծիրան (*զէրտայի*) ասուած մրգեղէններէն քէ քաղրաւենիք (*կիւլէնկի* , *բարլը*) եփել եւ քէ նոցա , որպէս նաեւ կեռասի չորցուցածը ժողովել : Զմեռուան տոյժի տերեւը ամսոյս մէջ աղելու է . եւ հաղարջի (*սօրօքսա*) քաղցրաւենին եփելու է : Կովի , որպէս նաեւ ոչխարի ու այծի կարէն իւղ եւ պանիր պատրաստելու է . բայց որովհետեւ ձմեռուան համար զանոնք աղելը տակաին կանուխ է , ստեպ ստեպ վաճառանոց յուղարկելու է , որ ի նոցանէ գոյացած արդիւնքէն անասնոց համար ձմեռուան պաշար պատրաստուի :

## Յ Ո Ւ Լ Ի Ս

**ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆՔ.** — Խօտի հունձը կվերջանայ եւ նրն-  
ծուածները կղիզուի: Կանուխ ցանուած ցորենը, վար-  
սակն ու գարին պէտք է հնձել, հնձուածները կալին վերայ  
ձեծելով՝ յարդէն զատել, եւ շտեմարանը լեցընելէն յետոյ՝  
երբեմն երբեմն խառնելով քամիի տայ որ ոջիլէ անվնաս  
մնան: Ամսոյս մէջ կնասնի վուշը, որ ոջ միայն շուտով  
ժողովել ջանալու է, այլ եւ ջրոյ մէջ բրջել: Կաղամբի  
կորին վերայ եղած տերեւները պէտք է պոկել, որ գլուխ-  
ները աճին ու գօրանան:

**ՄԵՂՈՒԱՐՈՐԾԱԿԱՆՔ.** — Յուլիսի մէջ մեղուաց պարքը  
կակղի (*առս*) եւ ուրիշ ծառերու ծաղիկներէն բաւական  
հիւք ժողովելով՝ մեղրի եւ մոմի քանակութիւնը կշառցը-  
նեն: Յօրեկուան ժամանակ փերակները պէտք է բանալ  
ու մեղրը մոմէն զատել. բայց պէտք է փերակը առանց  
մեղրի բողուլ, որ մեղուները չխըրտին եւ օտար մեղուաց  
նետ խառնուելով՝ ուրիշ տեղ չերբան:

**ԱՅԳՆԳՈՐԾԱԿԱՆՔ.** — Խաղողնիքին ծուռած հիւղերը պէտք  
է շտկել ու ցիցի վերայ կապել եւ երէ տկար հիւղեր կան՝  
կտրել, որ ուժովները առանել եւս պտղաբեր լինին:  
Թրեկներուն կտորած հիւղերը արմատէն յօտել (*պուռտա-  
մաց*), եւ մրգեղինաց ծառերու արմատին շրջակայքը բու-  
սած խոտերը պոկել ու հողը բաճով փորելով փշրել: Նուշի,  
խնձորի, սալորի, դեղձի եւ ուրիշ ծառերը դիտելու է որ  
բրբուր չլինի վերաները. բայց երէ բրբուրները այնչափ  
շատ լինին որ ձեռքով ժողովելն անկարելի լինի, այն  
ժամանակը պէտք է կովու կարն ու ձէրի մրուրը մեկ-  
մեկու նետ խառնած եփել, եւ պաղեցընելէն վերջը՝ այն  
խառնուրդը աւելով բրբուրներուն վերայ սրսկել. — քանի  
մի վայրկեանէն բոլորը կշարդուին:

**ԱՆԱՄՆԱԴԱՐՄԱՆԱԿԱՆՔ.** — Ոչխարարոյժները ամսոյս  
տաքին վերայ մասնաւոր ուշադրութիւն դարձընելով՝  
պիտի պատուիրեն խաշնարածներուն որ առատութեամբ

կանուխ արծեցրենն ոչխարները, որպէս զի մինչեւ սաստիկ տաքի ժամանակ բուսական կշտացած լինին : Ամսոյս վերջերը հնձուած արտերուն վերայ կարելի է արածեցրնել ոչխարները, բայց ոչ առաւօտն ու կեսօրին, այլ միայն իրիկուան ժամանակէն մինչեւ մրրննալը : Այս եւս զիտնայու է որ այնուհետեւ իսկոյն պէտք չէ զիրենք ջրել, այլ անմշակ դաշտերու վերայ զիշերելէն յետոյ՝ առաւօտը կանուխ ջուր տայ : Ամսոյս սաստիկ տաքերէն թէ որ խաշնաման չզատաւի, գայլերուն յարձակմունքն ալ մեծամեծ վնասներ կանեն հօտին ու ոչխարաց շատերը կվիրաւորեն : Այնպիսի վերքերուն վերայ քնդհանրապէս պարզ ջրով բրբջած կտաւ դնելու է, եւ վերքը օրը չորս հինգ անգամ լուանալու է : Բայց երէ վերքէն զատ՝ գայլը ոչխարին ոսկոռն ալ կտորած լինի, ոսկոռն ոսկոռին վերայ յարմարցընելէն յետոյ՝ քացախով կամ օղիով եւ կամ կապարաջրով (сѣкуноевѣ вода) բրբջած լար փարսելու է, եւ յետոյ լարին վերայ եւս ծառի կեղեւ դնելով՝ ամուր կապելու է : Թէ որ վերքին տեղը չուռի, լարը փոխելէն յետոյ դարձեալ ամուր կապել պէտք է . իսկ երէ ուռի, կապոցին թիւր ուռեցքին համեմատ բուլացընելու է : Ասոնք անելէն վերջը թէ որ վերքը չլուանայ ու բորբոքման (воспаление) փոխուի, առաջին հնարքն է օրը երեք անգամ վերքը օճառով (սպան) խառնած տաք ջրով լուանալ . իսկ երկրորդ հնարքը օղիի եւ բուսկնոյ իւղին խառնուրդովը լուանալ : Զիրը ուր որ ծով կամ գետ կայ, օրը երկու կամ զէր առաւօտը մի անգամ լողացընելու է, որ թէ զով լինին եւ թէ քիչ շատ ազատ մնան ճանճերուն տուած նեղութենէն : Ուշադրութիւն դարձընելու է նաեւ կովի, այծի, ոչխարի եւ գառին վերայ որ տիգ (կեղեկ) ասուած կենդանեաց ոչիլէն իրքան կարելի է մաքուր պահուիլ :

ՏԵՏԵՍԱԿԱՆՔ. — Ամսոյս մէջ պէտք է ծիրու եւ ուրիշ անասնոց համար ձմեռուան խտրը գնել . կովերու եւ ոչխարաց կարեն պանիր ժողովել ու աղել, եւ զամէշի կամ կովի կարեն ձմեռուան չորարանը պատրաստել . այլ եւ զանազան սալորաց չորցուցածները համբարել :

## Օ Գ Ո Ս Տ Ո Ս

**ԵՐԿԵԿՈՐԾԱՆՎԱՆՔ.** — Այն տեղերը՝ ուր ցորենը ամսոյս մէջ կ'ենձեն, պիտի ջանան որ որքան կարելի է շուտով ձեռնեն ևս շտեմարան տանեն, որ անձրեւէ չվնասուի: Տար կողմերը ձմեռուան ցանքը վերջացընել. և ճակնդեղը (свежая), սիսեօր (сорох), խաշխաշը (хакъ), սունկը (մանրար) և վարունգի հունար ժողովել պէտք է: Նայելու է որ սիսի ու ձմերուկի ցանքին մէջ անասունք չմտնեն և հասունները քիչ քիչ պոկելով՝ վաճառանոց յուղարկուի:

**ՄԵՂՈՒՅՈՐԾԱՆՎԱՆՔ.** — Ամսոյս մէջ մասնաւոր խնամք տանելու է մեղուաց վերայ, որ ուրիշ կենդանիներէ, մանաւանդ մուկերէ չենդուին ու չկոտորուին: Օգոստոսի սկիզբները քեւ քաւական հիւր կգտնեն մեղունները, բայց հետզհետէ ծաղիկները քիչնալով մեղուններն ևս քոչըրակէ կղաղրին: Այնուհետև մեղուարոյժն իւր բոլոր ուշադրութիւնը պիտի դարձընէ ճանճերու համար ձմեռուան պատրաստութիւն տեսնելու և զիրենք պաշտպանելու վայրի ճանճերէն, որք ընդհանրապէս ամսոյս մէջ բազմութեամբ տկար յու որք մեղուններու վերայ կղիմեն և փերակին մէջ կոտորած անելէն վերջը նոցա պաշարն ևս կուտն: Երէ մեղուաց մերձակայ դաշտերուն մէջ սեւ ցորենի (рречуха) արտ լինի, այս միջոցները ամենալաւ հնարքն է նոցա փերակները արտին մօտը փոխադրել, որով դարձեալ կարելի կլինի նոր մեղր ժողովել:

**ԱՅԿԵԿՈՐԾԱՆՎԱՆՔ.** — Երէ ամառը ցրտային ու անձրեւոտ լինի, խաղողնիքին աւելորդ տերեւները պոկելու է որ ողկոյզները ժամանակին եփեն: Դիտելու է որ ամսոյս մէջ զետնին պառկած ճիւղեր չլինին, և երէ զտնուին, իսկոյն վերցընելով՝ քովի ցիցերուն վերան կապելու է որ չհոտին: Ժամանակ է խնձորը, ղեղձն ու տանձը ժողովելու:

**ԱՆԱՍՏԱԿՈՐԾԱՆՎԱՆՔ.** — Կովերը, ոչխարները, ձիւքրուակներն ու խոզերը լուսը բացուելուն պէս ջրելու և արձակելու է որ մերձակայ դաշտերուն, անտառներուն

ու լերանց խորշերուն մէջ երբան արածնն եւ տաքն ազատ մնան : Աշխատելու է որ ոչխարները առատօտը կանուխ եւ երեկոյեան ժամանակները միայն արծեցընուին : Տորեկուան տաքերուն ոչխարները քշելու է որ մէկմէկու քով ժողոտուելով մեծ գունդ չկազմեն , ուսկից ջերմ եւ ուրիշ նիւանդութիւններ կլառաջանան : 2000-էն մինչեւ 2500 քուով ոչխարաց հօտին համար 4 կամ 5 հովիւներ կհարկաւորին , յորոց մէկը գլխաւոր կհամարուի , միւսը խոնակեր , այսինքն կերակուր եփող կլինի եւ մնացածները ոչխարներուն պահպանութիւն կանեն : Խոնակերը միշտ կգտնուի երկանիւ ու գլխափակ սայլին քովը , որուն երկու եզինք յծուելով տեղէ տեղ կփոխադրեն հովուաց ունեցածն ու նոցա եւ շանց կերակրելինաց պաշարը : — Գիշերներն արածեցընելու ժամանակ ընդհանրապէս ոչխարաց հօտին երկու կողմէն երկու հովիւք կերբան , նախելով որ հօտին մէջ գայլ չմտնէ . գլխաւոր հովիւը ամենէն վերջը հօտին ետեւէն կերբայ , որ իրեն յարմար լինի առջեւէն ու քովերէն քալող հովիւներուն պէտք եղած հրամաններն անելու : Հովուաց կանչ ու ճիչը , խօսակցութիւնն ու եղեգնափողով (застыта) երգելը ամենադիւրին միջոցն է գայլերը հեռու փակցընել ոչխարաց հօտէն : Ամսոյս վերջը բոլոր գառները ծիծ ուտելէ դադրեցուցած պիտի լինին եւ իւրեանց մայրերէն գատ պիտի արածեն : Մտտակ ձիերէն իւրեանց քուռակները հեռացընելու կամ կարէ կտրելու ամենայարմար միջոցն այս ամիսն է : Կրուող կովերուն երեկոները քիչ քիչ աղաջրով խառնած բնփ տալու է որ առատօտները շատ կար տան :

**ՏՆՏԵՍԱՎԱՆՔ.** — Գինիին տակառները այժմէն պէտք է լուանալ , չորցընել ու պատրաստել , որ մինչեւ այգեկուրք հին ըմպելեաց հօտը ըստ կարելւոյն մաքրուի : Ձմեռուան հաւկիթները օգոստոսէն սկսելու է ժողովել եւ սագերուն փետուրները պոկել : Նոյնպէս եւ խնձորի , տանձի ու դեղձի չորցուցածը համրարել : Թէ որ մինչեւ ցայժմ ձմեռուան խտան ու վառելու փայտը պատրաստուած չէ , ամսոյս մէջ պատրաստելու է որ քանկ չնստի :

## ՍԵՊՏԵՄԲԵՐ

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆՔ. — Ամսոյս մէջ պէտք է ժողովել ճակրդեղը, զետնախնձորն ու կաղամբը. երկրորդ անգամ հնձած խտոր լաւ չորցընելէն յետոյ դիզել. ձմեռուան ցորենի, զարիի, վարսակի եւ հաճարի ցանքն անել. եւ հասուն սելսն ու ձմերուկը ստեպ ստեպ վաճառանոց յուղարկել :

ՄԵՂՈՒԱՐՈՒԾԱԿԱՆՔ. — Փերակներուն վերայ ուշադրութիւն դարձընելու է որ ոչ առանցք ունենան եւ ոչ այնպիսի տեղ դրուած լինին որ սաստիկ ցուրտերու ժամանակ տեղափոխութեան հարկաւորութիւն ունենան : Մայր ճանճին ու ամառուան ծնած մեղուններուն ուժին ու առողջութեանը համեմատ՝ ձմեռուան մեղրի պատրաստութիւնը տեսնելու է, եւ վայրենի մեղուաց յարձակմունքէն ու նոցա մեղրագողութենէն զզոյշ կենալու է :

ԱՅԳԵԿՈՐԾԱԿԱՆՔ. — Այգեկուրն ընդհանրապէս ամսոյս մէջ կանեն. ուստի պէտք է զգուշանայ որ անձրեւը չսկսած խաղողները քաղուի, տեսակները զանազանուի եւ զինհանութեան համար ժողովածները՝ նոյն օրուան մէջ կոխել տրուի : Ժամանակ է ձմեռուան տանձը, խնձորը, սերկեւիչն ու զղեարը (զկեռ, մուշմուշա) ժողովելու, եւս եւ ընկոյզը (*ձեվիզ*) երկայն ձողիով քափելու :

ԱՆԱՍՏԱԳԱՐՄԱՆԱԿԱՆՔ. — Սեպտեմբերի մէջ պէտք է զատել ձմեռը պահելու անասունները եւ մնացածը վաճառել : Պահուելիներուն համար հաշիւ ընելու եւ նոցա ձմեռուան ուսելիքը պատրաստելու է : Ընդհանրապէս հաշիւ կանեն որ մեկ կովի համար ամիսը 6 պուդ խոտ, 5 պուդ մանրած յարզ եւ 2½ պուդ քեփ կհարկաւորի. իսկ մեկ ոչխարի համար օրը երեք ֆունը կամ մեկ *հօխա* խոտ : Ոչխարները, հորբերն ու այծերը հնձուած արտերու մէջ արածեցընելու է ցորեկները եւ երկկոները աղ տալու է : Եւ որովհետեւ ձմեռուան ցուրտերը առ հասարակ ամսոյս մէջ կսկսին, պէտք է պատուիրել հովիւներուն որ կէսօրուան միջոցէն անելի հանգիստ չբողուն ոչխարները,

այլ բոլոր օրը արածեցընեն, մանաւանդ որ մութ ու առանց լուսնի գիշերները սովորաբար ոչխարները չեն քայլեր ու կղաղղրին ուտելիք: Դիտելու է որ առաւօտները ցողոտ խոտերու վերայ չարածեցընեն ոչխարները. վասն զի ցողը շատ վնասակար է, մանաւանդ գառներուն, որոց զանազան հիւանդութիւններ կ'պատճառէ, ինչպէս փորի մրսեցողութիւն, փորճարինք, կարմրագոյն խոցեր եւ այլն: — Երէ արածելու դաշտին հեռաւորութեանը պատճառաւ հարկ չիին ոչխարները շատ կանուխ հանել զոմբէն, ադոր համար պէտք է անդադար քշել ոչխարները, եւ այնչափ ժամանակ հանգիստ չտայ արածելու, մինչեւ որ աքեռու տարութենէն չցամաքին ցողերը: Երէ այնպէս պատահի որ սեպտեմբերի մէջ անձրեւներ զան եւ կանաչ խոտ բուսնի, պէտք չէ մէկէն այն նորարողոջ խոտերուն վերայ արածեցընել ոչխարները, վասն զի չոր խոտի սովրած ոչխարները երբ մէկէն կանաչ խոտ ուտեն, այլեւայլ հիւանդութիւններ կ'ունենան, մանաւանդ բորբոքումն փալծաղի (*տալախ*, *сезезека*). ուտի եւ սեպտեմբերի մէջ կանաչ խոտ բուսած ժամանակը պէտք չէ մէկէն անոնց վերայ տանել ոչխարաց հօտը, այլ աստիճան աստիճան վարժեցընելու է զիրենք այն խոտին, իսկզբան բարձրաղիք տեղերու կամ սարերու վերայ արածեցընելով, ուր ընդհանրապէս չոր կլինին խոտերը: Աւելորդ ոչխարները մորթելու աւելի յարմար միջոցը այս ամիսն է. ուտի եւ պէտք է այն ոչխարները միայն ընտրել մորթելու, որք պակասութիւն ունին, այսինքն կամ ծերացած են, կամ բուրդերնին հաստ է, կամ առանց բուրդի տեղեր ու սեւրիժներ ունին խրեանց կաշիին վերան, եւ այլն:

**ՏՆՏԵՍՐԱՆՔ.** — Զմեռուան համար պէտք եղած խոտը, վարսակը, զարին, յարզն ու կորեկը պատրաստելու է: Վառելիքն ու այրելիքը հոգալու է: Վարունգ, կաղամբ, սմբուկ (*поязоръ фրէնկ փարրճանը*) եւ զղեարն աղելու. այլ եւ գետնախնձոր, սոխ ու սխտոր համբարելու է: Անտոյս մէջ պէտք է ձմերուկի կեղտի քաղցրաւենին եփել. եւս եւ ձմեռուան զորժածելիք խոր պատրաստել:



## ՀՈԿՏԵՄԲԵՐ

**ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆՔ.** — Թեև ձմեռուան վարուցանքը ամսոյ մէջ կվերջանայ, բայց քանի որ գետինը պահած չէ՛ երկրագործութիւնը կարելի է շարունակել: Տօրեն ձեռնելը, յարդէն գտնելն ու համբարելն եւս հոկտեմբերի մէջ պէտք է վերջացրնել: Հաստ կեղեւ ունեցող ձմերուկներն ու կաղամբը, եւս եւ սմբուկը, մեկունը, սոխն ու սխտորը ժողովել ու վաճառանոց յուղարկելու է:

**ՄԵՂՈՒԱՐՈՒԾԱԿԱՆՔ.** — Ճեղք ունեցող փերակները մոմով պատելու եւ ամբացրնելու է, եւ մեռած ճանճերը փերակներէն դուրս հանելէն յետոյ ձմեռուան պաշարը, այսինքն ամեն մեկ փերակի մէջ 20-էն մինչեւ 30 ֆունք մեղր դնելու է, որ մինչեւ ապրիլի 15-ը կրտսէ, երէ փերակին միջի ճանճերուն քիւր 100-էն աւելի չէ: Ամսոյս մէջ հազիւ երբեք փերակէն դուրս կելնեն մեղունները, եւ աւելի օգտակար կլինէր քէ որ բոյրոովին չելնէին. վասն զի օրերը կարճ լինելով՝ ոչ հիւր ժողովել կկարողանան եւ ոչ փերակները կորսնցրնելու վտանգէն ազատիլ:

**ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆՔ.** — Երէ ամառը անձրեւային լինի եւ խաղողը ժամանակին չեմպելուն համար այգեկուրը հոկտեմբերին մնայ, պէտք է զգուշանալ որ խաղողները պարզ օդոյ եւ ցոյները չորացած ժամանակը քաղուին:

**ԱՆԱՄՆԱԳՈՐԾԱԿԱՆՔ.** — Կենդանեաց ձմեռուան պաշարը քէ որ պատրաստ չէ, ամսոյս մէջ անպատճառ պէտք է պատրաստել, եւ ծառերէն բաժիւմ տերեւները ժողովել ու շոր խոտերուն հետ պանել: Կրօւող կովերուն երեկոները տաք ջրով քիչ մի աղ խառնած քեմ տալու է: Թէ որ եղանակը ցօւրտ լինի ոչխարները զիշերները պէտք չէ բողոյս դաշտերու վերայ, այլ գոմերու մէջ պանելու է որ բաց օդին պատճառաւ խրեանց վերայի բուրդը չաղտոտուի. իսկ երէ տաք լինի եղանակը, լաւ է որ գոմերուն մերձակայ տեղերը զիշերեն. վասն զի կանաչ խոտ ուտող ոչխարները զիշերները շատ կմիզեն, ուստի եւ

զոմերուն բացուրին պատճառելով՝ մեծ վնաս կուտան իրենց : Ոչխարաց հօտը զոմերուն մերձակայքը գիշերած ժամանակը պէտք է հովիւներն ու շուները հօտին չորս կողմը կենայով՝ պահպանութիւն անեն ոչխարաց . բայց թէ որ նոցա կեցած դաշտին մէջ բազմաթիւ գայլեր լինին, այն ժամանակը իրրեւ նախազգուշութիւն ամենաճարկաւոր է դաշտին չորցած խոտերն ու փայտերը ժողվելով կրակ վառել, այլ եւ կարգաւ հովիւներուն պահպանութիւն անել տայ : Հովտեմբերի վերջերը պէտք է նայել որ զոմերուն կտուրները աղէկ ծածկուած լինին, պատերը ծնւած եւ ընդհանրապէս հիւսիսային քամիներու կողմէն ամենայն կերպով ամրցուած : Շատ անգամ նոյեմբերի սկիզբները սաստիկ ցուրտեր լինելով՝ անասնադարմանները կհարկադրուին չոր խոտով կերակրել գիրենք . այս պատճառաւ անա պէտք է թէ նոցա տարեկան խոտը պատրաստել եւ թէ մտուրներն ու միջնորմները (асти и перегородки) կարգի բերել ու շտկել : Այս ամսուան մէջ շատ անգամ սաստիկ ու յանկարծակեան ցուրտեր պատահելով՝ ոչխարաց շատերը իսկզբան հազալ կսկսին եւ ապա հարբուխ կլինին : Հագացողներուն ճարը նոյեմբերի մէջ կտեսնեմք . իսկ հարբուխ եղողներուն պէտք է զոմին տաք կողմը կապել եւ դիմացը տաք ջուր դնել որ ջրոյ շոգին ոչխարը ներս շնչելով՝ հարբուխը բերեանայ ու հետզհետ բուրդովին անցնի : Չգուշանալու է որ հարբուխը չանցած՝ զոմէն դուրս չհանուի ոչխարը . վասն զի թէ որ նորէն ցուրտ առնու ու մրսի, առաջինէն շատ աւելի կտկարանայ, ուժէ կընկնի ու դժուարութեամբ կը բժշկուի :

ՏԵՏԵՍԱԿԱՆԵՑ.— Հաներուն կուտը պէտք է շատցընել որ հաւկիր ածեն : Սօխն ու գետնախնձորը գետնի խոնառութենէն ու սաստիկ ցուրտերէն անվնաս պահելու համար դրուած տեղերուն վարն ու վերը չոր խոտ փռելու է : Ամսոյս մէջ պէտք է բնակարաններուն պատուհանները զոցել եւ ճեղքերը շաղախով (закраска) ծնկել կամ բուրդ փակցընել . այլ եւ վառարաններուն ծխնելոյզները (труба) մաքրել, որ հրդեն չպատահի :

## ՆՈՅՆՄԲԵՐ

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆՔ. — Տանուած արտերուն վերայ ուշադրութիւն պէտք է դարձնել ու թէ որ ջրոտ կամ լճացեայ տեղեր կան՝ նոցա մօտերն առուներ բանալով ցամաքեցնել, որ ջրոց շատութենէն հունտերը չապականուին : Պարապ միջոցները զարնան ցանելիք հունտերը մաքրել ու հովանարել, եւ դաշտերէն ու անտառներէն ձմեռուան այրելիքը բերել :

ՄԵՂՈՒԱՐՏՈՒԾԱԿԱՆՔ. — Այս ամսէն կսկսի մեղուաց ձմեռնային հանգստութիւնը . վասն զի նոյնմբերին կղաղրին աշխատանքի, եւ փերակներուն մէջ այնպիսի հանդարտութեամբ կկենան, որ ոչ ազգոց կլսուի եւ ոչ բզգոց : Միայն տաք օրերը նոր կենդանութիւն մի ստանալով՝ մէկ կամ կես ժամ փերակին դիմացը արեւու մէջ կբռնջրոյն եւ նորէն տեղերնին կղառնան : Փորձով դիտուած է որ նոյնմբերի մէջ դուրսը բռնջրտող մեղուները՝ կատարեայ հանգստութեան մէջ կմնան մինչեւ ապրիլի սկիզբները, իսկ այն ճանճերը որ նոյնմբերէն կսկսին հանգրստանայ եւ մարտ ամսոյն մէջ կգարբին, ըստ մեծի մասին կբմեռնին :

ԱՅԿԵԿՈՐԾԱԿԱՆՔ. — Գինիները այգիէն կամ հնձանէն տուն տանելէն ու տեղաւորցնելէն յետոյ, պէտք է խաղողնիքին ցիցերը հանել եւ նոցա վերայի հողերը մաքրելէն վերջը՝ մէկ առանձին տեղ դիզել որ չփրատին եւ հետեւեայ տարւոյն համար զօրժաղբութիւն : Նորարոյս եւ նորատունկ ծառերը հաստ ձողերու վերայ կապելու է, որ ձմեռուան քամիներէն չկտորուին :

ԱՆԱՄՆԱԳՈՐԾԱԿԱՆՔ. — Անասնոց զոմերն ու մտորները պէտք է մաքուր պահել, ոչխարներուն չօրախառն կերակուր տալ, եւ երէ օղը ներէ՝ օրը քանի մի ժամ դուրս հանել որ մաքուր օդ առնուն : Շատ տեղ ամսոյս մէջ կրողցնեն խոյերը մաքիներուն՝ այսինքն արու ոչխարները եզերուն քով, որով մինչեւ ապրիլի 23-ը գառ-

նուկներ կը ծնեն : Որովհետեւ ամսոյս մէջ ձմեռը արդէն սկսած կլինի իւր ցուրտ ու անձրեւոտ օրերովը , այս պատճառաւ հազ ունեցող ոչխարները պէտք է զոմերուն մէջ պահել եւ օրը կէս ղզալ բանբրուենիի (брызга) ջրով խառնած զարեջուր (паша) խմցրնել , մինչեւ որ հազը բուրովին անցնի : Ոչխարաց հազը ընդհանրապէս երկու բանէ կլտառաջանայ . մէկը ամառուան ժամանակ նոցա քալած ճանապարհի բաստիկ փոշիներէն , եւ միւսը՝ ձմեռ ժամանակ փոշիոտ խոտով գիրննք կերակրելէն : Այս երկու տեսակ հազերէն ոչխարներն ազատ պահելու համար , ամառուան փոշիներու ժամանակ պէտք է պատուիրել հովուաց որ սայլորդաց ճանապարհներէն չքալցրնեն իւրեանց ոչխարաց հօտը , այլ մարգագետիններու վերայէն անցնին . իսկ ձմեռուան ժամանակ զգուշացրնել հովիւները որ փոշիոտ խոտերը քանի մի անգամ երեքժանիով հովհարելէն վերջը տան ոչխարներուն : Անասնադարմաններէն շատերը խորհուրդ կուտան որ հազ ունեցող անասնոց ամեն մէկուն օրը մէկ սեղանի ղզալ մեղրախառն զարեջուր տրուի , այնչափ ժամանակ՝ մինչեւ բուրովին հազն անցնի : Ամսոյս մէջ ընդհանրապէս զիշերները մուր լինելով՝ դաշտի մէջ անցնող ոչխարաց հօտը՝ դուռար կլինի գայլերէն պահպանելը . ուստի եւ լաւ է զիշերներն արածեցրնելէն դաղրիլ , մանաւանդ որ ցորեկները տաք չլինելով՝ բուր օրն արածած կլինին ոչխարները : Բայց քէ որ լուսնալին զիշերներ պատահի եւ դաշտի մէջ մնան ոչխարները , հովիւներուն պատուիրելու է որ ցօղոտ առաւօտները ոչխարները չարածեցրնեն մինչեւ արեւու ծագիլը : Ամորձատ (կռած) խոզերը մորրել եւ ապխտել պէտք է . իսկ խոճորները (խոզի ձագերը) եքէ հարկաւորութիւն չկայ պահելու՝ ողջ ողջ վաճառել :

ՏՆՏԵՍԱԿԱՆԷ. — Ձմեռուան համար պատրաստուած բուր փայտը սղոցել , կոտորել տալ ու բնակարանէն դուրս տեղ մը շարել տալու է որ անկից հրդեն չպատահի : Շտեմարաններն ու ներքնատները պարզ ու բարեխառն օդոյ ժամանակ բաց ձգել ու հովտել պէտք է :

## ԳԵՆՏԵՄԲԵՐ

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆՔ. — Ամսոյս մէջ երկրագործը դաշտերուն մէջ գործ չունենալով՝ իրեն յարմար աշխատանքն է ամառուան հնձած խոտը վաճառել, մերձակայ անտառներէն փայտ կտրել ու վաճառելու հանել, եւ պարապ միջոցները իւր աշխատանաց քաղցր արդիւնքը հանգստութեամբ եւ ախորժակով վայելել :

ՄԵՂՈՒԱՐՈՒԾԱԿԱՆՔ. — Մեղունները ղեկտեմբերին կատարեալ հանգստեան մէջ կլինին . ուստի պէտք չէ փերակներուն քով աղաղակ վերցընել ու կանչելով խօսել : ձանձերը մկներուն ձեռքէն ազատելու համար՝ փերակին դիմացը ականատ (*գափանձա*) լարելու է, որ մեղունները չմեռցուցած՝ իրենք սատակին :

ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆՔ. — Այգեգործը ղեկտեմբերին այգիներուն մէջ մասնաւոր գործ չունենալով՝ ժամանակին յարմար աշխատանաց նիւր պիտի գտնէ իրեն համար, այսինքն պիտի նայէ որ չվաճառուած զինիներուն տակառաց տեղը չափազանց խոնար (բաց) չլինի, նոյնպէս ցուրտերէն պահպանուած լինին տակառները որ չպաղին զինիները : Թէ որ լաւ զին տուող լինի, աւելի յարմար միջոցն է զինիները ամսոյս մէջ վաճառելու :

ԱՆԱՄԵԱՐԿՐՄԱՆԱԿԱՆՔ. — Անասնոց վերայ մասնաւոր խնամք տանել պէտք է ամսոյս մէջ, եւ զոմերուն, մըտուրներուն ու հանոցներուն դռները փակ պահելու է որ չըմբօին : Ոչխարներուն կեցած տեղը պէտք է ջուր դնել, եւ երէ ցուրտը սաստիկ է՝ ջուրը փոքր ինչ տաքցընել : Թէ որ ամսոյս մէջ եղանակի տաքութեան պատճառաւ ոչխարաց հօտը հարկաւոր համարուի դաշտ հանելու, հովիւներուն պատուիրելու է որ զոմերու մերձակայքէն շատ չհեռանան . բայց երէ այնպէս պատանի որ յանկարծ անձրեւ գալով՝ ոչխարները բրջուիւն, իսկոյն պէտք է զոմերը բերել որ ցուրտն ու քացուրիւնը չպաղեցընէ զիրենք : Շատ ձիւն եկած ժամանակը՝ ոչխարները ամենեւին

պէտք չէ գոմերէն հանել, այլ չոր խոտով կերակրելու է զիրենք. բայց որովհետեւ ամառը ծնած գառները դեռ սովորած չեն լինիր չոր խոտ ուտելու եւ դժուարութիւն կը աշեն, պէտք է խոտին վերայ աղով խառնած ջուր սրսկել, որ ուտելիքը համով լինի եւ ակործակով կերակրուին նաեւ գառները: Բայց քե որ ձիւնը քիչ եկած լինի եւ պաղ քամիներ չփչեն, հին ոչխարները կարելի է արածելու հանել, իսկ գառները զոմի մէջ պահել: Բայց առհասարակ ղեկտեմբեր ամիսը ցրտային լինելով՝ անոր գէշ եղանակներուն պէտք չէ հարկադրել հովիւները որ ոչխարներն արածելու հանեն. բաւական է որ զիշերները ոչխարաց մօտ կենան նոքա, վասն զի ոչխարները ոչ միայն զայլերու եւ աւազակաց չարձակմունքէն կվախնան, այլ եւ զիշերուան մէջ պատահած սր եւ իցէ ամենափոքր շշնջմունքէն, կատուի ձայնէն ու քայլածքէն եւ այլն, որով երկիւղներէն այնպէս մէկմէկու վերայ կընկնին որ փոքրիկ ու տկար ոչխարաց մահ կպատճառեն: — Ամսոյս խոզարուտը, այսինքն խոզի կերակուրը վարսակ, զարի եւ եզիպտացորենն է. որով մէկ խոզը լաւ զիրցընելու համար՝ երկու ամիսը բաւական է. իսկ միջակ զիրութիւն ունենալուն համար՝ մէկ ամիսն ալ կոզտէ: Նայելու է որ խոզնոցը տաք լինի, եւ տաք եղանակներուն հովանարուի:

ՏՆՏԵՍԱԿԱՆՔ. — Քէ որ սաստիկ ցուրտին պատճառաւ գետերն ու լիճերը պաղած լինին, ամառուան սառոյցը պէտք է ժողովել: Հաւերու եւ սագերու բնակարանը պէտք է տաք պահել: Սագերու ամենալաւ կերակուրը կնամարուի չճեծած ցորեն, վարսակ, զարի եւ սիսեռ: Իւրաքանչիւր սագը լաւ զիրցընելու համար բաւական է 1 չկտվերիկ վարսակը կամ 3 զարիկց զարին եւ կամ  $\frac{1}{2}$  չկտվերիկ սիսեռը: Նայելու է որ կուտը քիչ քիչ տրուի, որպէս զի աւելորդ չմնայ գետնին վերայ եւ չըփճանայ: Զուրը սորքան կարելի է շատ պէտք է տալ եւ մինչեւ մօրբելը սագնոցէն դուրս չբողուլ: Երէ գետը կամ լիճը բոլորովին պաղած չլինի, շատ օգտակար է սագերը լողացընելէն վերջը մօրբել:

## ՌՈՒՍՍՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՇՈՂԵՆԱՒՈՒՅ ԵՒ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ

### ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ի ՊԵՏԵՐԲՈՒՐԳ Նեվսկիյ ճանկիքին վերայ, տուն Ռոստովցովի.

### ԳԼԽԱՒՈՐ ԳՐԱՆՈՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՅՕԿԵՍՍԱ, Մաքսատան գառիվայրին վերայ, ընկերութեան տան մեջ.

### ԳՈՐԾԱԿԱԼՔ ԵՒ ԹՂԹԱԿԻՅՔ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ.

Օղեսաս	{ Պալ. Լ. Դեմեն.	Ջուդա . . . . .	Բարատով, իշխ.
Նիկոլայեվ	. . . . . Ա. Գանիչևսկիյ.	Դամրեժ . . . . .	Մ. Պիվովարով.
Կառավարիչ Տր-	} Ա. Շեմցով.	Կ.-Պօլիս . . . . .	} Կոմս Է. Շուկյ- գեր, գլխաւոր գործակալ ա- րևելեան զօին.
նեպեր գետին վերայ.		Գարդաննիյ . . . . .	
Խերսոն . . . . .	Պ. Եարոչենկօ.	Զմիւռնիա . . . . .	Է. Վաչչենկօ.
Կախովկա . . . . .	} Վ. Լեաշենկօ.	Բիոս . . . . .	Պ. Ամիրա.
Բերիսլա . . . . .		Մ. Կոխանովսկիյ	Հոդոս . . . . .
Փոքր Գիրլա . . . . .	Փ. Վրիտկին.	Մերսին . . . . .	Փ. Աղեքսանդր.
Նիկոլայ . . . . .	Մ. Ֆորտունատօ.	Փ. Աղեքսանդր . . . . .	Դ. Գարիվօ.
Եւպատորիա . . . . .	Վ. Գանիչով.	Լատաքիա . . . . .	Ե. Մօրկոս.
Սեւաստոպոլ . . . . .	Ի. Մախնովսկիյ.	Տրիպոլի . . . . .	Ա. Կացեվիչա.
Եայրա . . . . .	Պասկեիչ.	Բեյրութ . . . . .	Գ. Տրիկօ.
Սուդազ . . . . .	Յ. Կեխով.	Ակրա եւ Կայֆա.	Ա. Ավինրինօ.
Քեդոզիա . . . . .	Ա. Ճիտկով.	Եաֆա . . . . .	Ա. Սարարուտի.
Կերբ . . . . .	Պ. Ֆորտունատօ.	Պօրտ-Մայիլ . . . . .	Յ. Տեվէնե.
Բերդեանսկ . . . . .	Կ. Յիպկին.	Սոււէզ . . . . .	Բրօնն.
Մարիուպոլ . . . . .	Դ. Տրիպոլիտով.	Աղեքսանդրիա . . . . .	Ն. Պաշկով.
Եյսկ . . . . .	Ա. Գուլակ.	Կայիր . . . . .	} Է. Լավիզոն, զըլ- խաւոր գործա- կալ եզխարտար.
Թալլան . . . . .	Դ. Կուզմին.	Մալտա . . . . .	
Ռոստով Տօն զե- տի վերայ.	Վ. Նօզդրին.	Տրիեստ . . . . .	Ի. Վուչետիչ.
Նովորոսիյսկ . . . . .	Ե. Կուրօ.	Սեասինա . . . . .	Գ. Բարանովսկիյ.
Սոխումկալէ . . . . .	Ս. Լազարեվիչ.	Նեապոլ . . . . .	Կ. Պարբինի.
Փոքի . . . . .	Պ. Ջուղիչի.	Մարսէլ . . . . .	Յ. Նիզգուրիցեր.
Բարում . . . . .	Ա. Մաշինե.	Ճիբրայտար . . . . .	Մոզկէյ եւ ընկ.
Տրասպոլոն . . . . .	Ն. Կակաջէ.	Լիսսաբոն . . . . .	Ա. Լակսման.
Սամսոն . . . . .	Կիպրիտա.	Լոնդոն . . . . .	} Յ. Սավիչ. Ճ. Բուսսէլ.
Կերասունդ . . . . .	Հաճի Օմեր.	Կարդիփ . . . . .	
Ինբրոյի . . . . .	Իգլեմովիչ.	Փարիզ . . . . .	Պավի.
Թուլլա . . . . .	Պ. Միտրովիչ.	Ռօտերդամ . . . . .	} Կիւլայեր, Վան- Գամ եւ Սմէյեր.
Գալաց . . . . .	Եղջարք Սախիէլ.		
Վեննա . . . . .	Կուսկեվիչ.		
Սուրամ . . . . .	Գրիվենակ.		
Կուտայիս . . . . .	Մ. Էկսելերտ.		
Թիֆլիզ . . . . .			

## ԸՆԹԱՅՔԻ ՇՈՒԿԵՆԱԻՈՒՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ.

### ԽԵՐՄՈՆԻ ԳԻՆՃ.

Մայիսէն մինչեւ հոկտեմբեր՝ ամենայն օր, բաց ի շաբաթ օրերէն. իսկ մնացեալ ամսոց մեջ՝ շաբաթը երեք անգամ <sup>(1)</sup>.

ԿՆԼՆԵ.

ԿՀԱՍՆԻ.

Օղեսսայէն Կիր. Բշ. Գշ. Գշ. Եշ. Խերսոն Կիր. Բշ. Գշ. Գշ. Եշ. եւ եւ Ուր. օրերը 8 ժ. առաւօտը. Ուր. օրերը 5 ժ. երեկոյին. <sup>(2)</sup>

### Ի Գ Ա Ր Չ Ի Ն.

Խերսոնէն Կիր. Բշ. Գշ. Գշ. Եշ. Օղեսսա Կիր. Գշ. Գշ. եւ Եշ. եւ Ուր. 8 ժամուան առաւօտը.

